

9(47.925)

Q-35

1936



g(c43)  
D-35

*unlabeled* 45.82

05 OCT 2011

9(47.925)

7-35

Վ. ՊԱՐՍԱՄՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ԺԱՆԴԱՐՄԱԿԱՆ  
Գ Ո Ր Ծ Ը  
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ

ՉԵԿՈՒՑՎԱԾ Ե ՀՍԽՀ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԵԿՑԻԱՅՈՒՄ  
1936 Թ. ՄԱՐՏԻ 26—27-ԻՆ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԵԼԲՈՆՅԱՆ ՖՈՆԴԻ  
ՅԵՐԵՎԱՆ ԳԻՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ 1936

6552

899

8756

7548  
~~2594~~



ներից և առաջին ժանդարմական գործի մասին անել համարձակ ու ավելի համապատասխան յեղբակացություններ: Այդ բոլորից հետո, այլևս կասկածի չենթակա չեր պատմությունից դուրս մնացած հետաքրքրական այդ գործը պատմության մեջ մտցնելու անհրաժեշտությունը, նրա պատմական և քաղաքական արժեքը: Բացի այս, ընթերցողը և սուսունասիրողն այս աշխատության մեջ առատ նյութ կգտնեն նաև Ալեքսանդրապոլի (այժմյան Լենինականի) պատմության վերաբերյալ:

Առաջին ժանդարմական գործը ծնունդ է ցարիզմի ազգային—գաղութային քաղաքական ուժերի: Հենց այդ նկատառումով էլ, ընթերցողի գործը դյուրացնելու, այդ քաղաքականության մասին ամբողջական պատկերացում տալու համար, մենք անհրաժեշտ համարեցինք հակիրճ բնութագրել ցարիզմի ազգային—գաղութային քաղաքականությունն Անդրկովկասում և Հայաստանում՝ իբրև ներածություն, նոր ապա անցնել բուն նյութին:

Վ. ՊԱՐՍՍՍՅԱՆ

1936 թ. փետրվար,  
Յերեվան.

P. S. Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Արսեն Կրիսյանի կնոջը՝ տիկ. Մարիամ Կրիսյանին, Պետրոս Հայկազունու կնոջը՝ տիկ. Մաքրունի Հայկազունուն և բոլոր այն ընկերներին, վորոնք իրենց ձեռքի տակ յեղած նյութերով և իրենց հիշողություններով սիրալիր կերպով ոժանդակեցին մեզ այս գործում:

ՀԵՂԻՆԱԿ

## ՅԱՐԻԶՄԻ ԱԶԳԱՅԻՆ-ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)

Յարական Ռուսաստանը, վորը ավեց միջազգային ժանդարմի ամենաբնորոշ տիպը, ինչպես հայտնի յե, ինքնին ազգային մի միասնություն չեր: Տարբեր ժամանակներում բռնի կերպով նա իր ցանցի մեջ եր առել բազմաթիվ մանր ու մեծ ժողովուրդներ՝ տարբեր իրենց ծագումով, տնտեսական—քաղաքական դարդացման մակարդակով, իրենց կուլտուրայով և համառոտն, յերկար տարիներ շարունակ բարբարոսաբար շահագործում, կլանում եր նրանց աշխատանքի արդյունքը՝ զրկելով ազատ, ինքնուրույն կյանքի բոլոր հնարավորությունները:

Հայաստանի աշխատավորությունը ևս, մոտ հարյուր տարի շարունակ, անքում եր ցարական բարոյաբեկի ազգային—գաղութային լծի տակ: Մոտ հարյուր տարի նա ճաշակել եր ցարական բյուրոկրատիայի ու վոստիկանության հալածանքները, մինչև մերօրը քամել նրա ամբողջ գաղությունը:

Ծանր է յեղել հայ աշխատավոր ժողովրդի պատմական գոյավիճակը: Դարեր շարունակ նա յենթարկվել է մերթայս, մերթ այն տիրոջների անզուլի հալածանքներին, կողոպուտին ու կոտորածին:

«Գանվելով յերկու աշխարհներին, յերկրագնդի յերկու մայր ցամաքներին— Յեվրոպայի ու Ասիայի սահմանագծի վրա, մի ժամանակ լինելով հին Արևելքի հորը յերկրներին

մեկը, Հայաստանը յեղել և անվերջ ճակատամարտերի ու արշավանքների թատերաբեմ: Մեկ նվաճողներին փոխաբերում էյին մյուսները: Մահաբեր մրրիկի նման անցնում էյին յերկրի վրայով հսները, պարսիկները, հռոմայեցիները, արաբները, բյուզանդացիները, սելջուկները, մոնղոլները, ոսմանները: Ժողովուրդը հաղիվ եր կարողանում ուշքի գալ մեկ ավերիչ փոթորիկից, յերբ վրա յեր հասնում նորը: Յեվ նորից ավերվում էյին գյուղերն ու քաղաքները, կործանվում եր կուրտուբան, կոտորվում էյին հայ աշխատավորները\*:

Այսպես եր անհա, յերկար տարիներ շարունակ, բազմաչարչար հայ ժողովրդի պատմական բախտը արևելյան դեպոստների ու մյուս նվաճողների լծի տակ:

Յարական Ռուսաստանը, հյուսիսի «ամենազոր արծիվը», վորի լայն թևերի տակ իրենց համար ազատ ու ապահով կյանք էյին ակնկալում հայ կարճամիտ գիվանագետներն ու նրանց հեռակից քարշ յեկող տանջված ժողովրդի վորոշ բեկորները, չթեթևացրեց հայ աշխատավորության ծանր դրությունը: Այս անգամ ել նրանց բոլոր հույսերն ու ակնկալությունները զարնվեցին պատմական դառն իրադարձություններին և ջարդ ու փշուր յեղան:

Հայ ժողովրդի նոր տիրոջները՝ ուսական բռնակալ ցարերը՝ վոչ միայն չկատարեցին իրենց խոստումները հայ «քրիստոնյա» ժողովրդին ազատություն տալու մասին, այլև վերջնիս բաժին հանեցին նոր ու ավելի վատթարագույն ձևի շահագործումն ու ճնշումը: Պատմության ամբողջ փորձով ապացուցված ե, վոր բռնի նվաճողները չեն ազատագրում և չեն ել կարող ազատագրել նվաճված ժողովուրդներին: Յարական Ռուսաստանի՝ Անդրկովկասի նվաճումը նմանապես Անդրկովկասի ժողովուրդներին ազատագրելու նպատակը չուներ: Յեթե այդ անողը լիներ, թերևս իր յերկրում կաներ, վորտեղ հարյուր հազարավոր ճնշվածներ ևս ազատություն

\* „Прада“—№ 327, նոյեմբերի 28, 1935 թ. («Նորհրդային Հայաստանի 15 տարին»—առաջնորդից):

էյին տեսչում ու ազատագրության սպասում: Յարական ինքնակալությունը բռնի միացնելով Անդրկովկասը, հպատակեցնելով Անդրկովկասի ըմբոստ ժողովուրդներին, ձգտում եր գաղութայնացնել այդ յերկրներն ու ժողովուրդը:

Յարեղմի ազգային-գաղութային այդորինակ քաղաքականությունը հետագայում պարզորոշ արտահայտվեց նրա միախառնելից մեկի՝ Լորանով—Ռասսովսկու—«Հայաստանը մեզ հարկավոր ե առանց հայերի»—ցինիկ մի արտահայտության մեջ: Յարեղմի այդորինակ գաղութաբար, ուսիֆիկացման քաղաքականությանը յենթակա էյին նաև մեր հարևան մյուս ժողովուրդները: Յեվ այդ և պատճառը, վոր շուրջ մի դար հայ ժողովուրդը, Անդրկովկասի մյուս ժողովուրդներին հետ, մերթ գաղանի, մերթ ակնհայտ ծառանում եր ցարիզմի ուսիֆիկացման, հայահալած քաղաքականության դեմ, հանուն ազատության, հանուն սեփական հայրենիքի:

Այն որվանից, յերբ Անդրկովկասը մացվեց ուսական ինքնակալության ցանցի մեջ, այդ որվանից ել Անդրկովկասի ժողովուրդներին, նույն թվում և հայ ժողովրդի բախտը անխզելիորեն կապվեց ուս մեծ ժողովրդի բախտի, նրա ազատագրական պայքարի հետ: Իզուր չե, վոր գիտական սոցիալիզմի հիմնադիրները, իր ժամանակին, հայ ժողովրդի ազատագրությունը կապում էյին ցարիզմի տապալման հետ. «Ի մ անհատական անկեղծ կարծիքն այն ե,—գըրում ե Ենգելսը «Կոմունիստական մանիֆեստի» հայերեն թարգմանության առթիվ Հովսեփ Աթարեկյանին,—վոր Հայաստանի ազատությունը տաճիկներ և ուսաների ձեռքից՝ կարող ե տեղի ունենալ միմիայն ուսական ցարիզմի տապալման ուրը»: Այսպիսով, ցարական ինքնակալության դեմ ուղղված պայքարի ամեն մի փորձն անգամ, լիներ դա Հայաստանում թե այլուր, ոժանդակում եր յեվրոպական ռեակցիայի՝ ցարիզմի թուլացմանը, կատարում եր անպայմանորեն պրոգրեսիվ, հեղափոխական դեր:

Հետաքրքիր եվրոպացիա յն ունեցել անախարական պայ-  
քաբն Անդրկովկասում: Նա իր բնույթով, իր ձևերով ու մե-  
թոդներով սերտորեն կապված է յեղել ցարիզմի ազգային—  
գաղութային քաղաքականութեան եվրոպացի հետ, համա-  
պատասխանել է նրա տարբեր ետապների հիմնական պա-  
հանջներին: Անկարելի էլինի լուսաբանել այդ պայքարի ե-  
վրոպիան, առանց վորոշելու ցարիզմի գաղութային քաղա-  
քականութեան ետապները, նրանց առանձնահատուկ դժերը:  
Ուստի համառոտակի կանգ առնենք այդ ետապների բնու-  
թագրման վրա:

Յարական Ռուսաստանը 19-րդ դարի 30-ական թվական-  
ներին հիմնականում ավարտում է Անդրկովկասի բռնի քա-  
ղաքական նվաճումը: Ռուսական զորաբանակների գրավում-  
ները պարսկական ու թուրքական ֆրոնտներում Պետերբուր-  
գի ղեկավար շրջաններին մի պահ հիշեցնում էլին Ալեք-  
սանդր Մակեդոնացու արշավանքները, և Նիկոլայ I-ը վոզե-  
վորված գրում էր Պասկևիչին. . . «Այդպիսով վերջացավ մի  
փառավոր գործ, ձեր առաջ կանգնած է մի ուրիշը, իմ աչ-  
քում նույնքան փառավոր, իսկ մեր անմիջական շահերի տե-  
սակետից ավելի կարևոր՝ լեռնական ժողովուրդներին ընդ-  
միշտ խաղաղացնելը կամ անհնազանդներին վոչնչացնելը»\*):

Նիկոլայ I-ի այս թեթաղբանքի իմաստը մեզ ավելի պարզ  
կդառնա, յեթե նկատի ունենանք, վոր ցարիզմի՝ Անդրկով-  
կասը նվաճելու ամեն մի ձեռնարկումը հանդիպում էր տե-  
ղական ժողովուրդների դժգոհութեան, զիմադրութեան, իսկ  
վորոշ տեղերում՝ բացահայտ ապստամբական յեղույթներին,  
այդպիսով, նվաճված յերկրում նոր տիրողների դեմ արտա-  
քին վտանգին ավելանում էր և ներքին վտանգը: Հասկանա-  
լի յե, թե ինչու Նիկոլայ I-ին և ռուսական ինքնակալութեա-  
նը, մանավանդ թավրիզի գրավումից հետո (1827 թ. 13  
հոկտեմբեր), ավելի շուտ պետք է զբաղեցնեք գրավված յեր-

\* М. Н. Покровский—„Дипломатия и войны царской Рос-  
сии в XIX столетии“, Москва, 1923 г., стр. 195.

կրների ապահովումն ու ամրացումը, քան ղեպի Փոքր Ասիայի  
խորքերն առաջ խաղալը: Թյուրքամենչայի և Ազրիանուպոլի  
պայմանագրերը միայն ֆիկսացիայի էլին յենթարկում նոր  
տերիտորիաների քաղաքական նվաճման փաստը: Իրավական  
այդ վիճակը պետք է կյանքում ևս ապահովվեր ու հարատե  
գարծվեր: Հենց դրա համար էլ ռուս կառավարութեանը ա-  
ճապարում է Անդրկովկասում մտցնել տնտեսական և ֆորմ-  
ներին նախորդող վարչական և ֆորմները:

Ռուսական կայսրութեան սոսկալի իրականութեանը,  
այն կայսրութեան, վորը, ինչպես իրավացիորեն նշում է Են-  
վելսը իր «Հեղափոխութեանը և հակահեղափոխութեանը Գեր-  
մանիայում» աշխատութեան մեջ, վերջին 150 տարիների ըն-  
թացքում իր սկսած ամեն մի պատերազմի հետևանքով վոչ  
միայն հող չէր կորցրել, այլև միշտ նորերն էր գրավել, Ան-  
դրկովկասի նվաճված յերկրամասերում, իբրև նվաճող, կանգ  
չէր առնում առհասարակ նվաճողներին հատուկ ամեն կարգի  
սանձարձակութեաններին, բռնութեան ու հալածանքների առ-  
ջև: Իրավացի յեր Գրիբոյեգովը, յերը Պասկևիչին ուղղած իր  
գրութեանների մեջ, հայկական մարզի բնակիչներին ընդհա-  
նուր դժգոհութեան, ղեպի Պարսկաստան տեղի ունեցող մաս-  
սայական փախուստի հիմնական մեղքը բարդում էր ռուս  
ազմինխտրացիայի վրա. «Մենք ի զուր ենք այդ բոլորը վե-  
բադրում պարսկական ներշնչումներին, վորոնք այստեղ վըճ-  
ուսկանապես նշանակութեան չունեն: Միակ պատճառը—դա  
մեր անկարգ կառավարութեանն և, այսինքն նույնը, ինչ  
վոր Վրաստանումն է»\*:

Ոտարեկրկրյա ճանապարհորդներն ավելի ծանր ու ճնշող  
հիշողութեաններ են թողել նոր տիրողների, ցարական պաշտո-  
նյանների կատարած հալածանքների ու կեղեքումների մասին:

Գերմանացի ճանապարհորդ ՄՈՐԻՑ ՎԱԳՆԵՐԸ, վորը  
անցյալ դարի 40-ական թվականներին շրջել է Հայաստանը,  
պատմում է՝ ինչպես ճանապարհին Սևանի շրջանի գյուղա-  
յինները դառնորեն հայտնում էլին թե.—

\* Акты К. А. К., т. VII, стр. 246.

«Ռուս հարկահանը մեզ վրա այնչափ բեռ կգնե, վոր մենք ամենաբերբի տարիները անխոնջ աշխատանքից և սակավապետ կյանք վարելուց հետո անգամ, այդ բարձր տուրքերը վճարելու կարողութիւն չունեննք»<sup>\*</sup>:

Վաղներն ականատես ե լինում ցարական ինկվիզիցիայի այսպիսի զարհուրելի մի դեպքի.

«18 տարեկան յերիտասարդ թաթարը առանց այլևայլութիւն ծեծ ուտելու տեղն յեկավ ու չվանով ցիցը կապվեցավ... Սոսկալի հարվածների տակ (բողկի) թեպետ միւսը կտոր-կտոր յեղավ, բայց և ցավի վոչ մի ազդակ չհանեց. 35-րդ հարվածից հնազին ձայնով ուսաց աստծու և կայսեր դեմ սարսափելի հիշոց մը տվավ ու դեռ անասան կիկնար. բայց յերբ վոր ուս պաշտոնատերը տաքացած յերկաթով ճակատը կոխեց, այն ժամանակ այս անընկճելի հոգին սկսավ սասանել ու բերանը փրփրալով աննշան խոսքեր ու հեծութիւն ձայներ հանել: Այս որինակը մարդ կսոսկացնե»<sup>\*\*</sup>:

Աղեքսանդր Յերիցյանը պատմում ե («Ամենայն հայոց կաթողիկոսութիւն և Կովկասի հայք»), վոր Նիկողայ I կայսրի 1837 թվականին Հայաստան յեկած ժամանակ, ուսաց որենքը և լեղուն չիմացող բնակիչները պարսկական յերկիրներում գործադրվող միջոցներով իրենց բողոքն եյին հայտնում թագավորին: Որինակ՝ Սարգսրաբադ հասած ժամանակ մի հայ թագավորին ներկայացնում ե մի լեբկ ու նիհար աքաղաղ, կամենալով հասկացնել, վոր ուս պաշտոնյաներն իրենց այդ աքաղաղի որն են հասցրել և այն:

Թաղիադյանցն ասում ե, վոր ժողովուրդը փառք եր տալիս պարսիկներին, տեսնելով ուսաների ճնշումները:

Եպիղոզիկ այս մի քանի որինակները, հակառակ ուս չինովելի պատմաբանների և մեր կղերական, բուրժուական վորոշ հեղինակների սխալումները, պարզ լույս են

<sup>\*</sup> Մորից Վազնե—«Ճանապարհորդութիւն ի Հայաստան», թարգմ. Փիլիպոս ձամճյան, Վիեննա, 1851 թ., էջ 115:

<sup>\*\*</sup> Նույն տեղ, էջ 10—11:

սիրում այն ծանր վիճակի վրա, վոր Հայաստանի աշխատավորութիւնն ապրեց ուսաների նվաճումից անմիջապես հետո, այսպես կոչված անցման շրջանում, պարսկական վարչաձևի փոխարեն ուսական բյուրոկրատիկ վարչաձևը մշացնելու և ամբացնելու ետապում:

Հայաստանի, ինչպես և վորջ Անդրկովկասի, աշխատավորութիւնն դրութիւնն ավելի ծանրացավ հետոեֆորմյան շրջանում, 60—ական թվականներից սկսած: Հետոեֆորմյան եպոխտում, ինչպես հայտնի յե, սկսվում ե Անդրկովկասի ուժեղ գաղութացումը ուսական ինքնակալութիւն կողմից: Վերջինս ընդհուպ ձեռնամուխ ե լինում Անդրկովկասը ուսական առևտրա-արդյունաբերական կապիտալի բազա դարձնելու քաղաքականութիւնը: Անդրկովկասը պետք ե դառնար վոչ միայն ուսական արդյունաբերութիւնը հումուլթ մատակարարող, այլև ուսական Փարիկատն սպառող յերկիր, այլ կերպ ասած, բացի քաղաքական նվաճումից, նա պետք ե նվաճվեր և տնտեսապես:

«Այն մասին, — գրում ե Լենինը «Развитие капитализма в России» աշխատութիւն մեջ, — վոր հետոեֆորմյան ժամանակաշրջանում Յեվրոպական Ռուսաստանի հարավային և արևելյան բնակավորված ծայրերկրները աչքի յեն ընկնում հենց մատնանշված գծերով և տնտեսական (в ЭКОНОМИЧЕСКОМ) առումով հանդիսանում եյին Յեվրոպական Ռուսաստանի գաղութներ, — արդեն ասված ե իր տեղում: Գաղութի այդ ըմբռնումն էլ ավելի հարմար ե մյուս ծայրագավառների, որինակ, Կովկասի նկատմամբ: Նրա տնտեսական «նվաճումը» Ռուսաստանի կողմից շատ ավելի ուշ ե կատարվել, քան քաղաքականը, իսկ տնտեսական այս նվաճումը լիովին չի ավարտված մինչև այժմ ել: Հետոեֆորմյան դարաշրջանում մի կողմից Կովկասը սաստիկ գաղութացման եր յենթարկվում, գաղութականները մեծ չափերով հերկում եյին հողերը (առանձնապես Հյուսիսային Կովկասում) և արտագրում եյին ծախու ցորեն, ծխախոտ և այլն՝ մեծ թվով գյուղական վարձու բանվորներ գրավելով Ռուսաստանից: Մյուս կողմից տեղի յեր ունենում բնիկ դարա-

«Ռուս հարկահանը մեզ վրա այնչափ բեռ կընե, վոր մենք ամենաբերրի տարիների անխոնջ աշխատանքից և սակավապես կյանք վարելուց հետո անգամ, այդ բարձր տուրքերը վճարելու կարողութուն չունեննք»\*:

Վագներն ակնհաստես է լինում ցարական ինկվիզիցիայի այսպիսի զարհուրելի մի դեպքի.

«18 տարեկան յերիտասարդ թաթարը առանց այլևայլության ծեծ ուտելու տեղն յեկավ ու չվանով ցիցը կապվեցավ... Սոսկալի հարվածների տակ (բողկի) թեպետ միսը կտոր-կտոր յեղավ, բայց և ցավի վոչ մի ազդակ չհանեց. 35-րդ հարվածից հանգին ձայնով ուսաց աստծու և կայսեր դեմ սարսափելի հիշոց մը տվավ ու դեռ անսասան կլինար. բայց յերբ վոր ուս պաշտոնատերը տաքացած յերկաթով ճակատը կոխեց, այն ժամանակ այս անընկճելի հոգին սկսավ սասանել ու բերանը փրփրալով աննշան խոսքեր ու հեծության ձայներ հանել: Այս որինակը մարդ կսոսկացնե»\*\*:

Աղեքսանդր Յերիցյանը պատմում է («Ամենայն հայոց կաթողիկոսութուն և Կովկասի հայք»), վոր Նիկիոյա I կայսրի 1837 թվականին Հայաստան յեկած ժամանակ, ուսաց որենքը և լեզուն չիմացող բնակիչները պարսկական յերկիրներում գործադրվող միջոցներով իրենց բողոքն եյին հայտնում թագավորին: Որինակ՝ Սարգարբադ հասած ժամանակ մի հայ թագավորին ներկայացնում է մի լերկ ու Նիհար աքաղաղ, կամենալով հասկացնել, վոր ուս պաշտոնյաներն իրենց այդ աքաղաղի որն են հասցրել և այլն:

Թաղիադյանցն ասում է, վոր ժողովուրդը փառք էր առլիս պարսիկներին, տեսնելով ուսաների ճնշումները:

Եպիդոթիկ այս մի քանի որինակները, հակառակ ուս չինովնիկ պատմաբանների և մեր կղերական, բուրժուական վորոշ հեղինակների պնդումների, պարզ լույս են

\* Մորից Վագներ—«Ճանապարհորդութուն ի Հայաստան», թարգմ. Փիլիպոս ձամճյան, Վիեննա, 1851 թ., էջ 115:

\*\* Նույն տեղ, էջ 10—11:

սիրում այն ծանր վիճակի վրա, վոր Հայաստանի աշխատավորութունն ապրեց ուսաների նվաճումից անմիջապես հետո, այսպես կոչված անցման շրջանում, պարսկական վարչաձևի փոխարեն ուսական բյուրոկրատիկ վարչաձևը մշտցնելու և ամբացնելու ետապում:

Հայաստանի, ինչպես և վորջ Անդրկովկասի, աշխատավորության դրութունն ավելի ծանրացավ հետոեֆորմյան շրջանում, 60—ական թվականներից սկսած: Հետոեֆորմյան եպոխտում, ինչպես հայտնի յե, սկսվում է Անդրկովկասի ուժեղ գաղութացումը ուսական ինքնակալության կողմից: Վերջինս ընդհուպ ձեռնամուխ է լինում Անդրկովկասը ուսական առևտրա-արդյունաբերական կապիտալի բազա դարձնելու քաղաքականությանը: Անդրկովկասը պետք է դառնար վոչ միայն ուսական արդյունաբերությանը հումուլթ մատակարարող, այլև ուսական ֆարրիկատն սպառող յերկիր, այլ կերպ ասած, բացի քաղաքական նվաճումից, նա պետք է նվաճվեր և անտեսապես:

«Այն մասին,—գրում է Լենինը «Развитие капитализма в России» աշխատության մեջ,—վոր հետոեֆորմյան ժամանակաշրջանում Յեվրոպական Ռուսաստանի հարավային և արևելյան բնակավորված ծայրերկրները աչքի յեն ընկնում հենց մասնանշված գծերով և անտեսական (в экономическом) առումով հանդիսանում էյին Յեվրոպական Ռուսաստանի գաղութներ, —արդեն ասված է իր տեղում: Գաղութի այդ ըմբռնումն էլ ավելի հարմար է մյուս ծայրագավառների, որինակ, Կովկասի նկատմամբ: Նրա անտեսական «նվաճումը» Ռուսաստանի կողմից շատ ավելի ուշ է կատարվել, քան քաղաքականը, իսկ անտեսական այս նվաճումը լիովին չի ավարտված մինչև այժմ էլ: Հետոեֆորմյան դարաշրջանում մի կողմից Կովկասը սաստիկ գաղութացման էր յենթարկվում, գաղութականները մեծ չափերով հերկում էյին հողերը (առանձնապես Հյուսիսային Կովկասում) և արտադրում էյին ծախու ցորեն, ծխախոտ և այլն՝ մեծ թվով գյուղական վարձու բանվորներ գրավելով Ռուսաստանից: Մյուս կողմից տեղի յեր ունենում բնիկ գարա-

վոր «անայնագործական» արհեստագործությունների դուրս-  
մղումը, վորոնք Մոսկվայից ներմուծվող ֆաբրիկաների  
մրցման տակ ընկնում էյին: Ընկնում էր զենքի հինավուրց  
արտադրությունը՝ Տուլայից ու Բելգիայից ներմուծվող շին-  
վածքների մրցման շնորհիվ, ընկնում էր յերկաթի անայնա-  
գործական մշակումը՝ ներմուծվող ուսսական արտադրանքի  
մրցման շնորհիվ, նմանապես ընկնում էր պղնձի, վոսիլու  
և արծաթի, կավի, ճրագվի, սողայի, կաշիների անայնագոր-  
ծական մշակումը և այլն. այս բոլոր արդյունքներն ավելի  
եծան էյին պատրաստվում ուսսական գործարաններում, վո-  
րոնք իրենց շինվածքները Կովկաս էյին ուղարկում: Ընկնում  
էր յեղջուրներից գավաթներ պատրաստելը, Վրաստանի  
ֆեոդալական կարգի և նրա պատմական ինչուքների կոր-  
ծանման հետևանքով. ընկնում էր գլխարկի արհեստագոր-  
ծությունը, ասիական զգեստը յեվրոպականով փոխարինելու  
հետևանքով. ընկնում էր տկերի ու կարամների արտադրու-  
թյունը տեղական գինու համար, վորն առաջին անգամ էր  
վաճառքի հանվում (զարգացնելով տակառագործական ար-  
տադրությունը) և իր հերթին նվաճում էր ուսսական շուկան:

Այսպիսով, ուսսական կապիտալիզմը Կովկասը ներգրա-  
վում էր համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ,  
համահարթում էր հինավուրց նահապետական փակվածու-  
թյան մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատ-  
կությունները, իր գործարաններին ծառայող շուկա էր  
ստեղծում իր համար:

Հետևեցորմյան ժամանակաշրջանի սկզբին նոսր ընակ-  
ված կամ այն լեռնականներով ընակված յերկիրը, վո-  
րոնք համաշխարհային տնտեսությունից և նույն իսկ  
պատմությունից դուրս էյին կանգնած, դառնում էր նախ-  
թարդյունաբերողների, գինու առևտուր անողների, ցո-  
րենի ու ծխախոտի ֆաբրիկաների յերկիր, և պարոն Կու-  
պոնն անգլիոն հանում էր հպարտ լեռնականի վրայից նրա  
բանաստեղծական ազգային զգեստը և զարգարում էր յեվ-  
րոպական լակեյի զգեստով (Գլ. Ուսսականի): Կովկասի ու-

ժեղ գաղութացման պրոցեսին ու նրա յերկրագործական բը-  
նակչության արագ աճմանը դուզընթաց տեղի յեր ունենում  
ընակչության՝ յերկրագործությունից դեպի արդյունաբերու-  
թյուն գրավելու (այս աճումով թագնված) պրոցեսը»\*:

Հետևեցորմյան շրջանը Անդրկովկասի պատմության մեջ  
մտնում է իբրև նոր ետապ—իբրև ֆեոդալիզմի քայքայման  
ու կապիտալիզմի սկզբնավորման ետապ: Մրանով, ի հարկե,  
մենք չենք ուզում բացասած լինել առևտրա—արդյունաբերա-  
կան կապիտալի առկայությունը նախառեցորմյան Անդրկով-  
կասում: Նա գոյություն ունեւր և իբրև զգալ էր տալիս նաև  
այդ շրջանում: Մեր խոսքը վերաբերում է Անդրկովկասի  
կապիտալիստական զարգացման ամբողջական պրոցեսին,  
յերբ քայլ առ քայլ սկսում են խարխիլել ֆեոդալական հա-  
բարեբությունները, քայքայվում են մանր գյուղացիական  
տնտեսությունները, գյուղացիությունը յենթարկվում է  
պառույթիզացիայի ու պրոլետարականացման, աճում են քա-  
ղաքներն ու քաղաքային բնակչությունը և այլն. իսկ այդ-  
պիսի պրոցես Անդրկովկասում սկսվում է միայն 19-րդ դարի  
յերկրորդ կեսից:

Անդրկովկասը ուսսական կայսրությանը միացնելը, այդ-  
պիսով, այն պրոգրեսիվ նշանակություն է ունենում, վոր  
նույնիսկ հակառակ ցարիզմի գաղութարար քաղաքականու-  
թյան, տեղում արդեն, 40—50—ական թվականներից սկսած  
նկատելի չափերով աճում են առևտուրն ու արդյունաբերու-  
թյունը: Առևտուրը կատարվում էր գլխավորապես Մոսկվայի,  
Նիժնի-Նովգորոդի, ինչպես և արտասահմանի հետ: 1847  
թվին Թիֆլիսում հանդիսավոր կերպով բացվում է «Ռու-  
սական ապրանքների գեպո»-ն, վորի հիմնադիրներն  
էյին Մոսկվայի քաղաքագլուխ Լիպոշկինը, Բարանովը, Գուչ-  
կովը, Բոգոժինը, Պրոխորովը և այլն: Ռուս աչքի ընկնող  
առևտրա—արդյունաբերողների շանքերով 1836 թ. կազմա-  
կերպվում է (կենտրոնը Նուխի) «Անգրկովկասում մե-  
տաքսագործությունը և առևտրա—արդյունա-

\* Ленин, Т. III, стр. 463—4:

բերությունը տարածող ընկերություն»։ Հիմք են դրվում նոր գործարանների, լայն ծավալ ե ստանում մասնավորապես մետաքսի ու տորոնի, հետագայում՝ նավթի, պղնձի, բամբակի արտադրությունը և այլն։

Հետզհետե աճում է ուսական առևտրա-արդյունաբերական շրջանների հետաքրքրությունը Կովկասի հարուստ հունքի նկատմամբ։ 1860—ական թվականների վերջերին— «Московские Ведомости» թերթի ասելով—Մոսկվայում կազմակերպվում է առևտրա-արդյունաբերական մի ընկերություն, վորը պետք է Կովկաս դար։ Տպագրելով այս լուրը, Թիֆլիսի միապետական «Кавказ» թերթը 1869 թ. № 93-ում գրում է.— «Ցանկանում ենք կատարյալ հաջողություն ոգտակար այդ ձեռնարկությանը։ Ռուսաց հասարակության մասնակցությունը մեր հայրենիքի սահմաններում յեղած յերկրները ուսացնելու—շատ մեծ բան է, և կասկած չկա, վոր տարեցտարի այդ բանը կհայտնվի ավելի ու ավելի զորեղ»։

Տնտեսական նվաճման ուղղությամբ կատարվող այս և նմանորինակ փաստերը հետզհետե ավելի ու ավելի աճեցին։ Անդրկովկասը համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ քաշելով ուսական կապիտալիցը նիվելիբոլկայի յեր յենթարկում Անդրկովկասի հին, նահապետական կղզիացման մնացորդները, քայքայում սնայնագործական դարավոր արձ հեստները։

Պատմական այս պրոցեսը թե արդյունաբերության և թե գյուղատնտեսության մեջ, ինչպես Ռուսաստանում, նույնպես և Անդրկովկասում շոշափում էր աշխատավոր գյուղացիության, արհեստավորների ու մանր առևտրականների շահերը, իր սուր ծայրով հարվածում էր վերջիններին։ Ռուսական առևտրա-արդյունաբերական շրջանների և ուսական շուկայի հետ կապված հայ առևտրա-արդյունաբերողները ցարեզմի հետ գծավելու սնտեսական մեծ կովաններ չունեյին, նրանց շահը ևս այդ չէր թելադրում։

Սոցիալ—սնտեսական կյանքում խմորվող այս պրոցես-

ները հետ էլ հիմնականում կապվում են վողջ Անդրկովկասում, ինչպես և հայերի մեջ առաջ յեկած հասարակական—քաղաքական նոր յերևույթները։

Կապիտալիզմի զարգացման պրոցեսն Անդրկովկասում համընկնում է տեղական ժողովուրդների իրրև ազգ կազմավորվելու պրոցեսի հետ։

Մեր այս պնդումով թերևս մենք խիտ կերպով վերաժորում ենք հայ ազգայինների ամենանուրբ զգացմունքները և խախտում ազգայնական պատմագրության՝ հայերի «Տնագույն ազգ» լինելու տրադիցիան։ Ի՛նչ արած. պատմական ճշմարտությունը մեզանից այդ է պահանջում և դրա համար մենք բնավ չենք զղջում։ Ավելին. մենք յեհնում ենք Մարքսի, Ենգելսի, Լենինի ու Ստալինի ցուցումներից, վորոնք մեզ համար միակ ճիշտ և գիտական ուղեցույցն են։

Ընկ. Ստալինը մեր կուսակցության 10-րդ համագումարի համար ազգային հարցի մասին մշակած թեզերի մեջ ասում է.— «Ժամանակակից ազգերը վորոշ դարաշրջանի—բարձրացող կապիտալիզմի դարաշրջանի— արգասիք են։ Ֆեոդալիզմի վերացման ու կապիտալիզմի զարգացման պրոցեսը դրա հետ մեկտեղ հանդիսանում է մարդկանց վորպես ազգեր կազմավորվելու պրոցես»\*։


Սոսերով ազգ կազմող բոլոր ընտրոշ հատկանիշների մասին, ընկ. Ստալինը գրում է.— «Ազգը՝ դա պատմականորեն կազմավորված կայուն ընդհանրություն է՝ լեզվի, տերիտորիայի, սնտեսական կյանքի և կուլտուրայի ընդհանրության մեջ արտահայտված հոգեկան (պսիխիկական) կերտվածքի» (եջ 14)։ «Բոլոր այս հատկանիշները առկայությունն է միայն, —ասում է ընկեր Ստալինը,— վոր մեզ ազգ է տալիս»։

Սոսերով վրացիների իրրև ազգ կազմավորման պատմական պրոցեսի մասին, նա գրում է.

«...Նախառեֆորմյան ժամանակները վրացիներն ապրում

\* Ի. Ստալին—Մարքսիզմը և ազգային—գաղութային հարցը, Կուսհրատ—Յերեվան, 1935 թ., էջ 92.

668  
245-93 7528



Առաջին ժանդարմատիկա

էյին մի ընդհանուր տերիտորիայում և խոսում էյին մի լեզվով, բայց և այնպէս, խոտիվ առած, նրանք մի ազգ չէյին կազմում, վորովհետև նրանք, իրարից կտրված մի ամբողջ շարք իշխանութիւններէ բաժանված լինելով, չէյին կարող ապրել տնտեսական ընդհանուր կյանքով, դարերով միմյանց դեմ պատերազմներ էյին մղում և տնտեսապէս քայքայում էյին իրար, սաղբելով միմյանց դեմ պարսիկներին ու թշուրքերին: Իշխանութիւններէ վազանցիկ ու պատահական միավորումը, վոր յերբեմնակի հաջողվում էր գլուխ բերել մի վորևէ հաջողակ-թագավորի, լավագույն դեպքում ընդգրկում էր միայն մակերեսային-վարչական վորոտը, արագորեն քանգլում էր՝ դեմ առնելով իշխանների քմահաճույքին ու գլուղացիներէ անտարբերութեանը: Վրաստանի տնտեսական մասնատվածութեան պայմաններում, ասենք, ուրիշ կերպ չէր ել կարող լինել... Վրաստանը վոր պէս ազգ չէր ել վան յեկա վ միայն 19-րդ դարի յերկրորդ կեսին, յերբ ճորտատիրութեան անկումը և յերկրի տնտեսական կյանքի աճումը, հազորդակցութեան ճանապարհներէ դարգացումը և կապիտալիզմի առաջացումը աշխատանքի բաժանում հաստատեցին Վրաստանի մարդերի միջև, բոլորովին սասանեցին իշխանութիւնների տնտեսական ինքնամիութիւնը և նրանց կապակցեցին վորպէս մի ամբողջութիւն:

Նույն այդ բանը պետք է ասել նաև ֆեոդալիզմի ստազիան անցած և իրենց մոտ կապիտալիզմը զարգացրած այլ ազգերի մասին»\*:

Մի այլ տեղ խոսելով ազգերի կազմավորման, նույն թիւում և հայերի ու վրացիների մասին, ընկ. Ստալինը գրում է. —

«Մամուլի ու թատրոնի զարգացումը, Ռայխսբատի (Սովետական) և Դոմաչի (Ռուսաստանում) գործունէյութիւնը նպաստում են «ազգային զբացմունքներին» ուժեղացմանը: Ծնունդ առած ինտելիգենցիան տողորվում է «ազգային գազափարով» և այս իսկ ուղղութեամբ էլ գործում է... Բայց

\* Ի. Ստալին, նույն տեղ, էջ 12-13. ընդգծումն իմն է. Վ. Պ.:

ինքնուրույն կյանքի համար արթնացած հետ մղված ազգերն արդեն իբրև անկախ ազգային պետութիւններ չեն կազմավորվում. նրանք իրենց ճանապարհին ամենաուժեղ դիմադրութեան են հանդիպում այն իշխող ազգերի զեկավար խավերի կողմից, վորոնք վաղուց արդեն պետութեան գլուխ էյին կանգնած: Ուշացել են... Այսպէս կազմավորվում են իբրև ազգեր՝ չեխերը, լեհերը, և ուրիշները՝ Ավստրիայում. խրվածները և ուրիշները՝ Հունգարիայում, լատիշները, լեովացիները, ուկրաինացիները, վրացիները, հայերը և ուրիշները՝ Ռուսաստանում»\*:

Պատմական ժամանակագրական տեսակետից ֆեոդալիզմի քայքայման և կապիտալիզմի զարգացման շրջանը վրաստանում համընկնում է Հայաստանի կապիտալիստական զարգացման պրոցեսի հետ: Մեր խորին համոզմամբ, առհասարակ կապիտալիզմի զարգացման պրոցեսն Անդրկովկասում, իր վորոշ առանձնահատկութիւններով հանդերձ, ընդհանուր, մի միասնական պրոցես է, և հազիվ թէ կարելի լինի պատմական, ժամանակագրական տեսակետից մեծ տարբերութիւն նշել բուն հայկական և վրացական կյանքի միջև: Յեկ քանի վոր այդ այդպէս է, ապա ուրեմն հայերի իբրև ազգ կազմավորվելու պրոցեսը ևս պետք է ընդունել հետեւիֆորմյան շրջանից:

Այս բնավ չի նշանակում, թե մենք հայերի ազգային կոնսոլիդացիայի բուն պրոցեսը կտրում ենք նախընթաց շրջանի նրանց ազգային զարթոնքից, վորի սաղմերը, ըստ իս, պետք է ինտուել Իսրայել Որու, Բաղրամյանի, Շահամիր և Հակոբ Շահամիրյաններէ, Հովսէփ Եմինի մոտ, և նույնիսկ Դավիթ Բեկի շարժման մեջ: Սակայն հայերի ազգային զարթոնքը, վորքան էլ վոր նա պատմական խոր հետուններից սկիզբ առած լինի, այնուամենայնիվ հնարավորութիւն չի տալիս մեզ, նրանց՝ իբրև ազգ կազմավորվելու պրոցեսը յետ տանել: Ել չեմ խոսում այն մասին, վոր այդ պրոցեսը ըստ մեծի մասին տեղի յե ունեցել բուն յերկրից դուրս, հայկական դադութիւններում:

\* Ի. Ստալին, նույն տեղ, էջ 20.:

Հայերի ազգային շարժումները, ինչպես ամենուրեք, կապված են նրանց իրրև ազգ կազմավորվելու յերկարատև պրոցեսի հետ:

Լենինը 1914 թ. փետրվարին գրած «О праве наций на самоопределение» հոդվածում հետևյալն է ասում.—

«Ամբողջ աշխարհում, Ֆեոդալիզմի դեմ կապիտալիզմի վերջնական հաղթանակի գարաշրջանը կապված է յեղել ազգային շարժումների հետ: Այդ շարժումների անտեսական հիմքը կայանում է նրանում, վոր ապրանքային արտադրության լիակատար հաղթանակի համար անհրաժեշտ է, վոր բուրժուազիան նվաճի ներքին շուկան, անհրաժեշտ է, վոր տեղի ունենա մի լեզվով խոսող ազգաբնակութուն ունեցող տերիտորիաների պետական համախմբում, վերացնելով այդ լեզվի զարգացմանը, գրականության մեջ նրա ամբացմանը խանգարող բոլոր խոչընդոտները: Լեզուն մարդկային հաղորդակցության ամենակարևոր միջոցն է. լեզվի միությունը և նրա անարգել զարգացումը կարևորագույն պայմաններից մեկն է ժամանակակից կապիտալիզմին համապատասխանող ապրանքային իրապես ազատ ու լայն շրջանառության, ազգաբնակչության բոլոր առանձին դասակարգերի ազատ ու լայն խմբավորման համար, վերջապես նա յե շուկայի և յուրաքանչյուր խոշոր կամ փոքր անտեսատիրոջ, ծախողի ու առնողի սերտ միության պայմանը»\*:

Հայերի ազգային կազմավորման ու կոնսոլիդացիայի պրոցեսը կատարվում էր, ինչպես հայտնի յե, նրանց գաղութային անտեսական-քաղաքական կախվածության պայմաններում: Ազգային լեզվի, պետականության, կուլտուրայի հարցերը «ժողովուրդներ էր ըսնտ» ցարական Ռուսաստանում յոթ կողպեքի տակ էյին պահվում վոչ միայն հայերի, այլև վրացիների, թուրքերի, ուկրաինացիների և մյուս բոլոր յենթակա ժողովուրդների մոտ: Ռուսական կայսրության մեջ մասնող ժողովուրդները կամավոր հիմունքներ

\* Լ. Ե. Ի. Կ., հատ. 17, էջ 428.

բով չէ վոր միացել էյին, ցարական ինքնակալությունն այդ կատարել էր հրի ու սրի միջոցով, Ենգելսի պատկերավոր խոսքերով արտահայտած՝ նա բունի ճանապարհով տիրացել էր «վիթխարի քանակի գողացած սեփականության (այսինքն հարստահարված ազգերի), վոր ստիպված պիտի լինէր հետ տալ հաշվեհարդարի որը»:

Պատմական այդ հաշվեհարդարի որը ցարական բռնակալությունը յերբեք չէր մոռանում և չէր էլ կարող մոռանալ:

Հայերի ազգային կազմավորման պրոցեսը պատմականորեն զուգահեռաց ցարական ինքնակալության կողմից Անդրրկովկասի ուժեղ գաղութացմանը: Ռուսական գաղութարարների լուծը, նրանց անտեսական-քաղաքական-ազգային ճնշումը նոր մղում էր տալիս հակառուսապետական հայ ազգային-դեմոկրատական շարժմանը, այդ շարժման վոլորտի մեջ էր առնում յեռակի շահագործման յենթակա դեմոկրատիայի ավելի լայն շերտերին:

Մի կողմից ցարիզմի ազգային-գաղութային ճնշումն ու թախանը, խիստ ուռսիֆիկացիան, պայքար ազգային լեզվի, դպրոցների, մամուլի, գրականության, կուլտուրայի և առհասարակ ազգային ինքնուրույն զարգացման դեմ և մյուս կողմից ազգային-դեմոկրատական հոսանքների պայքարը ցարիզմի դեմ. այս է հետոեֆորմյան շրջանի մեր պատմության բնորոշ գծերից մեկը: Ազգային-դեմոկրատական այս պայքարը անպայմանորեն պրոգրեսիվ է և մտնում է ուսական կայսրության մեջ յեղած բոլոր մյուս ճնշվող ժողովուրդներին անտիցարական ազգային-ազատագրական պայքարի ակտիվի մեջ:

Ահա, այս տեսանկյունից պետք է մոտենալ Ալեքսանդրապոլում 1860—1870-ական թվականներին խմորվող ազգային-դեմոկրատական խմբակների գործունեյությանը, այդ միայն հնարավորություն կտա ճիշտ ըմբռնել ու գնահատել մեր քննության որյեկա հանդիսացող դեպքերն ու դեմքերը:

## ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԸ 60—70-ԱՎԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ալեքսանդրապոլն իբրև քաղաք, Հայաստանի ներքին կյանքի բնական զարգացման արդյունք էր: Նա աճեց ու զարգացավ միանգամից, արհեստականորեն՝ ոռոս-պարսկական պատերազմից հետո:

Նախկին ԿՈՒՄԱՅՐԻ կամ թուրքերեն՝ ԳՅՈՒՄՐԻ գյուղը 1828 թվականին վերջնականապես անցնում է ոռոսներին ձեռքը, և այդտեղ են գաղթում Ղարսից, Երզրումից ու Բայազետից մեծ քանակությամբ հայ գաղթականներ: ԳՅՈՒՄՐԻՆ միանգամից լցվում է հայ բնակիչներով\* և շուտով, նույնիսկ մի քանի հազարով գերազանցում նախկին Սարգարուծից, հետագայում Հայկական մարզի վարչական կենտրոն Յերևանից\*\*:

Արտասովոր ու դժնդակ պայմաններում տեղի ունեցած գաղթը Հայաստանի ծանր ու քայքայիչ ազդեցություն է ունենում հայ գաղթականության նյութական, բարոյական վիճակի վրա: Նոր բնակավայրում, հակառակ խոստացածին և սպասածին, գաղթական բնակիչները չեն գտնում

\* Ալեքսանդրապոլում յեղել են 1831 թ. հայեր՝ 3194, այլ ազգիներ՝ 250 հոգի: 1873 թ. հայեր՝ 19129, այլ ազգիներ՝ 847 հոգի: 1886 թ. հայեր՝ 22921, այլազգիներ՝ 1309 հոգի:

Յերևանում յեղել են 1831 թ. հայեր՝ 4027, այլ ազգիներ 7436 հոգի: 1873 թ. հայեր՝ 5959, այլ ազգիներ՝ 5979 հոգի: 1886 թ. հայեր՝ 7142, այլ ազգիներ՝ 7596 հոգի:

\*\* Ալեքսանդրապոլն ունեցել է 1831 թ. 3444 բնակ., 1862 թ. 14933 բն., 1873 թ. 19976 բն., 1886 թ. 24230 բն.:

Յերևանն ունեցել է 1831 թ. 11920 (?) բն., 1873 թ. 11938 բն., 1886 թ. 14738 բն.:

գոյության բավաբար միջոցներ, հանգիստ ու ապահով կյանք: Ավելին. նոր տիրոջները, ինչպես առհասարակ Հայաստանում, նույնպես և Ալեքսանդրապոլում, անմիջապես աչքի չեն ընկնում իրենց գաղութարար ճշունքներով ու շահագործումով: Ստորև բերվող դիմումը, վոր 1837 թվի դեկտեմբերի 6-ին Ալեքսանդրապոլի քաղաքացիները գրել են թագավոր կայսրին, վորոշ գաղափար է տալիս նրանց ծանր վիճակի մասին:

«Թող հայանի լինի Քո կայսերական մեծությանդ, վոր մենք Գյուլմրեցիներս Յիցլանովի ժամանակ միահողի և «միաբան» ընդունել ենք Քո պետության հպատակությունը: Այդ ժամանակից սկսած մեր դրությունն այնպես է, վոր կարծես մենք գերված և քշված ենք Թեհրան. մեր մեռելները մնում են առանց թաղելու, վորովհետև «զինվորների հետ զինվորություն ենք անում» (այսինքն լինում ենք զինվորական ծառայության մեջ), «կազակի հետ — կազակություն»: Ապա, թող հայանի լինի Քո կայսերական մեծությանը, վոր մինչ որս Գյուլմրին գյուղ եր, իսկ այժմ դարձել է քաղաք, ուստի մենք կրում ենք և՛ գյուղական, և՛ քաղաքային պարտականությունները: Մեր գլխավոր ցավը կայանում է նրանում, վոր Քո պետի — այսինքն Քո նշանակած պետի — համար հերկում ենք, հնձում, կալում և հացահատիկն շտեմարան հասցնում: Բացի այդ, տարեկան նըրան վճարում ենք 40 չետվերտ ցորեն: Հացից զատ, մենք տալիս ենք նրան տարեկան 6 փութ ձեթ և 6 փութ կովի յուղ: Պետի համար մեր կատարած պարտավորությունները ծանր է բոլոր մյուս պարհակներից: Նա մեզ նույնիսկ կառավարչատան բակը չի թողնում: Մենք մինչ այժմ չեյինք իմացել, վոր Դու այդքան վողորմած ես՝ այժմ ենք միայն իմացել, վոր Քո բարեսրտությունն անսահման է: Ի սեր «Աստըծո փառքի», և ի սեր Քրիստոսի անհեռանք մի թողնիր մեր լսնդիր-բողոքը: Իմացիր այժմ, վոր մենք ամբողջ «հին Գյուլմրեանակ ժողովուրդս» վոստիկանություն ձեռքում դրանում ենք ստրկական դրություն մեջ: Մեր ազիտություն

պատճառով մենք «քիչ» (այսինքն—վոչ բոլորը) գրեցինք, բայց Դու «շատ» հասկացիր»։\*

Իսկապես, այս դիմումի մեջ շատ քիչ է ասված, և վոչ միայն տեղացիներին, այլ և յեկվորներին գրուած թյունը նըկարագրածից շատ ավելի ծանր է յեղել։ Հայտնի յե, վոր այս հողի վրա տեղի յեն ունեցել մասսայական փախուստի դեպքեր՝ դեպի Պարսկաստան ու Տաճկաստան։ Բայց նրանց կյանքը միանգամ արգեն վտանգվել էր. այդ միջոցներն էլ չէյին ոգնում։

Ավերիչ պատերազմների ու դադթեցման ընթացքում կրած վերքերի բուժման վորոշ միջոցներ, սակայն, գտնվեցին հենց իրեն՝ գաղթականության մոտ։ Գյումրու—հետագայում Ալեքսանդրապոլի\*\*—նոր ընակիչներն իրենց հեռքերել էյին արհեստի գանազան տեսակներ։ Նոր ընակավայրում հողամշակութունից չստանալով գոյության անհրաժեշտ միջոցներ՝ նրանք զբաղվում են նաև արհեստներով ու առևտրով։ Քաղաքի աշխարհագրական դիրքը ևս նպաստում է դրան։ Ալեքսանդրապոլը շատ շուտով կենդանության ու առաջադիմության նշաններ է ցույց տալիս։

1843 թվականին Ալեքսանդրապոլի քաղաքային յեկամուտը (5217 ո. 63 կ.), Անդրկովկասի քաղաքների համեմատությամբ, 8-րդ տեղն էր բռնում։ Նա բարձր էր Բագվից, Գորուց, Նախիջևանից և Սդնախից։ Յերևանի քաղաքային յեկամուտը 1680 ո. 71 կոպեկով էր միայն ավելի Ալեքսանդրապոլից։ Քաղաքային բյուջեն ևս 1860—70-ական թվականներին զգալի չափով աճում է. 1862 թ. 15103 ո. մուտքի և 10002 ո.

\* С. А. Егизаров, „Исследования по истории учреждений в Закавказьи“, ч. II (Городские цехи), Казань, 1891 г., к 254.

\*\* 1837 թ. Նիկայայ I-ը այցելում է Գյումրի և այդ ժամանակվանից էլ Գյումրին վերանվանվում է թագուհու անունով՝ Ալեքսանդրապոլ։

յեղի գիմաց 1872 թվին մուտքը համարվ է 19891 ուրբու, իսկ յեղը՝ 11843 ուրբու։\*

Արհեստներն ու առևտուրը, Յերևանի հետ համեմատած, 1860—ական թվականներին հետևյալ պատկերն են ներկայացնում.

ՀԱՄԲԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ—ՆՐԱՆՅ ԱՆՁՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ\*\*

№ №	ՀԱՄԲԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Ա Ա Լ Բ Պ Ո Ա			Յ Ե Ր Ե Վ Ա Ն		
		վարկի	վարկի-սպու	ուսու-վեր	վարկի	վարկի-սպու	ուսու-վեր
1	Ալաջներ (հացահ. վաճառ.) . . .	—	—	—	6	42	—
2	Աթթարներ (դեղապրանք և նըման աղբահըավաճ.) . . .	150	—	—	52	—	—
3	Բազաղներ . . . . .	—	—	—	233	117	—
4	Թառ շինողներ . . . . .	—	—	—	4	—	7
5	Բակիկներ (մրգավաճ.) . . . . .	120	—	—	4	—	—
6	Մաշիկագործներ . . . . .	48	92	88	10	5	15
7	Թոկ պատրաստողներ . . . . .	16	15	18	—	—	—
8	Աղյուսագործներ (և բրուտագործներ Յերևանում) . . . . .	4	8	—	11	23	19
9	Նմիչքի սուտորականներ . . . . .	100	—	—	63	45	—
10	Կառապաններ . . . . .	15	4	—	—	—	—
11	Վորմագիրներ . . . . .	100	—	—	25	60	70
12	Կաշեգործներ . . . . .	17	21	8	8	30	—
13	Ներկարարներ . . . . .	8	1	9	—	—	—
14	Դարբիններ . . . . .	70	80	80	20	—	45
15	Պղնձագործներ (անազագործներ Յերևանում) . . . . .	25	49	50	27	—	—

\* Տե՛ս „Отчет по главному управлению наместника Кавказского за первое десятилетие управления Кавк. и Зак. краем 6/XII 1862—6/XII 1872 г.“ Тифлис, 1873 г. (приложение к главе 7-й. Ведомость о доходах и расходах городов Кавказского и Закавказского края за 1862 и 1872 годы).

\*\* Տե՛ս С. А. Егизаров „Исследования по истории учреждений в Закавказьи“, ч. II. Казань, 1891 г., к 379.

№ №	ՀԱՄՔԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԱՒԵՔՊՈՒ			ՅԵՐԵՎԱՆ		
		վարկեր	վարկ- սցում	աու- կեր	վարկեր	վարկ- սցում	աու- կեր
16	Մսագործներ . . . . .	45	25	30	—	—	—
17	Զինագործներ . . . . .	11	12	10	—	—	—
18	Հյուան., աստղծագ. և սղոցողներ	44	48	34	49	90	150
19	Փայտագործներ . . . . .	40	36	38	12	—	10
20	Դերձակներ և ասեղնագործներ .	75	70	65	—	—	—
21	Դերձակներ յեվրոպական . . .	—	—	—	11	25	30
22	» ասիական . . . . .	—	—	—	18	55	20
23	Կոշիակարներ . . . . .	31	32	30	60	90	150
24	Մոմագործներ . . . . .	—	—	—	9	—	14
25	Արծաթագործներ (և ժամագործ- ներ Ալեքսանդրապոլում) . . .	25	19	19	6	8	21
26	Փակահագործներ . . . . .	4	5	3	40	—	3
27	Թամբագործներ (և կապագործ. Ալեքսպոլում) . . . . .	10	8	12	8	12	19
28	Ծխախոտագործներ . . . . .	50	18	100	18	30	50
29	Յերիզագործներ (ղաղաղներ) .	89	32	97	4	—	9
30	Զուլհակներ . . . . .	50	10	30	—	—	—
31	Հացթուխներ . . . . .	—	—	—	18	50	—
32	Սափրիչներ . . . . .	25	18	32	12	—	25
33	Գողակագործներ . . . . .	42	—	24	40	—	20
34	Բուրդ ձեծողներ . . . . .	6	—	3	10	10	—
Ընդամենը . . . . .		1219	603	780	778	692	667

Յեղիագործի արժեքավոր աշխատության մեջ բերված այս աղյուսակը, վորքան էլ թերի լինի, այնուամենայնիվ վորոշ մոտավոր պատկերացում է տալիս Ալեքսանդրապոլի ու Յերևանի համքարությունների կազմի՝ վարպետների՝ վարպետացուների և աշակերտների թվի մասին: Համաձայն այդ աղյուսակի՝ Ալեքսանդրապոլի առևտրական և ար-

հետագործական համքարությունների մեջ յեղել են 2602 մարդ, իսկ Յերևանում՝ 2137 մարդ:

Արհեստների և առևտրի վորոշ ճյուղերի մեջ Ալեքսանդրապոլն ավելի բարձր է կանգնած յեղել, քան Յերևանը\*: Ալեքսանդրապոլի վորմնադիր—քարտաշ վարպետների մասին առանձին պատկառանքով է խոսում նաև հոչակավոր կովկասագետ ակադեմիկ Ն. ՄԱՌԷ, նշելով, վոր նըրանց ձեռքով է կառուցվել Անիի նմանությամբ կերտված ճարտարապետական կոթող՝ Ալեքսանդրապոլի ս. փրկչի յեղեղեցին\*\*:

Իր հիշված աշխատության մեջ Յեղիագործի գրում է. — «Արհեստագործական արդյունաբերությունը նույնիսկ Անդրկովկասի նահանգական քաղաքներում թույլ է զարգացած յեղել և առավելապես բավարարել է տեղական պահանջները: Բացառություն են կազմել միայն Ալեքսանդրապոլն ու Ախալցխան: Մոտիկ գտնվելով թյուրքիայի սահմանին, յերկու քաղաքներն էլ առևտրական ու արդյունաբերական տեսակետից նպաստավոր դրության մեջ էլին:

Մշտական պատերազմներն ավերել էլին թուրքակա սահմանամերձ քաղաքները, արհեստավոր բնակչությունը, վորպեսզի ապաստան գտնի, հեռանում էր կամ Անդրկովկասի քաղաքները կամ Փոքր-Ասիայի հեռավոր գավառները, վորոնք ռազմական գործողությունների մշտական թատերաբեմ հանդիսացող շրջաններից դուս էլին ընկած: Զրկվելով տեղական արհեստավորներից, թուրքական մերձավոր վիլայեթներն անհրաժեշտ գործվածքներն ստանում էլին Ախալցխա-

\* Ալեքսպոլի բոլոր արհեստների թիվը հաշվում են մոտ 35 (տես «Մշակ», 1875 թ., № 25) այնտեղի վորմնադիր, դարբին, մաշիկագործ վարպետների հեղինակությունն իր ժամանակին մեծ տարածում է ունեցել ամբողջ Հայաստանում: Տարբեր ժամանակներում դրանցից առանձնապես աչքի յեն ընկել Արդար Մանուկը, Անտիկենց Թաթոսը, ուստա Պապոն, Գրիգոր Ամարյանը, Հեքիմենց Սահակը և Աբրահամը, Պառավենց Սիմոնը, Գրիգոր Լոկյանը, Մնացական Թամբազյանը ևլն.:

\*\* Г у м р е ц и — „Николай Фадеевич Тигранов и музыка Востока“, Ленинград, 1927 г., стр. VIII (Մոտի հոդվածը):

յից ու Ալեքսանդրապոլից: Արհեստավորական արդյունաբերական ասպրանքների ուժեղ պահանջը հարկադրում էր արհեստավորական դասին լայնացնել տեղական արտադրութեան չափը: Այդ նույնը չենք կարող ասել մյուս քաղաքների մասին, առանց բացառութեան նույնիսկ նահանգային քաղաքները: Նշանցից յուրաքանչյուրի արհեստավորների թիվը վորոշվում է պայմանավորվում էր զուտ տեղական պահանջներով»\*:

«ՄՇԱԿ»-ի Ալեքսանդրապոլի թղթակից Ալկունին հաղորդում է, վոր տակավին 70-ական թվականների սկզբներին, տեղում նույնիսկ փորձ են անում վիճակային դավրոցին կից բաց անել արհեստադիտական մաս, անգամ փող են հավաքում այդ նպատակի համար, իսկ թե ինչ հետևանք է ունենում, այդ մասին թղթակիցը վոչինչ չի գրում\*\*:

Բավականաչափ զարգացած վիճակում է գտնվել նաև առևտուրը: 1860-ական թվականներին Ալեքսանդրապոլում առևտրով զբաղվողների թիվը յեղել է մոտ 670. զբանցից 300-ն զբաղվել են ձոթեղենի առևտրով և մի քանիսն ունեցել են 50—70 հազար ուրբուռ առևտուր:

1865 թ. Ալեքսպոլում հաշվում են 12 ոճառի գործարան, 9՝ ողիի, 5՝ ճարպամոմի, 5 ձիթհանք, 3 կաշեգործարան, 1 ալյուսի և 1 բրուտի արհեստանոց:

Առևտուրը կատարվում էր Թյուրքիայի, Պարսկաստանի, Թիֆլիսի, հետագայում՝ Մոսկվայի, Մարսելի և այլ քաղաքներին հետ:

Թիֆլիսի հետ ունեցած առևտրի մասին ճանապարհորդներին մեկը հետևյալն է գրում. — «Վրացոց սայլերը աղեյին կրում Ալեքսանդրապոլից, ուր մեծ թվով բերվում է Կողպա աղահանքից: Ղաղախ-Բորչալուի թարաքյամեքը յեղների վրա ձմերուկ բարձած տանում էյին Ալեքսանդրապոլ

\* Տես A. C. Егзапов, Կ. աս., էջ 60-61.

\*\* «Մշակ», 1875 թ., դեկտեմբերի 28.

ծախելու և նրա փոխանակ ալյուր կամ աղ գնելու: Հեռվից գալիս էյին նույնպես ուղտերի կարավանները, վորոնք վաճառականի ասպրանք բերելով, աղ են տանում Թիֆլիս: Այս բոլորը քաղաքի հյուսիսային ճանապարհից են ներս գնում»\*:

Հիշատակութեան արժանի յե «ԼՎԻ ԾԱՂԻԿ»-ի արտադրութեանը:

Անդրկովկասում այս բույսն առաջին անգամ ոգտագործվում է Ալեքսանդրապոլում՝ 1850-ական թվականներից սկզբսած: 1870-ական թվականներին արդեն իսկ հազարավոր փթերով հավաքվում, չորացվում և հատուկ ջրադացում ազացվելով, իբրև պարաշոկ, արտահանվում էր Ռուսաստան և արտասահման: Ալեքսանդրապոլից լվի ծաղկի առևտրով էյին զբաղվում Սիմյոն Թումանյանցը՝ Պետերբուրգում, Սարգիս Միրզոյանցը և նրա վորդի Միքայել Միրզոյանցը՝ Մոսկվայում: Վերջիններս հետագայում գրեթե մենաշնորհ իրավունք են ձեռք բերում, Մարսելի ցուցահանդեսում լվի ծաղկի արտադրութեան համար վոսկե մեդալ վաստակելով: Լվի ծաղկի (դեղի) արտադրութեանն ու առևտուրը լայն տարածում է ստանում և այն աստիճան շահաբեր է լինում, վոր առիթ է տալիս մի ամբողջ շարք կեղծումների, «ԱՐԱԳԱԾ» ընկերութեան մարկայի չարաշահութեան:

Արհեստների, առևտրի ու արդյունաբերութեան զարգացումն Ալեքսանդրապոլում, արագորեն փոխում են քաղաքի դեմքը: Գավառական այդ քաղաքը կապվում է Մոսկվայի, Պետերբուրգի, Թիֆլիսի և յեվրոպական քաղաքների հետ, իր նպատավոր աշխարհագրական դիրքի շնորհիվ հարևան Թյուրքիայի ու Պարսկաստանի շուկաների հետ:

Ալեքսանդրապոլը 60—70-ական թվականներին արդեն, կովկասյան մյուս քաղաքների հետ, մտնում է համաշխարհային ասպրանքաշրջանառութեան մեջ, հաղորդակից է դառ-

\* «Մեղու Հայաստանի», 1869 թ., № 21, հուլիսի 7. «Պոսլյա Ալեքսանդրապոլի շրջակայքում» անստորագիր հոդվածը. ընդմեջ իմն է, Վ. Պ.

նում կապիտալիստական նոր հարաբերություններին, Անգլիայի վերակառուցման քաղաքների հետ, իր համեստ մասնակցությունն ունենում Անգլիայի կապիտալիստական կոնյակաձ աբդուհազորձական հեղաշրջման սրբոցեախն:

Նման սրբոցեա, ինչպես հայանի յե, սկսվել էր նաև Հայաստանի մի քանի ուրիշ վայրերում: Պատմական այս ժամանակաշրջանում իբրև նոր յերևույթ, ինչպես Անգլիայի պատմության հետևանքում հանդես է գալիս նաև արտասահմանյան կապիտալը, վորը ուսական ու տեղական կապիտալի հետ սկսում է քայլ առ քայլ խարխուլել հին, նահապետական կյանքի հիմքերը:

Հայաստանում կապիտալներ ներգրվում են պլիստոգրամայես գյուղատնտեսության և լեռնարդյունաբերության մեջ: 1870-ական թվականներին ԳՈՒՈՄԸ և ԶԵԶՄԱՆԸ փորձում են Սարգսարազի տափաստանը՝ 75000 գեսյատին կոնցեսիայով վերցնել, վորոգել և մշակման տակ գնել, բայց իշխանությունից մերժում են ստանում: 1865 թ. գնեքալ կախանովին հաջողվում է Արագոյայանի տափաստանում 12,000 գեսյատին կոնցեսիայով վերցնել, իսկ 1874 թ. անց է կացվում ջրանցք, 200,000 ուրբ. արժողությամբ, ընդարձակվում է այդ կոնցեսիան՝ հասնելով մոտ 60 հազար գեսյատինի, 65 տարի ժամանակով:

1870-ական թվականներին ՇԱՆԳԻՐԵՅԸ կապալով վերցնում է 4000 գեսյատին Շարուր-Իսրայելյան գոբրում և 1874 թ. անցկացնում 30 կիլոմետր առու:

Հողի կոնցեսիաներ են վերցնում նաև ՇԵՐԵՄԵՏՅԵՎԸ, ԲՈՒՐԻՆՍԿԻՆ, ԶՈՒԲԿՈՎԸ, ԱՄԻՐԿԱՆՅԱՆԸ և ուրիշները: Այսպիսով, Հայաստանում նոր հողեր են գրվում մշակության տակ, ընդարձակվում է բամբակի տարածությունը: 1847 թ. Յերևանի նահանգում կովկասի գյուղատնտեսական ընկերության միջոցով ստացվել էր առաջին բամբակագործ մեքենան (ՋԻՆ): 1850-ական թվականներին Անգլիայի կապիտալի մոտ 80 տոկոսը (40 հազար փուլթ) տալիս էր Յերևանի նահանգը: 1861 թվին արտադրվում էր գտված

բամբակ 30 հազար փուլթ, 1862 թ.՝ 60 հազար փ., 1863 թ.՝ 150 հազար փ., 1870 թ.՝ 270 հազար փուլթ: Բամբակի ցանքների ընդհանուր տարածությունը հասնում է մոտ 23 հազար գեսյատինի:

Ավելի ուշ՝ խոշոր կապիտալներ են ներգրվում սպիրտի, խմիչքների և մանավանդ պղնձարդյունաբերության բնագավառում:

Հայաստանի, նույն թվում և Ալեքսանդրապոլի կապիտալիստական դարգացումը կատարվում էր միաժամանակ ի հաշիվ քաղաքային գեմոկրատիայի և գյուղացիության շահադորձման ու քայքայման:

Ոգավելով կառավարության քաղաքականությունից, առևտրա-վաշխատական կապիտալի ներկայացուցիչներն անողոքաբար հաշիվ էլին տեսնում համաբերությունների ու գյուղացիության հետ՝ իրենց զարգացման ճանապարհին ընկած խոչընդոտներն իսպառ լիկվելուց իրայի յենթարկելու համար:

Հեռուֆորմյան Անգլիայի պատմում դա համատարած մի յերևույթ էր, վորի սուր ծայրն ամենից առաջ ու ամենից ավելի դիպչում էր հենց աշխատավոր գյուղացիությանը և միջին ու ստորին արհեստավորությանը: Հայանի յե այս հողի վրա 1865 թվին ամռանը թիֆլիսում ծագած արհեստավորների հակա ցույցը: Ալեքսանդրապոլում, ճիշտ է, նման հրապարակային ցույցեր տեղի չեն ունենում, սակայն դժգոհությունները հատկապես քարգահների ու աշակերտների մոտ արտահայտվում են գովանափոխության, ազանգավորական շարժման գունավորումով: Այդորինակ դժգոհություններն Ալեքսանդրապոլում սկիզբ են առնում տակավին անցյալ դարի 50-ական և սուր բնույթ ստանում՝ 1860—70-ական թվականներին: Քաղաքից բացի, շարժումն ընդգրկում է նաև մոտիկ Աբխազի, Ղուլիջան, Իուզքյանդ, Ղուլթնի — Ղլախ, Յեղիանյար ու այլ գյուղերը: Բողոքականության խիստ զեմ են լինում վարպետները, և դա հասկանալի յե: Վարպետացուներն ու աշակերտներն ամենից առաջ հենց իրենց վարպետներն

ըն շահագործումից զրոյված եյին հարում բողոքականությանը: Առհասարակ դավանափոխությունը վոչ միայն արհեստավորները, այլև գյուղացիության շահագործվող մասի համար մի միջոց է յեղել հակադրվելու շահագործող տարրերին: Յեւ պատահական չէ, վոր 1860 թվականին Ալեքսանդրապոլի մի խումբ ուստարաշիններ կազմակերպված ձևով դիմում են առաջնորդական փոխանորդ Վարդան յեպիսկոպոսին և հաջողեցնում են բանտարկել տալ նրանցից 20 հոգու, վորոնցից 2-ը կանայք\*:

Ալեքսանդրապոլի շրջանի, մասնավորաբար քաղաքին մոտ գտնվող գյուղերի դավանափոխությունը, ինչպես քաղաքային արհեստավորության մեջ, ուներ իր տնտեսական արմատները:

Յարական կառավարության բուրժուա-կալվածատիրական ռեֆորմների հետևանքով հողազրկված ու քայքայված գյուղացիության համար ստեղծվել էր չափազանց ծանր կացութիւն: Առևտրա-վաշխառուական կապիտալը լրացնում էր պակասը՝ կեղեքելով ու պարտքի տակ դնելով նրանց:

Ալեքսանդրապոլին մոտիկ և քաղաքային կյանքի հետ անմիջական հարաբերությունների մեջ գտնվող գյուղացիներն ավելի շուտ են յենթարկվում այդ ազդեցությանը:

1875 թ. «ՄՇԱԿ» լրագրի Ալեքսանդրապոլի թղթակիցներից մեկը, Արսեն Կրիտյանի ընկերության անդամ Ա. Աֆրիկյանը, իր «Մի քանի խոսք Ալեքսանդրապոլի վաճառականներին ներկա գրության վրա» հոդվածում, նկարագրելով, թե ինչպես առևտրականները մուտք են գործել շրջակա գյուղերը և ազահարար թալանում են գյուղացիներին, — գրում է. «Յո՛ւրաքանչյուր գյուղում նստած է մի մանրավաճառ ապրանք

\* Հ. Դուկասյանց — «Բողոքականություն Կովկասու հայոց մեջ» (պատմական նյութեր), 1886 թ., Թիֆլիս:

ծախոյ, շատ անգամ պատահում է, վոր յերկուս և յերեքն են ծախում մի գյուղի միջում, վորոնք տղբուկի նման ծծում են գյուղացիներին ոգուտի այն մնացորդները, վորոնք քաղաքի վաճառականները վորպես թե պետք է տեսնեյին: Մինչև անգամ գյուղացիներից շատերը հրապուրվելով չգիտես ինչից, պարտապում են այս տեսակ առևտրով, թողնելով ձեռքից յերկրագործության պես ազնիվ աբհեստը\*:

Ալեքսանդրապոլից ուսուցիչ ՄԱԿԱՐ ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆԸ գրում է, վոր գյուղում վաշխառուները ցորենի սոմարը (16—18 փութ) գնում են 5-6 մանեթով, իսկ իրենք վաճառում են 25 մանեթով: Կան մարդիկ, — ասում է նա, — վորոնք մինչև յերեք հազար սոմար ցորեն ունենն\*\*:

«Ալեքսանդրապոլի վաճառականները» հոդվածում Կ. ՄԱՏԻՆՅԱՆԸ խոսելով այն մասին, վոր Ալեքսպոլի վաճառականներն ապրանքներ են բերում Տաճկաստանից, Պարսկաստանից, Թիֆլիսից, Մոսկվայից, Մարսելից, Մակաբիայից և վաճառում տասին յերեք, չորս և յերեմն առավել աշխատանքով, գրում է, վոր նրանք «խեղճ գյուղացիներին առան ըստ իր իրենց բուրմեջ և շինեցին նրանց սարուկներ... նրանք (վաճառականները, Վ. Պ.) միայն տղբուկի նման ծծում են խեղճ գյուղացիներին արյունը»\*\*\*:

Նույն հեղինակը մի այլ տեղ գրում է. —

«Ալեքսանդրապոլը հաղիվ է տեսած 40 տարվա շրջանում յեղու կամ յերեք թանգություններ: Առաջինները՝ կարելի չէ ասել մորեխի, պատերազմի կամ վո-

\* «Մշակ», 1875 թ., № 24, հունիսի 19. ընդգծումն իմն է, Վ. Պ.:  
\*\* «Մեղու Հայաստանի», 1874 թ., № 24, հունիսի 22. ընդգծումն իմն է, Վ. Պ.:  
\*\*\* «Մեղու Հայաստանի», 1874 թ., № 5, փետրվարի 2, ընդգծումն իմն է, Վ. Պ.:

ընդհանուր պատահումները և պատահած, իսկ այժմյան թանգությունը վոչնչից չէ, յեթե վոչ մերաքաղաքացի արծաթասեր մի քանի անհատներին, վորովհետև առատ ժամանակ դիզեցին շտեմարաններում, համարյա յուրաքանչյուրի մեջ հազար, յերկու հազար և մինչև անգամ հինգ հազար սոմար (ամեն մի սոմարը 20 ռուսական փութ) ցորյան և այգուխոտի թանգության գլխավոր պատճառը յեղան»\* :

Հեղինակը կանգ առնելով գների բարձրացման վրա, գրում է՝ ալյուրը, վոր միշտ եժան է յեղել և փութը վաճառուի է 30—40 կոպեկով, այժմ վաճառվում է 1. ո. 20 կոպ.։ Ուրիշ աղբյուրներից մենք տեղեկանում ենք, վոր 1873 թ. Ալեքսանդրապոլում ընտիր տեսակի ալյուրի փութը վաճառվել է 1 ո. 50 կոպ., միջին տեսակը՝ 1 ո. 20 կոպ., ցածր տեսակը՝ 1 ուրբի\*\* :

Ալեքսանդրապոլի առևտրա-վաշխառուական տարբերը, այգուխոտի, կատարում է յին սղգային այն թալանչիներին գերը, վորոնց մասին տակավին «Լեվոնի վշտի» հեղինակն ասել եր՝

Անառակության ճանապարհներով,  
Խեղճ չքավորի հացը կտրելով,  
Գիլում եք առատ արծաթի թումբեր,  
Յեվ ինչո՞ւ համար, աչքածակ գայլեր։\*\*\*

Վերջապես գյուղացիների շահագործման ու կեղեքման մասին հետաքրքիր տեղեկություններ է տալիս տեղական բարբառով գրված «Գյուղացու» հոդվածը.

«Եղավ, վոր կալոցի վախտը եկավ, գեղացին քըրտինք թափե կը, կաշխատի կը, իշու պես դատի կը, թե ձեռը բանըմ ընկնի, մեկ էլ տեսնիս պարտքնտերնիքը գլխուն թոփ կեղնին կը, վերը բաղազն է, վերը ուրիշ մարդ է, ցորենը չափին կը, ինչքան, վոր հախը կենե կը,

\* «Արարատ», 1870 թ. մայիս. հջ 37:

\*\* «Մեղու Հայաստանի», 1873 թ., № 2, հունվարի 20.:

\*\*\* Սմբատայ Շահազիզյան «Լեվոնի վշտը», 1865 թ., էջ 96, Մոսկվա:

վերցնին կը, լցնին կը մեշոկներու մեջ, թե վոր իրանց հախը չըցուավ, գեղացու թեյամասու կը տանին գանգատ կենին կը, գեղի քեհին ու յեղը, մալը ծախել կուտան կը: Փողը գեղացու հալին կուգա, նոր Փայմի կը իշությունիցը, թե ինչի յես եսքան խաբուր էյի, հմի վախտը անցիք ե»\* :

Այս մի քանի որինակներն արդեն իսկ բավարար պատկերացում են տալիս Ալեքսանդրապոլի շրջանի գյուղացիների շահագործման ու քայքայման, նրանց ծանր վիճակի մասին:

Այս բոլորից հետո, բնական է, վոր գյուղացիությունը, արհեստավորությունը և առհասարակ տեղի դեմոկրատական տարրը պետք է շարունակեր մնալ անտիցարական բանակում, ցարիզմի սոցիալական հենարանը հանդիսացող ազգային բուրժուա-կալվածատիրական դասակարգերի թշնամի բանակում և իր քաղաքական հաստունության մակարդակին համապատասխան, կանգներ տեղում խմորվող հակացարական դեմոկրատական շարժման թիկունքում:

\* \* \*

Հետաքրքիր եվոլուցիա յե ունեցել նաև քաղաքական—մտավոր կյանքն Ալեքսանդրապոլում: Նա միաձուլյ միորինակ ու միտպաղաղ ընթացք չի ունեցել: Ալեքսանդրապոլի դասային ու դասակարգային տրոհվածությունը, գաղթականության տարբեր հատվածների տարբեր կուլտուրական մակարդակը հիմնականում իր արտահայտությունն է գտել քաղաքի հասարակական—քաղաքական, մտավոր—կուլտուրական կյանքի բոլոր բնագավառներում:

Տաճկահայ գաղթականությունը, վորի հետ ցարական վոստիկանները վարվում էյին իբրև վայրի կենդանիների հետ, իրականում իր կուլտուրայով շատ ավելի բարձր երկանգնած տեղացիներից և նույնիսկ իրենցից: Այդ գաղթականության մասնավորապես երդրումի հատվածը, յերկար

\* «Մեղու Հայաստանի», 1874 թ., № 4, հունվարի 26:

տարիներ շփվելով յեվոպական առևտրի հետ, այս ու այն չափով կրել եր նրա ազդեցութիւնը, իր մեջ ունեւր կրթված, հասարակական-մտավոր ընդունակութիւններով ոժտված անձնավորութիւններ:

Ներմուծված այս տվյալներն ահա, չէյին կարող բարենպաստ ազդեցութիւն չունենալ Ալեքսանդրապոլի քաղաքային կյանքի հետագա զարգացման վրա: Բայց այդ Ալեքսանդրապոլի մտավոր-կուլտուրական զարգացման միակ խթանը չէր:

Տակավին 30—40-ական թվականներից գործող խալիֆայական մասնավոր դպրոցներում ուսած յերիտասարդութիւնը ևս կանգնում է քաղաքի մտավոր-կուլտուրական գործի գլուխը, կապվում է ժամանակակից գրականութեան, մամուլի հետ, հաղորդակից է դառնում ուստահայ և արևմտահայ կյանքում ազգային վերածննդի ուղղութեամբ սկսված շարժմանը և այլն: Ի դեպ, այդպիսի դպրոցներն Ալեքսանդրապոլում քիչ չեն յեղել: 1869 թվին Ալեքսանդրապոլ այցելած Ս. Մարությանը գրում է. «Մի բան Ալեքսանդրապոլի մեջ իմ վրա գեշ ազդեցութիւն ունեցավ, այն է՝ մասնավոր դպրոցաց քաղմութիւնը»<sup>\*</sup>:

1874 թվին, «ՄՇԱԿ»-ի թղթակիցը, մասնավոր դպրոցների թիւին Ալեքսանդրապոլում հաշվում է մոտ 13, իսկ աշակերտներին՝ 800—900 հոգի<sup>\*\*</sup>:

Դպրոցական գործն Ալեքսանդրապոլում իր ծաղկման շրջանն է ապրում 60—70-ական թվականներին: Այդ տարիներին, քաղաքի առևտրա-արդյունաբերական կյանքի աշխտեացման հետ, նոր թափ է ստանում և դպրոցական գործը: Խալիֆայական, մասնավոր դպրոցների կողքին հանդես են գալիս նոր, անհամեմատ ավելի կազմակերպված ու առաջավոր մանկավարժական սիստեմով տարվող դպրոցներ:

<sup>\*</sup> «Այսրաս», 1869 թ., հոկտեմբեր. Ս. Մարությանի «Մի բան խոսք Ալեքսանդրապոլի վրա» հոդվածը. ընդգծումն իմն է. Վ. Պ.:

<sup>\*\*</sup> «ՄՇԱԿ», 1874 թ., № 22, հունիսի 6:

Կենդանութիւնն է ստանում վիճակային ս. փրկչի դպրոցը, վորը գործում էր դեռևս 1839 թվականից սկսած:

ՀՄԽՀ Պետական Կենտրոնական արխիւում պահվող փրկչի դպրոցի վոշ լրիվ գործերից յերևում է, վոր 1862—63 ուսումնական տարում դպրոցն ունեցել է յերեք դասարան՝ 7 ուսուցչով, և ավանդվել է 11 առարկա:

1869 թվականին 3 հիմնական դասարաններից զատ, բացվում է 2 նախապատրաստական դասարան ևս, 98 աշակերտներով: Այդ տարում սովորողների թիւը հասնում է 160 հոգու, դասավանդվող առարկաներին՝ 14. ավելանում է նաև ուսուցիչների թիւը:

1873—74 ուսումնական տարում դասարանների թիւը հասնում է 6-ի (3 հիմնական, 3 նախապատրաստական), ուսուցիչներին՝ 14, աշակերտներին՝ 260:

1875—76-ին դասարանների թիւը հասնում է 7-ի (3 նախապատրաստական, 4 հիմնական), աշակերտներին՝ 284. դասավանդվող առարկաներն են՝ կրոն, պատմութիւն՝ յեկեղեցական, ընդհանուր և հայոց, լեզուներ՝ հայոց, ուսսաց և գերմաներեն (Ս. Բեկնազարյանի և Ամիրխանյանի հեռանալուց հետո գերմաներենը հանվում է), աշխարհագրութիւն՝ ընդհանուր և Ռուսաստանի, մաթեմատիկա՝ թվաբանութիւն, յերկրաչափութիւն և հանրահաշիւ, ֆիզիկա, բնագիտութիւն, վայելչագրութիւն՝ հայոց և ուսսաց, նկարչութիւն, գծագրութիւն և յերգ:

Տարեցտարի աճում է նաև դպրոցի յեկամուտը:

1863 թ. դպրոցը մուտք է ունենում 3199 ու 51 կ., 1864 թ.՝ 3314 ու 48 կուլ., 1865 թ.՝ 4273 ու., 1875 թվին դրամագլուխը հասնում է 17.630 ու. 59 կուպեկի, իսկ 1876 թ.՝ 15.197 ու. 23 կ.\*:

Այսպիսով, 1860—70-ական թվականներին 10—15 տարվա ընթացքում Ալեքսանդրապոլի վիճակային դպրոցը թե ֆինանսապես և թե աշակերտական, ուսուչական կազմով զգալի չափով աճում է:

<sup>\*</sup> Արսեն Դլտչյան, «Համառոտ պատմութիւն Ալեքսանդրապոլի հայոց հոգևոր վիճակային դպրոցի (1840—1912)», Ալ-պոլ, 1912 թ.:

1871 թ. սկզբներից Ղահրաման Արղությանի կտակած 40.000 գումարով բացվում է Արղության որիորդաց դպրոցը. հետագայում բացվում է նաև Սահակ-Անուշյան որիորդաց ձրիավարժ դպրոցը: Բացի այս, քաղաքում վաղուց գործում էր պետ. գավառական դպրոցը, իսկ շրջանում գործում էյին Հառիճո վանքի դպրոցը՝ 50-ական թվականներից, ինչպես և 20-ից ավելի ծխական դպրոցներ՝ Թովաուլի, Ղոնաղոան, Զաջուռ, Ղանլիջա, Դալհաուլի, Բայխնդուր, Սովանվերդի, Սոնգյուուլի, Մոլլագյոքչա, Եգյանլար, Իմրխան, մեծ Արխովալի, Հոռոմ, Ղազանչի, Խլի Ղարաքիլիսա և այլ գյուղերում\*:

Ալեքսանդրապոլի դպրոցական գործն առանձնապես բարեկարգ դրության է հասնում 1871 թ. հետո, յերբ վիճակային դպրոցի տեսուչ է նշանակվում ՍՍՐԳԻՍ ԲԵԿՆԱԶՍՐՅԱՆԸ, իսկ Արղության որիորդաց դպրոցում՝ ՂԱԶՍՐՈՍ ԱՂԱՅԱՆԸ:

Սարգիս Բեկնազարյանը, վորն ավարտել էր Շվեյցարիայի Կյուսնախտ (Küssnacht) քաղաքի ուսուցչական սեմինարիան, իր տեսչության շրջանում մի ամբողջ շարք բարենորոգումներ է մտցնում Ալեքսանդրապոլի դպրոցական կյանքում: Նա յեվրոպական մանկավարժությունից ստացած իր գիտելիքները տաղանդավոր կերպով համադրում է ազգային կրթության պահանջների հետ: Դեռ տեսչական պաշտոնը չստանձնած, նա ձեռնամուխ է լինում դասերի կարգավորմանը, ուսուցչության և աշակերտության հաճախումների, պարապմունքների կանոնավորմանն ու դպրոցի կահավորմանը:

1871 թ. փետրվարի 21-ին նա հոգաբարձության քըննությանն է ներկայացնում իր կողմից մշակված դպրոցի նոր կանոնադրությունը՝ «Ա.Լ.ԲՍԱՆԴՐԱՊՈՒԻ ՀԱՅՈՅ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐՈՅԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ» վերտա-

\* «Մեղու Հայաստանի», 1872 թ., № 12, մայիս 20, Սիմյոն Դարբիսյանի [Պետրոս Հայկազունու] «Նամակ Ալեքսանդրապոլից» հոդվածը:

ուությամբ: Այդտեղ նա ի միջի այլոց դպրոցի նպատակը հետևյալ կերպ է ձևակերպում.

«Ամենայն գործունեյություն պետք է ունենա իր մի վորոշ նպատակը, ուսումնա ազգային դպրոցաց գործունեյություն լինելով՝ ևս պետք է վորոշ նպատակ ունենա: Ալեքսանդրապոլու ազգային հոգևոր դպրոցի նպատակն է՝ հայ ազգի արու գավախները անխտիր ընդունելով՝ դաստիարակել նոցա մտավոր, ֆիզիկական և բարոյական կարողությունները, վորպեսզի նոքա բնավորությամբ բարոյական, մտքով գործունյա և քաղաքականապես պիտանի անդամք լինեն ազգության և մարդկության»:

Խոսելով ավանդիլիք առարկաների մասին, վորոնցից մի քանիսը (գերմաներեն, բնական պատմություն, յերկրաչափություն, տեղագրություն, մարմնամարզություն և այլն) նրա ջանքերով առաջին անգամ են մտցվում դպրոցական ծրագրի մեջ, նա գրում է.—

«Հիշյալ առարկաները կմատակարարվեն համաձայն ընդհանուր մանկավարժական որինաց, համաձայն մարդկային առողջ դատողության, ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎՈՎ, չսայելով, վոր մենք կարևորություն ունինք ոտար լեզու ևս մեզ սեփականելու, վորպեսզի իրական կյանքի մեջ ոգուտ քաղել կարողանանք, սակայն առաջ քան այս ոգուտներ քաղելը, վորոնք տակավին մեր զրականության մեջ կպակասին, պետք էնք մեր մանուկներու մտքերը ամենեն առաջ իրենց մայրենի խոսքովը զարգացնել, վորովհետև ինչ վոր հետո սովորելու լինեն ոտար խոսքով, պիտի իրենց սեփականի հետ համեմատելով սովորեն, վոր կարողանան և ձիշտ զաղափար ստանան ոտարինի վրայով: Բացի մեր մայրենի լեզուն, յեթե մեր դպրոցի մեջ մի վորեկ ոտար լեզու սովորելու ցանկություն և կարևորություն լինի, հայտնի բան է, պետք է նախ և առաջ ընարվի այն լեզուն, վորին իրական կյանքի մեջ առ-

առավելին կ'կարեւորենք (?), ինչպէս ուսւ լեզվի կարեւորութիւնն ե մեզ՝ ուսարնակ հայերիս համար»\*:

Բեկնադարյանը, սակայն, վոչ միայն իբրև տեսուչ ջանք չի խնայում բարեկարգելու Ալեքսանդրապոլի ազգային կըրթութեան, դպրոցները գործը, այլև փայլում է իբրև մասնագետ մանկավարժ\*\* , իբրև ուսուցիչ չդաստիարակ:\*\*\* Իր դպրոցում նա մտցնում է դասավանդման համակենտրոնացած ձևը, վորը «Մեղու Հայաստանի» թերթում Միմյոն Գարբինյան ծածկանվան տակ հանդես յեկած Արսեն Կրիսյանի Ընկերութեան անդամ Պետրոս Հայկազունու համարագումները համաձայն, մինչ այդ չի յեղել հայկական վոչ մի դպրոցում, ներառյալ և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: «Բ ո լ ո Ր հ ա յ ու ս ու մ ն ա բ ա ն ն ե Ր ի մ է ջ, — գրում է Հայկազունին, — Ալեքսանդրապոլում դպրոցը այս կողմից առաջինն է այժմ»\*\*\*\*:

Ս. Բեկնադարյանը իբրև ուսուցիչ, պատկանելի և մերթ նաև յերկյուղալի յեր աշակեր-

\* ՀՄՍՀ Պետ. արխիվ. Ալեքսանդրապոլի քաղ. վոստիկ. վարչութիւն:

\*\* Տես Ղազարոս Աղայանի «Իմ կյանքի գլխավոր դեպքերը», Թիֆլիս, 1893 թ., էջ 140:

\*\*\* Բեկնադարյանի մանկավարժական գործունեութեան մասին միանդամայն դրակներեն և արտահայտում նաև Բաֆֆին: «Ճանապարհորդութիւն Թիֆլիսից մինչև Ադուլիս» հոդվածում նա գրում է.— «Յերեանում յերեք ուր մնալով յես միջոց ունեցաւ տեսնել տեղացի որիորդաց և աղայոց դպրոցները, վերջինը յես տեսել էյի մի քանի տարի առաջ ևս, բայց ամենաթշուառ վիճակի մէջ: Իսկ այժմ պ. Բեկնադարյանցի տեսչութեան որոք բավական բարեկարգվել է նաև ավելի առաջադիմութեան հույս է տալիս, մանավանդ յերբ պ. Բեկնադարյանցը ռնեցավ պ. Աղայանցի նման մի լավ պաշտոնակից: Յես ներկա գտնվեցաւ պ. Բեկնադարյանցի տարրական ֆիզիկայի և պ. Աղայանցի հայ պատմութեան դասերին, յերկուսն ևլ գոհացուցիչ գտաւ. Յերեանի նման անտարբեր և անուսումնասեր հասարակութեան մէջ դպրոցի վիճակը բավական բարձրացել է»: (Տես «Փարս», 1877—78 թ., № 3, էջ 181—214):

\*\*\*\* «Մեղու Հայաստանի», 1872 թ., № 12, մայիս 20. Ընդգծումն իմն է. Վ. Պ.:

տաց համար,— գրում է Ղազարոս Աղայանը: Ուսուցանում եր, վորպէս արվեստ, կամ ինչպէս կասեն՝ արվեստի բոլոր կանոնները համեմատ»\*:

Բեկնադարյանի, ինչպէս և բժշկապետ Ավետիք Բաբայանի ու Ղազարոս Աղայանի ջանքերով Ալեքսանդրապոլի դպրոցները շուրջն են համախմբվում կովկասահայ դպրոցական գործի մեջ մինչ այդ և հետագայում հայտնի այնպիսի մանկավարժներ, հասարակական-կուլտուրական գործիչներ, ինչպիսիք են՝ ՀԱՅՐԱՊԵՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԸ, բժ. ԳԱՐՐԻՆԸ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ (Բաջբերունի), ԱՐԱԲԱՉՅԱՆՑ յեղաբաները, ՀԱՅԿ ՄԱՏԱԿՅԱՆԸ, ԱՂԱԲԵԿ ԱՐՇԱԿՈՒՆԻՆ, ՄԱԿԱՐ ՏԵՐ-ՍԱՐԳՅԱՆԸ, ԱԲԳԱՐ ԳՈՒԼՈՒՄՅԱՆԸ և այլն:

Մանկավարժական այսորինակ կարգերի մի քանի տարվա գործունեութիւնն Ալեքսանդրապոլում, նոր բարձրութեան է հասցնում դպրոցական-կուլտուրական գործը, բեղմնավորում է յերիտասարդութեան սերն ու ձգտումը դեպի կըրթութիւնն ու դաստիարակութիւնը: Առանց չափազանցութեան կարելի յէ ասել, վոր 70-ական թվականներին Ալեքսանդրապոլն այս տեսակետից ևս գերադանցում է Յերեանից: Իսկ յեթէ համատարու լինենք Ղազարոս Աղայանի պնդումներին, ապա պետք է ասենք, վոր «Ամբողջ կովկասում վոչ մի դպրոց չկար, վոր Ալեքսանդրապոլի դպրոցները բարեկարգութիւնն ունենանար: Մանկավարժական ամեն տեսակ խնդիրներն ալ տեղ սկսեցին մշակվել, ամեն տեսակ հոգվածներն ալ տեղ սկսեցին գրվել, մանկավարժական ամեն մի խելացի պահանջներն ալ տեղ լիարարեցին»\*:

Դպրոցները ու դասավանդման կարգավորման հետ միաժամանակ զբվում է նաև դասազրքերի խնդիրը: Չնայած

\* Ղազարոս Աղայան, ն. տ., էջ 148, ընդգծումն իմն է, Վ. Պ.:  
\*\* Ղազարոս Աղայան, ն. տ., էջ 141, ընդգծումն իմն է, Վ. Պ.:

վոր ուսուցիչներին Դազարոս Աղայանը և Հայրապետ Դու-  
կասյանը դասագրքեր կազմողներ էլին և ունեյին հրատա-  
րակած դասագրքեր, նրանք տեղում հենց դասագրքեր էլին  
կազմում\*, այնուամենայնիվ դասագրքերի պահանջը Ալեք-  
սանդրապուլից մամուլի նյութ է դառնում և առհասարակ  
հայ դպրոցների դասագրքերի հարցն է բարձրացվում:

«Ամեն մի հայի, կամ հայ ուսուսնարանաց հոգաբար-  
ձուաց և ուսուցչաց քաջ հայտնի յե,—գրում է Ալեք-  
սանդրապուլից Տ. Ս.-ն,—վոր մեր ուսուսնարաններն  
այժմս մեծ կարոտություն են դգում դասագրքերի կող-  
մանե, և թե մինչ վոր աստիճան դժբաղդ ու անմխիթար  
է մանուկ հայ աշակերտը՝ չունենալով յուր ձեռին ու-  
սանելի առարկաների համար հարմարավոր դասա-  
գրքեր, այդ ևս շատ լավ գիտեն ամենքը... Ինչո՞ւ  
արդոք մենք ձեռքերս պիտի կառկառենք մինչև վե-  
նետիկ, Փարիզ, Կ. Պոլիս, Նյու-Յորք, Ֆեոդոսիա և այլ  
տեղեր, մինչդեռ մենք շատ մոտիկ տեղ ունենք ձեռք  
ձգելու. ձգենք մեր ձեռքերը դեպի ս. Եջմիածին և  
այնտեղից պահանջենք ու ձեռք բերենք հիշյալ մատե-  
նագրությունքը, վոր, ինչպես հայտնի յե, ունի ընդար-  
ձակ տպարան: Մենք կարծում ենք, վոր Եջմիածնին մի  
մեծ պարծանք չէ ճաշոց տպել և 100—150 մանեթով

\* Դ. Աղայանը նշված աշխատության մեջ այդ մասին հետևյալն  
է գրում. «Մասնավորապես գալով ինձ, պետք է սասեմ, վոր իմ գործունե-  
յությունը՝ թե գրական և թե ուսուցչական՝ այստեղ իմ սպասածից  
ավելի բեղմնավոր յեղավ: Լինելով ըստ ամենայնի անկախ, գործում էլի  
իմ ուղածիս պես և ուրիշներին էլ վարակում իմ որինակով: Այստեղ  
սկսեցի մշակել իմ նորագույն մեթոդը, թե ինչպես պետք է ուսուցա-  
նել մայրենի լեզուն: Նախ ցույց տվի գործով՝ դասավանդությամբ, և  
հետո՝ իմբի ցանկությամբ՝ գրեցի հրահանգը, թե ինչպես պետք է ու-  
սուցանել հետո էլ կազմեցի դասագրքը: Առաջին անգամ մեր գրերը  
յես լուծեցի արմատական տարբերի և գրել տվի տակտով: Այստեղ ա-  
ռաջին անգամը յես դաս տվի Ծխական դպրոցում, «Բացատրություն  
ընտելյան յերևութիւնների» և «Տարրական Ֆիզիկա», ըստ Կրկուգերի  
Այս յերկու աշխատություններն էլ յես թարգմանեցի, վորոնցից մեկը

վաճառել աղքատ գյուղերից վերա և այդպիսով շատե-  
րին խրանեցնել ու կեղեքել»\*:

Ինորոշ է, վոր Ալեքսանդրապուլի դպրոցական գործի  
այսորինակ անհամեմատ բարեկարգ վիճակն անգամ չի բա-  
վարարում ժամանակակից ավելի առաջավոր ու արմատա-  
կան մտածողներին: Նրանք քննադատում, անբավարար են  
համարում ձեռք բերված նվաճումները, ձգտում են ավելի  
քան ծավալել դպրոցական ցանցը և նամանավանդ ուժեղա-  
ցնել մայրենի լեզվի ուսուցումը: Այդ մարդկանցից ահա,  
Ալեքսանդրապուլի բնակիչ՝ հանդուգն ու աշխատասեր ՊԵՏ-  
ՐՈՍ ՀԱՅԿԱՍՏՈՒՆԻՆ, ԱՐՄԵՆ ԿՐԻՏՅԱՆԻ Ընկերության ան-  
դամ, նրա ամենամոտիկ գործակիցը, 1872 թ. ապրիլի 25-ին  
հատուկ առաջարկություն է ներկայացնում տեղի հոգաբար-  
ձության՝ թույլ տալու իրեն, Դազարոս Աղայանի ոգնու-  
թյամբ, բաց անել ծխական նոր ուսուսնարան: Իր այս ձեռ-  
նարկումը Հայկազունին պատճառաբանում է հետևյալ կերպ.

«Տեսնելով մեր քաղաքի ծխական դպրոցների ցա-  
վալի վիճակը և զգալով դպրոցի հարկավորությունը,  
մանավանդ աչքի առաջ ունենալով նոցա անբարեկար-  
գությունը և խոչընդոտականությունը Ձեր հովանավո-  
րության տակ գանված դպրոցի, կամենում եմ պ. Դա-  
զարոս Աղայանի ոգնությամբ բաց անել մի նոր ծխա-

տպից «Արարատ»-ում, վորից արտաստվեց հոգուտ Սահակ անուշյան  
ուսուսնարանի, մյուսը՝ Ֆիզիկա՝ տպագրվեց Պետերբուրգի հայ ուսա-  
նողների հաշվով: Այստեղ գրեցի բազմաթիվ հոդվածներ, թե մանկա-  
վարժական և թե քննադատական: Այստեղ գրեցի և հայկական հըն-  
չյունների մասին, վորով Այվազովսկուն գրգռեցի իմ դեմ, ինչպես և  
Պարասանյանին՝ սրա «Մայրենի լեզվի քերականությունը» քննադա-  
տելու համար: Այստեղ գրեցի և իմ «Յերկու բույրը»: (Եջ 141—142):

1873 թ. սեպտեմբերի 20-ին մանկավարժական ժողովը՝ մասնակ-  
ցությամբ Ս. Բեգնազարյանի, Մ. Արաբաջյանի Դ. Աղայանի, Ա. Մ.  
Պարոնակյանի և Ա. Արշակունու, քննության է առնում Հայրապետ  
Դուկասյանի կազմած աշխարհաբար «Փունջ» դասագրքը և վորոշում է  
հոգաբարձության միջոցով շտապ հրատարակության տալ:

\* «Մեզու Հայաստանի», 1875 թ., № 45, նոյեմբերի 22, Տ. Ս.-ի թղթ-  
թակցությունն Ալեքսանդրապուլից:

կան ուսումնարանն՝ «նախակրթարան» անունով, վորի կանոններն ահա հանձնելով սույն առաջարկութեան հետ միասին, ինչորում եմ մեծապատիվ հոգաբարձութեանդ քննել և Ձեր բարեհաճությունը հայտնել ինձ: Ալեքսանդրապոլցի ՊԵՏՐՈՍ ՀԱՅԿԱՉՈՒՆԻ»:

Ըստ ներկայացված կանոնադրութեան, աշակերտների թիվը 40-ից ավելի չպետք է լիներ և, վոր զլրավորն է, կեսորյա բաժնում աշակերտները պետք է լավ վարժվեյին մայրենի լեզվի մեջ:

Մենք չզիտենք՝ արդյո՞ք Հայկազունու այս ձեռնարկումը կապվում էր նրա անդամակցած Ընկերութեան նպատակների հետ, թե վոչ, բայց և այնպես անհավանական չէ յենթադրել, վոր այդ նոր ուսումնարանը վոչ միայն լինելու յեր «նոր հաղթություն խավարի դեմ», այլև գործադաշտ Ա. Կրիտյանի, Պ. Հայկազունու և Ընկերութեան համար:

Ալեքսանդրապոլի դպրոցական—կրթական գործի զարգացման հետ միաժամանակ կենդանություն է ստանում նաև ազգային թատրոնը:

Ժամանանակիցների հիշողությունները և մեզ հասած հատ ու կենտ դոկումենտները վկայում են, վոր առհասարակ Ալեքսանդրապոլի բնակիչները յեղել են թատրոնասեր և ինքնագործ:

1860-ական թվականներին Արարաջյանի դպրոցում առաջին անգամ խաղացվում է «ՇՈՒՇԱՆԻԿ» ազգային վողբերգությունը: Բնորոշ է, վոր Շուշանիկի դերը կատարելու համար կին չգտնելով, այդ դերը կատարել է տղամարդ՝ կնոջ շորեր հագած և կնոջ (կեղծած) ձայնով:

Յերևանում, որինակ, յերբ 1869 թ. սկզբներին մի խումբ ուսուցիչներ՝ ՍԻՄԵՈՆ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ, ՆԱՀԱՊԵՏ ՏԵՐ-ՀՈՎԱԿԻՄՅԱՆ և ՆԱՀԱՊԵՏ ԱՔԱՆԵՍՅԱՆ (Յերևանի որիորդաց դպրոցի ուսուցիչ և կառավարիչ) թեմական դպրոցի դահլիճում, Թիֆլիսեցի ՍՈՂՈՄՈՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲԱ-ՄԵԼԻԻՔՅԱՆԻ ղեկավարութեամբ խաղում են «Շուշանիկ» վողբերգությունը, առաջին անգամ Յերևանում Շուշա-

նիկի դերը կատարող որիորդ ՅԵՂԻՍԱՊԵՏ ՂՈՐՀԱՆՅԱՆԸ հասարակական—մամուլի քննութեան առարկա յե դառնում: Իր ժամանակի համար, յերբ կինը հասարակական կյանքից դուրս էր մնացել, ի հարկե, այդ տարրինակ չէ:

1870-ական թվականների սկզբներից արդեն Ալեքսանդրապոլի դպրոցին կից կազմակերպվում է ուսուցչական-թատրոնական խումբ: Խմբի աշխատանքներին մասնակցում են նաև դպրոցի բարձր դասաբանի աշակերտները, ինչպես նաև Կրիտյանի Ընկերութեան անդամներից մի քանիսը (Կ. ՈՀԱՆՁԱՆՅԱՆ և ուրիշներ):

«ՇՈՒՇԱՆԻԿ», «ՅԵՐՎԱՆԻ Բ.», «ՍՍՄՎԵԼ» և նման ազգային գործերի բեմադրությունները, ինչպես նաև ժամանակակից նշանավոր աշուղների ազգային յերգերը, իր ժամանակին ավելի յեն բորբոքում ազգային կրքերը, վորոնք Ալեքսանդրապոլում առանց այդ ել առատ հող ունեյին, շնորհիվ նրա հայատարը և տաճկահայ ու պարսկահայ գաղթականներով բնակեցված լինելուն:

1871 թ. Կարապետ Մատինյանն իր «ԲԱՆԱՍՏԵՂՉ ՅԵՎ ՀՅՈՒՍՎԱԾՔ ԶԻՎԱՆԻ» հոդվածում հետևյալն է գրում.

«Ալեքսանդրապոլը, յերբ ունեցել է իր մեջ թատրոն (շնորհիվ հարգոյապատիվ Սյունեցի Ալեքսանդրի Մելիք Հայկաղյան) և յերբ թնդացել է թատրոնական բեմի վրա ազգային յերգերի արձագանքը, հենց այն որից Ալեքսանդրապոլի աշուղները սկսել են յերգել հայերեն, վորովհետև հասարակությունն այդ մասին ավելի սեր և համակրություն է ցույց տալի»:<sup>\*</sup> Խոսելով աշուղների մասին, նա հիշում է մեր տաղանդավոր և անուն հանած աշուղ Զիվանուն, վորն իր խրմբով յերգելիս է յեղել Կարապետ Տարոյանի սրճաբանում և վորի շնորհիվ ել սրճաբանը միշտ լիքն է յեղել հասարակութեամբ. հիշում է Ալմոյանի սրճաբանում յերգող աշուղ Հովհաննեսին (Խըրթըզ մականունով), ուրիշ սրճաբաններում

<sup>\*</sup> «Արարտ», 1871 թ., նոյեմբեր, էջ 315:

յերգող աշուղներ՝ Թաթոսին (Հավեսի), Մարուլին և այլն\*։  
Թատրոնը՝ իր ժամանակի առումով, աշուղական տա-  
րածված ու սիրված ազգային և ժողովրդական յերգն ու  
յերաժշտությունը չեյին կարող իրենց զրոշմը չհնել ժամա-  
նակի հասարակական-քաղաքական կյանքի վրա,

Վերջապես ուշագրավ և այն հանգամանքը, վոր 60—  
70-ական թվականներին կովկասահայ մամուլում Ալեքսան-  
դրապոլից հանդես են գալիս նոր թղթակիցներ, բանաս-  
տեղծներ, ֆելյետոնիստներ և առհասարակ գիտությամբ ու  
գրականությամբ զբաղվող մարդիկ, վորոնց թիվը վոչ թե  
մի քանի անհատներէ, այլ մի քանի տասնյակներէ յե հաս-  
նում:

Գավառական այդ քաղաքում պատրաստվող ինտելի-  
գենցիայի շարքերը խտացնում եյին նաև Թիֆլիսում, Եջ-  
միածնում, Ռուսաստանում և Յեկրոպայում ուսած ու Ալեք-  
սանդրապոլ վերադարձած յերիտասարդները:

Անդրկովկասի ժամանակակից կյանքին իրադեկ, յերկար  
տարիներ Ալեքսանդրապոլում ուսուցիչ յեղած Հայրապետ  
Ղուկասյանը այդ մասին գրում ե.—

... «Ալեքսանդրապոլի հասարակության  
մեջ ուսումնասիրությունն այնքան զար-  
գացած ե, վոր այս կողմից նրան կարծեմ  
առաջինը կարելի յե համարել կովկասում:  
Մոտքիս ապացույց ե այն, վոր Ալեքսան-  
դրապոլում մասնավոր ուսումնարաններէ  
թիվը բավականին շատ ե, նրա յերկսեռ ազ-  
գային ուսումնարանները լի յեն աշա-  
կերտներով, գավառական ուսումնարանի  
մեջ ել քիչ չեն նոքա:

Բացի այս բոլորից, քաղաքից դուրս  
ալեքսանդրապոլցի ուսանողներէ թիվը, թե  
Ռուսիայի և թե արտասահմանի բարձրա-

\* «Արարատ», 1871 թ., նոյեմբեր. էջ 316:

դույն ուսումնարաններում համեմատա-  
բար շատ ե կովկասի վորեւե գավառական  
քաղաքից»\*:

Սակայն ժամանակակից հայ մամուլին Ալեքսանդրապոլից  
վոչ միայն թղթակցում եյին, այլև ստանում՝ կարգում: Մեր  
մոտավոր հաշվումներով բաժանորդագրությամբ ստացվել ե՝  
«Լույս» (Պոլիս)՝ 5 որինակ, «Մասիս» (Պոլիս)՝ 3 որինակ,  
«Հյուսիսստիս» (Մոսկվա), «Արարատ» (Եջմիածին)՝ ավելի  
քան 50 որինակ, «Հույս» (Արմաշ), «Վաճառական» (Թիֆ-  
լիս), «Մամուլ» (Պոլիս), «Փարոս» (Մոսկվա), «Կոռնիկ Հա-  
յոց աշխարհի» (Թիֆլիս), «Արևելյան Մամուլ» (Զմյուռ-  
նիս), «Մշակ» (Թիֆլիս), «Փորձ» (Թիֆլիս) «Մեղու Հա-  
յաստանի» (Թիֆլիս), «Փարոս Հայաստանի» (Մոսկվա)՝ 54  
ոտրըր, «Իպրոց» (Եջմիածին) և այլն:

Ալեքսանդրապոլում, ինչպես այդ մասին հիշվում ե նաև  
սույն աշխատության կցված ժանդարմական վարչության  
գրություններէ մեջ, ստացվել ե և արևմտահայ այնպիսի  
գրականություն, վորի մուտքը Ռուսահայաստան կառավա-  
րության կողմից արգելված ե յեղել:

Այս բոլորից հետո անա, բնական եր տեսնել, թե ինչ-  
պես ցարական վոստիկանությունը, ազգային լեզվի, կրթու-  
թյան և առհասարակ ազգային կուլտուրայի զարգացման վո-  
խերիմ այդ թշնամին, պետք ե իր ավերիչ գործունեությունը  
փոխադրել և Ալեքսանդրապոլ՝ սառացնելու և վոչնչացնելու  
ազգային պրոգրեսի ուղղությամբ տեղում սկսված առաջին  
ծրլերը:

Յարական իշխանությունը լավ եր հասկանում, վոր իր  
ստրկացրած ժողովուրդներէ ազգային կրթությունն ու դաս-  
տիարակությունը մեծապես նպաստում եյին նրանց ազգային  
ինքնագիտակցության աճման, հակացարական պայքարին:

Հենց զրա համար ել ցարիզմի՝ վելիկոուս նացիոնա-  
լիզմի ատելությունն ու հարածանքներն առանձնապես ուժեղ

\* «Մեղու Հայաստանի», 1874 թ., № 43, նոյեմբեր 2. Հ. Ղ.-ի [Հայ-  
րապետ Ղուկասյանի] հոդվածը:

եյին արտահայտվում յենթակա այն ժողովուրդներին նկատմամբ, վորոնք իրենց ազգային դարձնաքի և կոնսոլիդացիայի եզրխայում, հակառակ կառավարութեան ցանկութեան ու ճշգրտումների, մեծ ակտիվութեամբ առաջ եյին քաշում ազգային կուլտուրայի, գալրոցներէ, գրականութեան, մամուլի, ինտելիգենցիայի գարգացման հարցերը և վորոնք իրենց պատմութեան նախընթաց շրջաններում ստեղծած կուլտուրայի անհամեմատ բարձր բազայի վրա, ավելի քան որչեղտիւ հնարավորութեաներ ունեյին գարգացնելու այդ: Ի զուր չե, վոր ուսւ նացիոնալիստ, սեհարյուրակային պարագլուխ, տերտեր Վոստորգովը, հանդես գալով պետական գումայում՝ հայտարարում ե, թե՛ «թուրքերն ամենահամարեալն են, ամենահամակրելի ժողովուրդն են, վորովհետեւ նրանք թերթ և ինտելիգենցիա չունեն»: »

Անդրկովկասում հայերը, ինչպես նաև վրացիներն ու ժեղ կերպով հալածվում եյին ուսական ինքնակալութեան կողմից, միաժամանակ իրենց կուլտուրականութեան և այդ ուղղութեամբ հանդես բերած իրենց բուն հետաքրքրութեան համար: Այդ հալածանքներից դերժ նաև Անդրկովկասի թուրք ժողովուրդը: «Յարիզմը, — գրում ե ընկ. Ստալինը, — ծայրերկրներում դիտավորյալ կերպով նահապետական — ֆեոդալական ճնշում եր կերտում, վորպեսզի ըստերկութեան և տգիտութեան մեջ պահի մասսաներին, ցարիզմը դիտավորյալ գաղութարար տարեր եր բնակեցնում ծայրերկրների լավագույն անկյուններում, վորպեսզի տեղացիներին քշի ավելի վատ շրջանները և ուժեղացնի ազգային պառակտումը: Յարիզմը նեղում, իսկ յերբեմն ել պարզապես վերացնում եր տեղական դպրոցը, թատրոնը, լուսավորական հիմնարկները, վորպեսզի խավարի մեջ պահի մասսաներին: Յարիզմը կասեցնում եր տեղական ազգարդնակչութեան լավագույն մարդկանց ամեն մի նախաձեռնութեանը: Վերջապես, ցարիզմն սպանում եր ծայրերկրների

ժողովրդական մասսաների ամեն մի ակտիվութեանը» \*:

Ընկ. Ստալինի այս խոսքերը ցարական Ռուսաստանի ծայրերկրների ժողովուրդներին մասին՝ ամբողջութեամբ վերաբերում են նաև հայ ժողովրդին: Ավելին. ցարական Ռուսաստանում հայերը գտնվել են այն ճնշվող ազգերի թվում, վորոնք առավել խիստ, նողկալի ու ատելի ձևերով են հալածվել. նրանց հասարակական-կուլտուրական գարգացումը միշտ և ամենուրեք՝ բռնադատվել ե, կաշկանդվել: Հալածանքի որչեղտ ե յեղել նաև հայկական դպրոցը՝ իբրև ազգային պրոգրեսի կարևորագույն բլիշներից մեկը:

Հայկական դպրոցների հալածման պատմութեան մեջ սովորաբար նշվել են 1884-85, 1896 և 1903 թ. թ. դեպքերը: Իրականութեան մեջ ցարական ինքնակալութեան նամանդանակ քաղաքականութեան սկիզբ ե առել հենց նրա տիրապետութեան շրջանից, յեղել ե սիստեմատիկ և վոչ թե եպիզոդիկ, այդ բղխել ե ցարիզմի ընդհանուր ազգային-գաղութային ազդեցիւ քաղաքականութեանից:

Ալեքսանդրապոլի դեպքերը ցարիզմի ընդհանուր այդ քաղաքականութեանը լուսաբանելու տեսակետից ես բավականաչափ հետաքրքիր նյութ են տալիս մեզ:

Ալեքսանդրապոլում դպրոցների փակումը և առհասարակ հալածանքը դպրոցների դեմ շեշտված կերպով արտահայտվում ե 1870-ական թվականներին, այսինքն այն շրջանում, յերը տեղում սկսում ե բարեկարգ հիմքերի վրա դրվել նու, յերը տեղում սկսում ե բարեժամներ այն հատ ու կենտ դիզել են միայն առանձին մերժումներ այն հատ ու կենտ դիմումների, վորոնց նպատակն ե յեղել տեղում նոր դպրոց բաց մումներին, վորոնց նպատակն ե յեղել տեղում նոր դպրոց բաց մումներին, վորոնց նպատակն ե յեղել տեղում նոր դպրոց բաց մումներին: 1875 թվականին Յերեանի նահանգապետի կարգադրումով Ալեքսանդրապոլի վոստիկանութեանը ձեռնամուխ ե լինում փակելու տեղի մասնավոր դպրոցները. այդ կար-

\* „Правда“, 1920 թ., № 226, 10/XII. „Политика Советской власти по национальному вопросу в России“ հոդվածը:

դադրութիւնը գալիս եր բարձրագուցն իշխանութիւնից և պատճառաբանւում եր նրանով, վոր մասնավոր դպրոցները կառավարութիւնից հատուկ թույլտուութիւն չունեն։ Ժամանակակիցները վկայում են, վոր Ալեքսանդրապոլի վոստիկանութիւնն այնքան առաջ ե գնում, վոր նուէնիսկ մասնավոր դպրոցների հետ փակում ե նաև հողեր ծխական դպրոցները՝ դբանք ևս գասելով մասնավոր դպրոցների շարքը։ «Մեղու Հայաստանի» թերթում, «Անանուն» ստորագրութեամբ հոգովածի հեղինակը, խոսելով այդ մասին, գրում ե. «Այս պատկերը (խոսքը Ալեքսանդրապոլի մասնավոր դպրոցները փակելու առթիւ Յերևանի նահանգապետի արած կարգադրութեան մասին ե. Վ. Պ.) տեղույս վոստիկանութեան ներկայացուցիչները կատարեցին վոչ միայն ճշտութեամբ, այլև նախազանցութեամբ. . . Ինչ և իցե, խոսքս տեղական վոստիկանութեան այդ մասնավոր և ավելորդ քըմահաճութեան մասին չեմ, այլ թե ինչպես մոտ ժամանակումս քաղաքիս բոլոր մասնավոր ուսումնարանները պիտի փակվեն, վասնզի նոցա պահուցներն ու դասատուքը չունին իրավունք և չեն ել կարող նոր հրամանի դրութեամբ ստանալ այդ՝ ուսումնական շրջանի հոգաբարձուից։ Այժմյան մասնավոր ուսումնարանաց մեջ բազմաթիւ սովորողները պետք ե հարկադրվին գուրկ մնալ գոնե գրագիտութեան սկզբունքներից և ժամանակով ավելացնեն մեր վայրաշրջիկ փողոցականների թիւը»\*։

Յերկրորդ գեպքը տեղի յե ունենում նույն տարվա մայիսին, յերբ Ալեքսանդրապոլ ե գալիս Կովկասի փոխարքա, Ալեքսանդր II թագավորի փոքր յեղբայր, մեծ իշխան Միխայիլ Նիկողայեվիչը։

1875 թ. մայիսի 16-ին փոխարքային դիմավորում են Ալեքսանդրապոլի բոլոր 35 համքարութիւնները՝ կազմակերպված, դրոշակներով, աղ ու հացով, և քաղաքի ներկայացուցիչները։ Հաջորդ որը փոխարքան դիտում ե Ալեք-

\* «Մեղու Հայաստանի», 1875 թ., № 1, հունվարի 4։

սանդրապոլի ամբողջ, իսկ մայիսի 18-ին այցելում ս. փրկչի յեկեղեցին, դպրոցը, վորտեղ հարցաքննում ե աշակերտներին ուսաց լեզվից և, ինչպես հարգողում ե «Մշակ»-ի թըրթակիցը, նորին կայսերական բարձրութիւնն անբավական ե մնում այդ հարցաքննութիւնից։ Առիթը պատրաստ եր. ավելի ճիշտ՝ նա ստեղծվեց։ Սկսվում ե հալածանքների ու փոփոխութիւնների մի ամբողջ շարք։

Նույն այդ տարվա փետրվարի 14-ին, Պետերբուրգից ժանդարմերիայի շեֆը կարգադրութիւն եր արել տեղերին ուժեղացնել հսկողութիւնը դպրոցների, հրապարակական դասախոսութիւնների, ընթերցարանների, գրավաճառութեան վրա և այլն. փոխարքան Ալեքսանդրապոլում փաստորեն իր վրա յե վերցնում ժանդարմական այդ կարգադրութեան իրագործումը։

Այս գեպքից մի քանի որ հետո Յերևանի նահանգապետը հատուկ գրութեամբ փոխարքայի հարցաքննութեան արդէւնքների մասին տեղեկացնում ե Յերևանի թեմի հոարեյունքների մասին տեղեկացնում ե Յերևանի թեմի հոարեյունքների տեսչին. այդտեղ նա գրում ե. «Նորին կայսերական բարձրութիւնը մեծ իշխան Փոխարքայն Կովկասու ի 18-ն մայիս ամսոյ այց ելանելով հողեր ուսումնարանաց Ալեքսանդրապոլ քաղաքի, բարեհաճեցաւ նկատել թէ բոլոր աշակերտքն և աշակերտուհիք ուսումնարանուք յայնոսիկ ուսումնարանս, ոչ միայն ոչ ուսանեն զլեզու ուսաց, այլ և չկարեն խօսիլ ուսեբէն, գորմէ նորին կայսերական բարձրութիւնն արտայայտելով հոգաբարձուաց զիւրն անբաւականութիւնն, բարեհաճեցաւ հրամայել անյապաղ թիւնն, բարեհաճեցաւ հրամայել անյապաղ հոգատար լինել պատշաճաւոր կերպով առ ի հեռացուցանել զայդ կարևոր զանցառութիւն»\*։

\* Ձեռքի տակ չունենալով նահանգապետի գրութիւնը, քաղվածքն անում ենք ՀՍՍՀ Կենտր. արխիվում գտնվող, Ալեքսանդրապոլի հոգաբարձութեանն ուղղված, Յեր. թեմ. հոգ. դպր. տեսչի գրութիւնից։

Յերևանի թեմի հոգևոր դպրոցների տեսուչն ստանալով նահանգապետի գրությունը, իր հերթին նրա բովանդակությունը հաղորդում է Ալեքսանդրապոլի դպրոցների հոգաբարձությանը, անելով համապատասխան կարգադրություն:

Դպրոցի հոգաբարձությունը, ուսուցչությունը, այդպիսով, ընկնում են ծուղակի մեջ: Նրանցից վրամանք, հետագա հալածանքից խուսափելու նպատակով, բարվոք են համարում հեռանալ Ալեքսանդրապոլից, մի մասին ուղղակի հեռացնում են, կարգադրում են հրավիրել նոր տեսուչ, ուսաց լեզվի նոր դասատուներ: Յեվ այդ ամենը կատարվում էր այն դպրոցում, վորի գործերի տնօրինությունն իբր թե հոգևոր իշխանությանն էր վերապահված: Ի կատարումն նորին գերազանցություն մեծ իշխան Միխայիլ Նիկոլայեվիչի հրամանի, Յերևանի թեմի հոգևոր դպրոցների տեսուչ, կոլլեժսկի սեկրետար Գեվորգ Տեր-Հարությունյանի հրավերով և նախագահությամբ, Ալեքսանդրապոլի հոգաբարձությունը 1875 թ. մայիսի 19-ին նիստ է գումարում, վորտեղ և վճռվում է «Մշակ», «Մեղու Հայաստանի» և «Кавказ» լրագրերի միջոցով հրավիրել ուսաց լեզվի դասատուներ: Հատուկ զիմում է արվում նաև Կովկասի շրջանի դպրոցների հոգաբարձու Նեվերովին: Այդ հայտարարությունը մեղ հաջողվեց գտնել միայն «Մշակ»-ում, վոր և բերում ենք նույնությամբ.

«Նամակ խմբագրին

Ալեքսանդրապոլ Մայիս 21.

Հոգաբարձութիւնն վիճ. հոգ. դպրոցի Հ. Ալեքսանդրապոլու ցանկանալով առաւել ևս բարեկարգել զուսումնական մասն դպրոցի, մանաւանդ զդասատուութիւն ուսաց լեզուի, դեռ անցեալ ամի պարբերական հրատարակութեամբ թէպէտ հրաւիրեաց զցանկացողս ուսուցչութեան ի նոյն դպրոցի, որպէս զի աւարտեալ իցեն նոքա մինն ի համարարանի և միւսն ի գիմնադիտայի, սակայն չերևեցաւ այնպիսի ոք, իսկ ի ներկայումս վառեալ գորով այդպիսի փա-

վագանօք (sic) և հետևաբար պարտաւոր գորով կատարել զբարձրագոյն կամս Նորին Կայսերական Բարձրութեան Մեծ ԻՇխԱՆ ՓՈՒՍՏՐՔԱՅԻՆ Կովկասու՝ որ բարեբախտս կացոյց զերկսեռ դպրոցս իւրով այցելութեամբ ի 18-ն մայիս ամսոյ, ի մասին յառաջադիմութեան դասախօսութեան ուսաց լեզուի հրաւիրէ զերկու հայ ուսուցիչս, որք աւարտեալ իցեն զընթացս ուսման իւրեանց ի բարձր ուսումնարանս տէրութեան Ռուսիո առ ի վարել զպաշտօն ուսուցչութեան ուսաց լեզուի երկսեռ հոգ. ուսումնարանս քաղաքիս. և, եթէ հնար է, և զպաշտօն տեսչի: Ի մասին մանրամասն պայմանաց նոյնպէս և վասն ուճկաց նոցա խնդրի ի ցանկացողաց որքան կարելին է շուտափոյթ շարունակել ըզգրագրութիւն ընդ հոգաբարձութեանս կամ ընդ միոյ յանդամոց նորին, որպէս զի զինի պատշաճաւոր կարողութեան կարողանայցեն յառաջիկայ սեպտեմբեր ամսոյ շարունակել զյանձնելի ինքեանց պաշտօնն:

Հոգաբարձուք երկսեռ ուսումնարանաց (հինգ ստորագրություններ)»\*:

Այս հայտարարության մեջ, ինչպէս տեսնում է ընթերցողը, հոգաբարձությունն անհաջող փորձ է անում արդարանալ՝ պատճառարանելով թե իրենք դեռ մեկ տարի առաջ են հրավիրել ուսաց լեզվի դասատուներ, բայց այդպիսիք չեն յերևացել:

Նույն խնդրի կապակցությամբ Ալիունին «Մշակ»-ում գրում է. «Ի՞նչ անեն դպրոցաց վորդմբելի հոգաբարձուները, յերբ այդ մասին հարմար ուսուցիչ չեն գտնում, այդպիսիք զերադասում են պետական պաշտոն վարել 600—700 մ., քան ուսուցչություն անել 1000 մանեթով»\*\*:

Թե հոգաբարձության և թե Ալիունու պատճառարանությունները, ներկա գեպքում, այնքան ել համոզիչ չեն, քանի վոր մեղ հայտնի յեն Միքայիլ Տեր-Դավթյանի՝

\* «Մշակ», 1875 թ., № 22, հունիսի 5:

\*\* Նույն տեղ:

Ներսիսյան դպրոց և Պետերբուրգի համալսարանավարտ, ուսուսաց լեզվի մեջ հմուտ և Գրեգոր Տեր-Մելքիսեթեկյանի դիմումները 1874 թվին, վորոնք Ալեքսանդրապոլի հոգաբարձութունը թողնում և անհետևանք\*։ Առաջարկութուններ են յեղել նաև ուսուսացաստուներ ի կողմից, այնպես վոր հոգաբարձութունը բավարար հիմք չունեն արդարանալու, թե ուսուսաց լեզվի դասաստուներ չեն յեղել։ Մեր կարծիքով ուսուսաց լեզվի անբավարար դրվածքը (թեկուզ վոչ այն չափով, ինչպես հիշվում և փոխաբքայի և մյուսների կողմից) առավելապես արդունք եր դպրոցի հոգաբարձութուն և ուսուցչութան դեպի ուսուսաց լեզուն ունեցած անբարյացակամ վերաբերմունքի։ Գաղանիք չե, վոր բռնի ուսուսացումը հայ ազգային շրջաններում առաջ եր բերում ուժեղ ատելութուն վոչ միայն ուսուսաց պաշտոնյաների, այլև ուսուսաց լեզվի դեմ։ Պատմում են, վոր, որինակ, Յերևանի թեմական դպրոցի ուսուսաց լեզվի դասատու Աբովյանին — շատ պատվարժան մի մարդ — չեն սիրել, վորովհետև նա ուսուսաց լեզու յե ավանդել։ Հասկանալի յե, վոր ավյալ դեպքում վոչ այնքան այդ լեզվի անհրաժեշտութունն և հաշվի առնվում, վորքան նրա հարկադրական բնույթը։ Ահա, թե ինչով պետք և բացատրել Ալեքսանդրապոլի դպրոցներում ուսուսաց լեզվի անբավարար վիճակը։ Յարական սատրապն անպայման վորոշ հիմք ունեն դժգոհ լինելու։ Իսկ յեթե անհավանական չհամարենք նաև այն, վոր նա անգիտակ չի յեղել ժամդարմական վարչութան նույն տարվա ապրիլին Ալեքսանդրապոլում հայտնաբերած «գաղանիք» խմբակների գոյությանը, այդ խմբակների և նույն այդ դպրոցի ուսուցչութան ու աշակերտութան կապերին,

\* Գրեգոր Տեր-Մելքիսեթեկյանը՝ դեմոկրատական հովերով տարված հետաքրքիր այդ անձնավորութունը, իր դիմումի մեջ՝ ուղղված Ալեքսանդրապոլի հոգաբարձությանը, գրում և. «Առաջարկում եմ Ձեզ ծառայել մաթեմատիկայից, այն և՛ դեոմետրիա, ալգեբրա և թվաբանութուն, աշխարհագրութունից, ընդհ. պատմութունից, այլև ուսուսաց ֆրանսերեն և հայ լեզուներից, վորը կառաջարկեք՝ կընդունեմ» (ընդգծումն իմն և. Վ. Գ.)։

այլա թերևս ավելի հասկանալի կդառնա մեծ իշխանի ու նրա մանր ու մեծ կամակատարների հարածանքները Ալեքսանդրապոլի դպրոցների և ուսուցչութան նկատմամբ։

Բնորոշ և, վոր Ալեքսանդրապոլի այս դեպքերն իրենց արտահայտութունն են գտնում նաև ժամանակակից արևմտահայ մամուլում։

Վերին աստիճանի հետաքրքրական հոդված և ղետեգում այդ մասին Աբմաշի «ՀՈՒՅՍ» հանդեսը։

«Մենք հավանականութունե գուրկ և լուկ կարծիք համարելով Ռուսիո՝ յուր հպատակ հայ ազգին լեզու և կրոնքն բնաջինջ ընել ուղելու բռնութունը, վորովհետև սույն մեծադոր կայսրության իմաստութունե այսպիսի բան մը մենք չեյինք սպասեր, բնավ գրիչ ձեռք պիտի չառնեյինք, և այս բռնության նկատմամբ հրապարակ յեղած խոսքերն ալ տարածայնության պիտի տայինք, յեթե անընդհատ Ռուսաստանեն կ. Պոլիս յեկած նամակները, և մանավանդ վերջին անգամ Ալեքսանդրապոլին գրված նամակը՝ մեր հավանականութունը՝ ստուգության, և մեր կարծիքը՝ ճշմարտության փոխել տալու չստիպեյին զմեզ, վորով հարկադրվեցանք այս անգամ քանի մը խոսք ալ մեր կողմանն ընել Ռուսիո կառավարության ուսուսացական հայոց դեմ բռնած ընթացքին և սոցա անտանելի վիճակի վրա։

Ռուսիո կառավարութունը բռնի գորք կառնե յուր հպատակ ազգերեն՝ վորոնց մեջ են նաև Հայք, ամեն միջոց ի գործ կդնեն հայութունը ջնջելու, հայոց յեկեղեցի դրամով խնամված հոգևոր դպրոցի մեջ ուսուսերեն լեզուն ուրիշ լեզուներեն նախապատիվ կը համարեն, հայ մանկանց ուսուսերեն լեզուն սովորելու այնչափ ստիպողականութուն և բռնութուն կա, վոր փոխաբքայն Ալեքսանդրապոլի հայ հոգևոր ուսուսմարանին վրա աշխարհագրական քարը բաժ առնե, յերբ կը տեսնե՝ վոր աշխարհագրական քարը տեղները գաղղիներեն լեզվով գրված են՝ զայրույթը կը շարժի, սաստիկ կնեղանա՝ յերբ կը տեսնե՝ վոր աշակերտք իրենց մայրենի լեզվի և գերմաներենի մեջ ավելի հաջողակ են՝

քան թե ուսերենի մեջ, և այնչափ կբարկանա՝ վոր վեհա-  
փառին կողմե զրկված հոգևոր տեսուչն Աբել յեպիսկոպոս  
յուր սենյակը կանչելով՝ անարգական ձևով կըսե՝ թե աշա-  
կերտք ուսերենի մեջ շատ թույլ են ... Ռուսիո կառավա-  
րությունը՝ սահմանադիտոց և վաճառականական հարաբե-  
րությանց ապահովության շահու, և քաղաքակիրթ կառա-  
վարության մը յուր գրացի վայրենի և բարբարոս ժողովըր-  
դաց վրա ազդեցություն բանեցնելու սկզբունքով՝ աշխար-  
հակալություն ընելու հետ, յուր իշխանության ներքև գըտ-  
նված ստրուկ և թշվառ հայուն լեզուն և կրոնն իսպառ բը-  
նաջինջ ընելու խորհուրդները հղացած ե:

Թող Ռուսիո կառավարությունն ապահով ըլլա՝ թե ինչ-  
պէս յուր քաղաքական դրից մեջ շարունակ միևնույն հավա-  
սարակչությունը պիտի չպահէ, և թե որ մը փառաց և  
պատվո դագաթեն անկանգնելի անկամար կորստյան ան-  
դունդը պիտի գահավիժե, այսպէս նաև յուր հարատակ ազգի  
մը լեզուն և կրոնքը բնաջինջ ընելու վատ քաղաքականու-  
թյունն ապագային յուր անվան մեծ արատ պիտի բերե,  
յեթե արդեն ներկայիս մեջ բերած չե. և ո՞վ նախախնամու-  
թյան անքննելի խորհրդոց խորը կրնա թափանցել, թերևս  
Ռուսիո ուսիարնակ հայոց դեմ բռնած ընթացքն բարեմիտ  
կառավարությանց դժգոհության տեղի տալով՝ յուր անկման  
պատճառներեն մին ըլլա»\*:

«ՀՈՒՅՄ»-ը, 60 տարի առաջ, Ալեքսանդրապոլի դեպքե-  
րի կոնկրետ փորձի վրա կուսել և ցարիզմի՝ հայկական  
դպրոցների հալածման քաղաքականության, հենց իրեն՝ ցա-  
րիզմի համար կորստաբեր լինելը:

Ցարական ինքնակալությունը 1885, 1896, 1903 թվա-  
կանների հայկական դպրոցների փակումից տարիներ առաջ,  
1870-ական թվականներին ձեռնամուխ եր յեղել Ալեքսան-

\* «Հուլիս», 1878 թ., հատոր 6-րդ, էջ 650—653. (Հանդես ազգային,  
կրոնական-բարոյական, իմաստասիրական, գիտական-բանասիրական):

դրապոլի դպրոցների փակման, հայ ուսուցչության, հայ լե-  
զուն հալածելու, բնաջնջելու քաղաքականության:

Ալեքսանդրապոլում այդ հալածաքնները հատկապես սուր  
կերպարանք են ստանում, վորովհետև վոխարքայի և ժան-  
դարմական վարչության համար պարզ եր դառնում, վոր  
տեղում ծագող անտիցարական, ազգային-դեմոկրատական  
շարժումը կազմակերպվում և գլխավորվում եր միաժամանակ  
ուսուցչության կողմից, այդ շարժմանը՝ դեմոկրատական  
խավերից բացի, գործունյ՞ն կազրեր ելին մատակարարում  
նաև դպրոցները:

**“ԳԱՂՏՆԻ,, ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԺԱՆԴԱՐՄԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ**

Իր տեղում մենք արդեն ցույց ենք տվել, վոր 60—70-ական թվականներին Ալեքսանդրապոլը, շնորհիվ իր զարգացած արհեստների ու առևտրի, դուրս եր յեկել ինքնամիտի կյանքի շրջանակներից, այս ու այն չափով կապվել եր Անդրբլովկասի քաղաքների՝ գլխավորապես Թիֆլիսի և Ախալցխայի ու Յերևանի, ինչպես և ուսսական, տաճկական, պարսկական ու Արևմտյան Յեվրոպայի մի քանի քաղաքների շուկաների հետ: Տնտեսական, առևտրական այդ կապերը չեյին կարող չանդրադառնալ Ալեքսանդրապոլի քաղաքային կյանքի վրա: Դրանք, ինչպես Անդրբլովկասի մյուս գավառական քաղաքները, նույնպես և Ալեքսանդրապոլը, քաշում եյին կապիտալիստական զարգացման ջրապտույտի մեջ, կապում նրան ինչպես անտեսական, նույնպես և քաղաքական կյանքում առաջացող նոր իրադրությունները հետ:

Յարական Ռուսաստանը 19-րդ դարի 2-րդ կիսում Անդրբլովկասը վերջնականապես առնելով իր գաղութային տընտեսական նվաճման որբիտի մեջ, նրան հաղորդակից եր դարձրել վոչ միայն Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների անլուր շահագործմանն ու կեղեքմանը, այլև նրանց հեղափոխական-ազատագրական մեծ շարժմանը: Գերցենի, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի և այլոց գաղափարները, այս ու այն չափով, հասնում եյին նաև ծայրագավառների ճնշվող ժողովուրդներին խիզախ ու առաջավոր մարդկանց, նրանց ևս վտարի հանում՝ պայքարելու հանուն իրենց ազատագրության:

Անդրբլովկասի վաղձական, քաղաքական ու կուլտուրական կենտրոն Թիֆլիսը, վորտեղ ծվարել եյին հայ ազգային-հեղափոխական, լիբերալ ու պահպանողական հոսանքներին ներկայացուցիչները, հանդիսանում եր Հայաստանը Ռուսաստանի և Անդրբլովկասի մյուս ժողովուրդներին հետ կապող, Հայաստանի մտավոր և քաղաքական կյանքին տոն սովող կենտրոնը:

Ալեքսանդրապոլը, ավելի քան Հայաստանի մյուս քաղաքները, սերտորեն կապված եր Թիֆլիսի հետ:

Յեթե Թիֆլիսն իբրև կամուրջ Ալեքսանդրապոլը կապում եր Անդրբլովկասի համապատասխան շրջանների և Ռուսաստանի հետ, ապա Ալեքսանդրապոլն իր հերթին, իբրև կամուրջ, Թիֆլիսը և կովկասահայերին կապում եր Տաճկաստանի հետ, հատկապես ուսսահայ ազգային շարժումը՝ արևմտահայության մեջ փոթորկվող ժամանակակից ազգային շարժման հետ:

Թիֆլիսը, Յերևանը, Եջմիածինը և նույնիսկ վորոշ չափով Մոսկվայի ու Պետերբուրգի հայկական կենտրոնները մինչև 1877—78 թ.թ. ուսս—թուրքական պատերազմը, մեծ մասամբ Ալեքսանդրապոլի և Ղարսի վրայով եյին կապվում արևմտահայ քաղաքական—կուլտուրական կենտրոնների հետ՝ առաքում և ստանում մամուլը, գրականությունը և այլն: Ռուսաստանի ու Անդրբլովկասի նարոդնիկական և ազգային-հեղափոխական կազմակերպությունները, հայկական առաջին խմբերն այս ճանապարհով եյին փորձում կապվել տաճկահայ շարժման հետ: Ստրատեգիական իր կարևոր այդ նշանակությունն Ալեքսանդրապոլը, ինչպես հայտնի յե, չեր կորցրել նաև հետագա ժամանակներում՝ դաշնակ—հնչակյան կազմակերպությունների համար: Ալեքսանդրապոլի աշխարհագրական դիրքն այս տեսակետից շատ նպաստավոր եր, նա յերկու հայության կապող կամուրջ եր:

Բացի այս, չպետք ե մոռնալ, վոր Ալեքսանդրապոլի տաճկահայ և պարսկահայ գաղթականությունը դեռ չեր կլտրել իր կապերը արևմտահայ շրջանների հետ: Այդ պահ-

պանվում էր նամակագրութեամբ, յերբեմն՝ կենդանի կապե-  
րով: Փոխադարձաբար նրանք ծանոթանում էյին միմյանց  
կյանքի պայմաններին, իսկ ուսական տիրապետութեանից  
դժգոհ զաղթականութեան մի զգալի մասի մոտ շեշտված  
կերպով պահպանվում էր հայրենիք վերադառնալու ճշգ-  
տումը:

Այս ամենն Ալեքսանդրապոլի նման գրեթե միատարր  
հայկական քաղաքին տալիս էյին յուրորինակ խառնվածք,  
վորից զուրկ էյին Կովկասի մյուս հայկական քաղաքները,  
անգամ Յերևանը:

Ընդհանուր կոնտուրներով արտահայտած, կոնկրետ այս  
իրադրութեանները մեջ է ահա, վոր 60—70-ական թվական-  
ներին հանդես են գալիս և գործում Ալեքսանդրապոլի այս-  
պես կոչված գաղանի ընկերութեանները:

Ընկերութեաններ կազմելու գաղափարը հայ կյանքում  
նոր չէր: Մինչ այդ էլ Ռուսաստանի և Անդրկովկասի հայ-  
կական կենտրոններում գոյութեան ունեյին զանազան ըն-  
կերութեաններ՝ կրթասիրական, ընթերցասիրական, մարզա-  
սիրական, բարեգործական, վորբախնամ և այլն: Նման ըն-  
կերութեանների հանդես գալը միշտ էլ ունեցել է իր կոնկ-  
րետ գրգռապատճառները՝ և իրեն առաջադրել է կոնկրետ նպա-  
տակներ: Սակայն այդ ընկերութեանների գործունեյութեան-  
ից կարելի չէ նկատել, վոր դա ըստ մեծի մասին պաշտ-  
վել է ազգային կրթութեան—գաստիարակութեան, թշվառ ու  
աղքատիկ ազգայիններին ոգնելու, ազգային գիտակցութեան-  
ընդ գարգացնելու շուրջը՝ վորչափով այդ հնարավոր էր ցա-  
րիզմի ազգային—գաղութային ճնշման պայմաններում:

Այդպիսի ընկերութեաններ 60—70-ական թվականնե-  
րին, ինչպես և նախընթաց ու հետագա տարիներին, գոր-  
ծել են Բագվում, Թրիֆլիսում, Շուշում, Յերևանում, Նախի-  
ջևանում, Ն. Բայազետում և այլուր:

Պատմական փաստերը վկայում են, վոր այդ ընկերու-  
թեաններն իրենց թույլատրված նպատակին ծառայելուց  
բացի, հաճախ ոգտագործվել են ազգային-դեմոկրատական,

հակացարական ուղղիցիոն տարրերի կողմից: Նման դեպքեր  
ավելի շատ տեղի չեն ունեցել դպրոցներին կից կազմակերպ-  
ված ընթերցասիրական, ինքնազարգացման խմբակներում  
հավաքված յերիտասարդութեան մեջ: Յարական ժանդար-  
մերիայի կողմից քաղաքական ընկերակցութեանները, ազատ  
խոսքն ու միտքը հալածելու պայմաններում, դա մի միջոց  
է յեղել կապվելու մասսաների հետ, ազգի ազատագրութեան  
գործի շուրջը նրանց մորելիզացիաֆի յենթարկելու նպատա-  
կով:

1891 թվականին Կովկասյան դպրոցական շրջանի հոգա-  
բարձուն Յերևանի գիմնազիայի գերեկտորին գրած իր կոն-  
ֆիդենցիալ մի գրութեան մեջ հետևյալն է ասում.—

«Բազմաթիվ որինակներն ապացուցում են, վոր հե-  
ղափոխական կազմակերպութեանները ծնունդ են առ-  
նում այսպես կոչված ինքնակրթական ու ինքնազար-  
գացման խմբակներում, վորոնք յերևան են գալիս աշա-  
կերաների շրջանում, մեծ մասամբ միջնակարգ դպրոց-  
ների բարձր դասարանի աշակերտութեան մեջ:

Սովորաբար այդպիսի խմբակները ծառայում են չա-  
բամիտ պրոպագանդիստներ աճեցնելու համար կամ, առ-  
նվազն, բացասական ուղղութեան գործիչներ սնուցանե-  
լու: Հավաքված գրամներով կազմվում են տենդենցիոզ  
և արգելված գրքերից ու ժուռնալներից գրադարաններ:  
Ընթերցումները կապակցութեամբ կազմակերպվում են  
հավաքույթներ և ժողովներ, կարդացածի մասին ճառեր  
ասելու, դատողութեաններ անելու համար և այլն»\*:

Ճիշտ և սրամիտ դիտողութեան. 90—ական թվականնե-  
րին արտահայտած այս մտքերը, այս ու այն չափով, կա-  
րելի չէ ասել և Ալեքսանդրապոլում 60—70-ական թվա-  
կաններին գործող կրթական ընկերութեանների ու գրադա-  
րանների մասին:

Ալեքսանդրապոլում առաջին ընկերութեանը կազմվել

\* ՀՍԽՀ Կենտրոնական արխիվ, Գործ 1813, էջ 11:

և 1860 — ական թվականները սկզբներին՝ ԸՆԹԵՐՅԱՍԻՐԱ-  
ԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ անվան տակ:

Ընկերութունը հիմնադրվել է մի քանի ուսումնասեր  
յերթասարդների ջանքերով, անդամների թիվը հասել է մոտ  
25 հոգու: Ընկերութունն իր յուրաքանչյուր անդամից հա-  
վաքած տարեկան հինգ ուսուցիչ անդամավճարներով և ստաց-  
ված նվերներով, վիճակային դպրոցին կից բաց է անում  
ընթերցարան, վերտեղ հավաքվում կարգում են լրագրեր,  
դանազան գրքեր և խորհրդածում «ազդոզուտ» խնդիրների  
շուրջը:

Այս ընկերութունը շատ թե քիչ ակտիվ գործունեյու-  
թյուն ցուցաբերում է միայն առաջին տարում: Այնուհետև նա  
տարեցտարի հետադիմում է, ընկերության անդամներն ու  
նյութական միջոցները նվազում են, և իր գոյության յեր-  
բորդ տարվա կեսին բոլորովին գաղարում է:

Հետագայում այս ընկերության նախկին անդամներից  
մի քանիսի նախաձեռնությամբ, ընթերցարանի ցիր ու ցան  
յեղած գրականության ու գույքի բաղայի վրա, ընկերու-  
թյունը վերականգնվում է՝ պահպանելով հին անունը: Նոր  
կանոնների համաձայն, նկատի առնելով, վոր անդամներից  
վոմանց համար զժվար կլինի տարեկան հինգ ուսուցիչ վճարել  
մտցվում է զիֆերենցիալ անդամավճար՝ տարեկան չորս, յեր-  
կու և մեկ ուսուցիչ սահմաններում: Անդամավճարների չա-  
փը, ի դեպ, չի ազդում նրանց իրավունքների վրա: Մեկ  
յերկու կամ չորս ուսուցիչ մուծողներն ընկերության մեջ ոգտ-  
վում են հավասար իրավունքներով:

Այսպես, վերականգնված ձևով մի տարի գործելուց հե-  
տո, այս ընկերությունն էլ արժանանում է իր նախորդի  
բախտին:

1868 թ. հուլիսի 1-ին վիճակային դպրոցին կից բաց-  
վում է ՎՈՐԲԱՆՆԱՄ ընկերությունը, մոտ 100 անդամներից  
բաղկացած, շարթական յերեք կողմի անդամավճարով:

ՎՈՐԲԱՆՆԱՄ ընկերությունը, ինչպես ասված է նրա

կանոնադրության մեջ, հիմնադրվում է հետևյալ նպատա-  
կով. —

... «Տալ բերել, զգաստգրեանս ուստի և արժան է, ըստ  
կարելուոյն դիւրագնով և վաճառել ի վերայ կարող աշակեր-  
տաց մասնաւոր ինչ օգտիւ, իսկ որբոցն և չքաւորաց տալ  
ձրիապէս, հոգալով նաև զայլ հարկաւորելիս ուսման նոցա  
և հաւելեալ դրամս շահեցուցանել վասն այսր բարեսի-  
րական նպատակի առ ի հաւաքումն գումարի գրամոց,  
որ և բանալ զկրպակ դրավաճառութեան, և ջանալ հետը-  
հետէ զօրացուցանել զմիջոցս իւր և ընդարձակել զըջան  
ազգօգուտն նպաստից իւրոց աշխատելով զաղբւր գորին,  
որպէսզի մի գուցէ ի դադարելն ընկերութեան ինչևիցէ անա-  
կնկալ ձախորդ գիտլածոյ պատճառաւ, դադարեսցէ և այս  
նպատտ բարեսիրական, այլ հոգաբարձութիւնն յաղբւրէ  
անտի մշտապէս հոգասցէ զայս պէտս ազբատիկ աշակեր-  
տաց դպրոցին»:

ՎՈՐԲԱՆՆԱՄ ընկերությունն ունենում է իր վարչու-  
թյունը, հինգ անդամներից բաղկացած, գրադարանապետ  
(մատենապահ), վորը աշակերտությանն էժան գներով, կան-  
խիկ և ապահիկ, վաճառում է դասագրքեր, կամ վորբ ու  
չքավոր աշակերտներին բաց է թողնում այդպիսիք՝ ոգտվի-  
լու և վերադարձնելու պայմանով:

Կարձ ժամանակից հետո ՎՈՐԲԱՆՆԱՄ ընկերությանն  
է միացվում հոգևոր դպրոցին կից յեղած ընթերցարանը.  
այդ մասին ընկերության կազմակերպիչներից մեկը հետև-  
յալն է գրում. —

«Վորբախնամ ընկերության հաստատվելուց փոքր  
ինչ ժամանակ հետո տեսնելով թե՛ առանձին ընթերցա-  
րան պահելը դանազան պիտոյից համար մի առանձին  
դժվարություն կպատճառե, ուստի հարկավոր դատվե-  
ցավ, վոր յերկուքը միանան, և ընկերությունը, ըն-  
թ երցասիրական անունն ևս կրելով յուր վերա՝ աշ-  
խատի յուր անդամոց թիվն բազմացնել, և ընթերցանու-

թյան ցանկացողները կյուրակի որերը գան մատենադարանի սենյակը և այնտեղ կարդան»\*:

Այսպիսով, ընկերության հիմնական նպատակին ավելանում է և ընթերցանության գործը. «մեկ մասով ել լրագրեր կրեք լին առաջադեմ աշակերտաց և ընկերության ընթերցասեր անդամոց կարդալու համար. ու այդ իսկ նպատակով մատենադարանի մեջ մշտնջենավոր մնալու համար կգնվին ընտիր-ընտիր մատյաններ, վորով հետզհետե կարելի յե մատենադարանը դարգացնելով՝ ուսումնարանի դարգացմանը ոգնել, ընթերցասեր հայ յերիտասարդաց ընթերցասիրական փափագներն գոհ անել»\*\*:

Ընկերության մեկ տարվա (1868 թ. 1/7—1869 թ. 1/7) գործունեյության հաշվետվությունից յերևում է, վոր մուտք ունեցել է շաբաթական տուրքերից՝ 114 ու 41 կ. (այսուրի 21 ու.), Պալատանյանից ընծայված չորս հատ առաջին հատոր քերականության գիրք՝ 4 ուրբի, վաճառված գրքերից ոգուտ՝ 10 ու 49 կ. և այլն, ընդամենը՝ 136 ու 04 կ.: Ծախս յեղել է՝ լրագրերի և ծառային՝ ընկերության անդամների շաբաթական վճարումները հավաքելու համար՝ 13 ու 43 կ., վորը և չքավոր աշակերտների դասագրքերին՝ 9 ու 64 կ., մատենադարանի համար գրքեր գնելուն՝ 9 ու 70 կ.:

Ինչպես դժվար չե յեղրակացնել այս հաշվետվությունից, ՎՈՐԲԱՆՆԱՄ ընկերությունը, իր աղքատիկ միջոցների և մասամբ ել ընկերության վորոշ անդամների պատիվ վերաբերմունքի պատճառով, հնարավորություն չի ունեցել լայն աշխատանք ծավալելու: Փոքր են յեղել ընկերության միջոցները, փոքր են յեղել ընկերության անդամավճարները, բայց մեծ է յեղել ընկերության նպատակը: Այդպես են

\* «Արարատ», 1869 թ., Բ. տարի, սեպտեմբեր. Մկրտիչ վարժապետ Արարատյանցի «Մի քանի տեղեկությունք Ալեքսանդրապոլու հայոց ուսումնարանի, ընթերցարանի և բարեգործական նպատակով կազմված ընկերությանց վերա» հոդվածը:

\*\* Նույն տեղ:

ըմբռնել իր ժամանակին ընկերության կազմակերպիչներն ու գործող անդամները և գրանով ել վողկերով ել:

«Այս ընկերության տուրքը թեև փոքրիկ և աննշան է քանակության կողմանե գլխավորապես այն նպատակով, վոր ավոզների աչքին ըան չերևա, սակայն սկզբունքի նըկատմամբ խիստ շատ մեծ է և նշանավոր. վասնզի մեր հասարակությունները ըստ մեծի մասին սովոր չեն իրենց հասարակական գործերը յուրյանց աշխատության և սակավիք ձեռնավությամբ առաջ տանին. այլ միշտ հույսերը կարող անձանց վերա գնելով յուրյանք անփուլթ կմնան, ուստի և գործքերը հառաջ չեն գնալ. ավելի լավ է, վոր 100 մարդ մի-մի կույեկ տալով մի մանեթի հասարական գործ կատարվի, քան թե մի մարդ մի մանեթ տալով. վորովհետև առաջին ճանապարհը ավելի հաստատուն և տևական է, քան թե յերկրորդը»\*:

Տեղին է նշել, վոր Լեոնինը ևս բարձր է գնահատել իրենական կազմակերպչական այս ձևը:

1914 թ. գրած «Բանվոր դասակարգն ու բանվորական մամուլը» հոդվածում Լեոնինն ասում է. «Հարյուրավոր բանվորներից կույեկներով հավաքված տաս ուրբին թե գաղափարական և թե կազմակերպչական տեսակետից ավելի կարևոր ու արժեքավոր է, քան բուրժուա հարուստ բարեկամներից հավաքած հարյուր ուրբին»\*\*:

1860-ական թվականների վերջերին ՎՈՐԲԱՆՆԱՄ ընկերության մեջ առաջ են գալիս շերտավորում և տարաձայնություններ:

Ընկերության մեջ յեղած ուսուցչության և արհեստավորության ավելի ձախ ու արմատական տարբերը փորձում են բարեգործական, ընթերցասիրական աշխատանքի նեղ սահմաններից դուրս գալ, յերիտասարդության մեջ տանել նաև ազգային — քաղաքական աշխատանք:

\* «Արարատ», 1869 թ., սեպտեմբեր:

\*\* Լեոնին — հատ. 17, էջ 422:

Շուտով ընկերութեան ունեւոր անդամներէից վոմանք հե-  
ռանում են՝ դադարելով մուծել շարաթական տուրքերը, ավելի  
ձախ ու դեմոկրատական տարրերն անջատվում են այդ ըն-  
կերութեանից և տեղի մասնավոր դպրոցի ուսուցիչ ԱՐՄԵՆ  
ԳՐԻՏՅԱՆԻ գեղավարութեամբ, 1869 թ. ապրիլին հիմնում  
ԲԱՐԵՆՊԱՏԱԿ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ:

Բնորոշ է, վոր ազգային-դեմոկրատական շարժման սաղ-  
մնավորման այս շրջանումն անգամ, տեղի ունեւոր տարրերը,  
ինչպէս առհասարակ հայ առևտրա-արդյունաբերական բուր-  
ժուազիան, խստորեն սահմանազօվում են ազգային-դեմոկ-  
րատական տարրերից, լքում ցարիզմի ազգային—զաղու-  
թային քաղաքականութեան դեմ բարձրացող դեմոկրատա-  
կան Ֆրոնտը: Բարենպաստակ ընկերութեանն Ալեքսանդրա-  
պոլի ազգային-դեմոկրատական շարժման սկզբնավորման ար-  
տահայտութեանն է:

Այդ ընկերութեան ծագումը հետևյալ կերպ է նկարա-  
գրում նրա կազմակերպիչ անդամներէից մեկը՝ Պետրոս Հայ-  
կազունին:

«Անցյալ ապրիլ ամսում կազմվեցավ Ալեքսանդրա-  
պոլում մի ընկերութեան՝ «Բարենպաստակ» անունով, վո-  
րի նպատակն է ազգին ծառայելու... Ալեքսանդրապո-  
լում սորանից ի վատ ուրիշ ընկերութեաններ ևս տես-  
նված էյին, միայն կարճ միջոց տեւութեամբ, վորոնց  
շարքումը կհամարվի նաև պարոն Մ. Արարաշյանցի ա-  
ռաջարկութեամբ գոյացածը անցյալ տարի, վորն այժմ  
կող ի կող և շատ դանդաղութեամբ քայլ է փոխում  
և գրեթէ հոգեվարք է, վոմանց անտարբերութեամբ և  
անխոհեմութեամբ, այնպէս վոր գանձարանում գրեթէ  
վոչինչ չկա:

Սորանով իմ դիտավորութեանս այդ ընկերութեանը  
պարսպելը չէ, այլ դորան խրատել, վոր բարի նախան-  
ձով լցված հոգացողութեան և փուլթ ունենան մեր Բա-  
րենպաստակ ընկերութեանից գերազանցելու կամ այս  
նորակազմ ընկերութեանը տեսնելով՝ առաջագետ աշխա-

տեն իրանք ևս մեծամեծ քայլեր փոխելու, հինը վերա-  
նորոգելով և բարեկարգելով. խնդիրն այս է: Վորովհե-  
տե թողուլ մի բարենպաստակ գործ հոգեվարքութեան  
մեջ, հիրավի յուրաքանչյուր սրտացավ հային ցավ  
լինելու յէ: Հույս ունիմ, վոր հասկացող յերիտասարդ-  
ները ուշադրութեան կգարձեն մեր ասածներէ վրա և  
մեր խոսքերը չեն լինիլ «ձայն բարբառոյ յանապատի»:  
Կարող եմ ասել, վոր այն բարենպաստակ ընկերութեանը  
յերկարատե և արգասավոր լինելու յէ, վորովհետե հի-  
մը ավազի վերա չէ: Ուրեմն այդպիսի հիմնադիր խելա-  
ցի ճարտարապետին հարկավոր է սրտի գոհունակու-  
թեան և շնորհակալութեան նվիրել հրապարակով, վո-  
րը խրախուսված՝ ավելի մեծամեծ գործերի ձեռնամուխ  
լինել աշխատի»\*:

Մկրտիչ վարժապետ Արարաշյանցը, վորը Վորբախնամ  
ընկերութեան մեջ տարել է չափավոր գիծ, այդ մասին հե-  
տևյալն է գրում.—

«Այս տարի մի քանի ամսով առաջ՝ մի քանի պա-  
տանիներ, ուսումնասիրական հոգովով վառված յուրյանց  
գործունեյութեանը ցույց տալու նպատակով՝ ձեռնար-  
կեցին մի նոր ընկերութեան ևս կազմել շարաթական  
հինգ-հինգ կուպել տուրքով. այս ընկերութեանը թե-  
պէտ առայժմ սննդատակ մականունը կըկրէ յուր վե-  
րա՝ վորպէս թէ ապագա ժամանակի պահանջը ինչ ազ-  
գաստ պէտք վոր հառաջ բերեց, նույն պէտքի հա-  
մար գործադրվի ընկերութեան գումարած գրամը, և  
այսպէս ստանա յուր հատկական անունը. սակայն յուր  
սկզբի ձեռնարկած գործքից յերեկեցավ՝ վոր ըստ մեծի  
մասին համանպատակ է վերոհիշյալ ՎՈՐԲԱՆՆԱՄ  
ըն-  
կերութեանը: Յերանի թե՛ ինչպէս վոր սոցա գլխավոր  
աշխատողներին առաջարկվեցավ, մեր ազգի պատմու-  
թեան մեջ հաճախակի հիշատակված բաժանման վրասա-

\* «Մեզու Հայաստանի», 1869 թ., № 23, սպաստսի 30:

սխիստ գեղարարական խրատ առնելով՝ վորբախնամ ընկերութեան հետ միասնային պահելով և յուրյանց առանձին մասնավոր նպատակը»\*:

Գովար չէ նկատել, վոր Արարաջյանցի մոտ խոսում է Վորբախնամ ընկերութեան ղեկավարի կիրքը: Նա դեմ է յեղել Բարենպատակ ընկերութեան կազմակերպմանը, դրա համար ել ամեն կերպ փորձում է ցույց տալ, վոր նոր ընկերութեանը չի տարբերվում հին ընկերութեանից, նույնիսկ «աննպատակ» է անվանում նրան, չնայած վերջում հարկադրված է խոստովանել, վոր նոր ընկերութեանն ունեցել է իր առանձին, մասնավոր նպատակը: Արարաջյանցը այս հուզվածում իր տենդենցիոզ լինելը մասնում է նաև Պետրոս Հայկազունու մասին իսկ զբաժ ծանոթագրութեան մեջ\*\*:

Բարենպատակ ընկերութեանը կազմվելով Վորբախնամ ընկերութեանից հեռացած արմատական և պրոգրեսիվ տարրերից, հետագայում լրացնում է իր կազմը տեղի ուսուցիչներից, աշակերտներից ու արհեստավորներից: Ընկերութեանը, ըստ ժանդարմական վարչութեան նյութերի, ունենում է 43 անդամ: Նույն այդ ավյալների համաձայն, անդամները թիվը իբր թե սահմանված կանոններով 50-ից ավել չպետք է լիներ, այնինչ մեր ձեռքի տակ յեղած 1869 թվականի կանոնագրութեան համաձայն, անդամների թիվը չի սահմանափակվել\*\*\*:

\* «Արարատ», 1869 թ. սեպտեմբեր:

\*\* Նույն տեղ:

\*\*\* Մեր ձեռքի տակ յեղած 1869 թ. կանոնագրութեան և ժանդարմական վարչութեան գրութեաններում ընկերութեան կանոնագրութեանից մեջ բերված վորոշ կետեր, ինչպես նաև ընկերութեան անդամների հարցաքննութեաններից մեջ բերված մի քանի փաստեր իրար չեն համապատասխանում: Առաջին դեպքում կարելի չէ յենթադրել, վոր հետագա տարիներում ընկերութեան կանոնագրութեանը փոփոխված լինի, իսկ յերկրորդ՝ անկասկած է, վոր հարցաքննվողները՝ հեռքը կորցնելու նպատակով, վոչ ճիշտ տեղեկութեաններ տված լինեն ժանդարմական մարմիններին: Բացի այդ, նկատելի չէ, վոր ժանդարմական որդանները

Վորբախնամ և Բարենպատակ ընկերութեաններից զատ, այդ ժամանակ Ալեքսանդրապոլում գործում էյին նաև Ընթերցասիրական և Արմատ սիրո ընկերութեանները:

Ընթերցասիրական ընկերութեանը՝ տարեկան 3-ական մանեթ բաժանորդագրութեամբ կազմվել էր վիճակային դըպրոցին կից յեղած նախկին ազգային ընթերցարանի բազայի վրա: «Ազգային ընթերցարանը թեպետ սրանից մի քանի տարի առաջ էր հիմնված, բայց յերբեք բավարար վիճակի մեջ չէր յեղած, վասն վորո յերկիցս կարճատև ընթացք ունենալուց հետո բոլորովին խափանեցավ: Սակայն ուսումնարանի կարիքն հետզհետե ստիպում էյին մի այդպիսի ընթերցարան կամ գոնե գրադարան ունենալ, և հոգաբարձութեանը լավ համարեց վերականգնել նույն ընթերցարանը»\*:

Այս ընթերցարանի շուրջը համախմբված ընկերութեան անդամները թիվը յեղել է 41 հոգի, նպատակը մնացել է գրեթե նույնը, ինչ սահմանված էր նախկին ընկերութեան կանոնագրութեամբ. «Պետք է հաղորդել ընթերցասեր ազգայնոց քաղաքիս և ոտարականաց զանազան ոգտավետ գրյանք, լրագրներ և որագրներ հայ և ռուս լեզվով, վորից պետք է ոգտվեն տեղական ազգային հոգևոր ուսումնարանի առաջնակարգ աշակերտները, նույնպես և հայ ազգի վկայյալ չըքավոր ընթերցողներն ձրիապես»\*\*:

Յեթե Ընթերցասիրական, ՎՈՐԲԱԽՆԱՄ, ԱՐՄՍՏ ՍԻՐՈ ընկերութեաններում տեղ էյին գտել և վորոշ գեղարարում տեր ու տնորեն էյին Ալեքսանդրապոլի խոշոր վաճառականները, աղաները, ապա ԲԱՐԵՆՊԱՏԱԿ ընկերութեան անդամների ճնշող մեծամասնութեանը յեղել են ուսուցիչներ, պետական ստորին պաշտոնյաներ, արհեստավորներ ու աշա-

շվոթել են Կրիտյանի և մյուս ընկերութեանների գործունեյութեան առանձին մոմենտները, այնպես վոր ժանդարմական վարչութեան նյութերն ամբողջապես ճշմարտացի համարվել չեն կարող:

\* «Մեղու Հայաստանի», 1870 թ., հունիս 22:

\*\* «Արարատ», 1870 թ., սեպտեմբեր:



վան մասին: «Մեղու Հայաստանի» թերթն իր 1866 թվականի ապրիլի 16-ի և մայիսի 21-ի համարներում մի քանի կցկառուր լուրեր եր տպել Նալբանդյանի մահվան մասին, կենսագրական տեղեկություններով, և յեթե Կրիտյանն այլ ազդյուններեց տեղեկացած չլինեք Նալբանդյանի մահվան մասին, «Մեղու Հայաստանի»-ում (վորի հետ նա կապված է յեղել) անալոյման կարգացած կլինեք: Ինչ վերաբերում է Նալբանդյանի նկարները տարածելուն, ապա պետք է ասենք, վոր նրա մահվանից հետո լայն չափով տարածում էյին ազգային-դեմոկրատական խմբակները, վորոնք և իրենց վրա էյին վերցրել Նալբանդյանի գաղափարների ու գործի շարունակելը, թեև վնչ այն մարտական, հեղափոխական վոգով, ինչ մենք տեսնում ենք Նալբանդյանի մոտ:

Նալբանդյանի նկարներն ստացվում էյին Թիֆլիսից և համուում մինչև Յերևան: 1874 թ. ապրիլի 9-ի № 33 գրությամբ Յերևանի ժանդարմական վարչության պետ մայոր Զորտովսկին նորին կայսերական մեծության սեփական դիվանի յերրորդ բաժանմունքին այդ մասին հետևյալն է գրում. —

«Վերջին ժամանակներն այստեղ, ինչպես ինձ տեղեկացրել են, յերիտասարդ հայերը Թիֆլիսից ստանում են հայ գրող Նալբանդյանի լուսանկարները, վորը, ինչպես ասում են, 50-ական թվականներին իր ազատամիտ ու հակահառավարական շարադրությունների համար աքսորված է յեղել Սարատովի նահանգի Կամիշլին քաղաքը, վորտեղ և նորերս\* վախճանվել է: Նկարների շուրջը գրված են Նալբանդյանին գովաբանող խոսքեր, ինչպես, որինակ՝ «հայրենիքի փրկարարին» կամ, «ազասն աստված»\*\*:

Մեզ հասած շարադրություններից մեկի մեջ Կրիտյանը,

\* Զորտովսկին սխալվում է. Նալբանդյանը մեռել էր 1866 թվին:  
\*\* Архив Революции (Москва), Дело III отделения собственной его императорского величества канцелярии, сведения по Эриванской губернии.

Նալբանդյանի որինակով, ըմբոստանում է ազգի ճնշողների դեմ, կոչ է անում հայերին վոտքի յեխել թոթափելու խավարի ու ստրկության լուծը: 1869 թ. ոգոստոսի 1-ին Բաբենպատակ ընկերության վերաբերյալ գրած իր շարադրության մեջ Կրիտյանն ասում է. —

...«Իմ սիրելի հանճարներ, դժբաղդ Հայաստանը, մոռացված, տխրությամբ ու ցավով լեցուն, կոչ է անում ձեզ՝ հայերիդ, սիրելի տոհմակեցներ, մի՞թե կարելի յեբավարար լույսին ապրել իբրև կույր: Մի՞թե կարելի յե(բազմակետեր): Թող չգրկեն Ձեզ խավար գիշերներն ու թանձր ամպերը:

Իմ սիրելիք, յեթե վորբացած մեր հայրենիք Հայաստանը չի մոռացել իր սիրով իր սերունդներին և այժմ լայնատարած բազուկներով պատրաստ է իր գիրկըն առնել ճշմարիտ հայերին ու հայրենասերներին, ապա ո՞վ ենք մենք այսուհետև: Մի՞թե մենք հայեր չենք, մի՞թե մենք հայերի սերունդ չենք, մի՞թե մեր յերակներում չի յեռում հայրենասիրական ազգային արյունը, արյունն, վորով միայն կարելի յե փրկել ազգը խորամանկ ու խարդախ ուսաներից, կատաղի թուրքերից ու ատելի պարսիկներից»: (Ընդգծումն իմն է. Վ. Պ.):

Կրիտյանի այս շարադրությունից թերևս յեզրակացողներ լինեն, վոր դա ուղղված է վոչ թե ուսական, թուրքական կամ պարսկական բռնակալության լծի դեմ, այլ առհասարակ ուսաների, թուրքերի և պարսիկների դեմ: Չպետք է մոռանալ, վոր Կրիտյանի բողոքը, ինչպես այստեղ, նույնպես և իր մյուս (ու խմբակի անդամների) գործերում, ուղղված է ազգի ճնշման դեմ, իսկ այդ ճնշումը գալիս էր ուսական կամ թուրքական կառավարությունից ու տիրող, շասական կամ թուրքական կառավարությունից և վնչ յերբեք ուս, թուրք կամ պարսիկ ժողովրդից: Ռուս կամ թուրք ժողովուրդն ինքը ևս շահագործվում էր սեփական բուժուս-կալվածատիրական դասակարգերի կողմից, նա չէր ճնշում և չէր էլ կարող

ճնշել հայ ժողովուրդին, հետևաբար Կրիտյանը և ընկերու-  
թյունը չեյին կարող արյունոտ կռիվ հայտարարել մի ժո-  
ղովրդի, վորն իրեն վոչ միայն չեր ճնշում, այլև հաշտ եր  
իրեն հետ:

Ինչ վերաբերում է շարադրության վերջում՝ լայն  
տարածում ստացած «ազգային հերոսներ» Տիգրանի կամ  
Արամի «հեղինակութունը» ոգտագործելուն, ապա պետք  
է ասենք, վոր դա սոսկ միջոց է ծառայել ազգային-ազա-  
տագրական պայքարի սաղմնավորման տվյալ պայմաննե-  
րում, դեռ ևս դասակարգային գերտակցության չհասած մաս-  
սային կազմակերպելու և վոտքի հանելու համար: Ինչպես  
հայտնի յե, հետագայում, անգամ 1884—85 թ. թ. հայկական  
դպրոցների փակման առթիվ ազգային-դեմոկրատների հրա-  
տարակած «Հայ յեղբայրներ և հայ քույրեր»  
թռուցիկում ևս մենք հանդիպում ենք նման փաստերի: Դա  
մեր անցյալի հետամնաց, ծխական իրականության ազդեցու-  
թյան ու նրա մեջ գործելու արդյունք է և ուրիշ վոչինչ:

Հայ ազգային-դեմոկրատական շարժման պատմության  
մեջ Նալբանդյանից հետո, Կրիտյանից առաջ մենք քիչ ենք  
հանդիպում հայ ժողովուրդը ուսական ու տաճկական բռնա-  
կալության ճանկերից ազատագրելու նման արմատական պա-  
հանջ առաջադրող փաստերի: Այդ քչերի մեջ, անպայմանո-  
րեն, իր պատվավոր տեղը պետք է գրավի Արսեն Կրիտյա-  
նի Բարենպատակ ընկերության, վորպես քաղաքական պրատ-  
ֆորմ առաջադրած այս գոհումնետը, վորը նրան բարձրաց-  
նում է հայ ազգային դեմոկրատների շարքը, և, իր թերու-  
թյուններով ու անհետևողականությամբ հանդերձ, դարձնում  
ուսումնասիրության արժանի մի գեւոր:

Հետաքրքիր անձնավորութուն է նաև Պետրոս Հայ-  
կազունին, Կրիտյանի ընկերության ակտիվ անդամ, նրա  
մերձավոր գործակիցներից մեկը:

Հայկազունու թողած գրական ժառանգութունը, ինչ-  
պես նաև ժամանակակիցների հիշողությունները միաբերան  
հաստատում են նրա վերին աստիճանի աշխատասեր, խիզախ

և, վոր ամենակարեւորն է, շնորհքով կազմակերպիչ լինելը:  
Նա մեկն է յեղել այն արմատական մտածողներից, վո-  
րոնք գծովեցին Վորբախնամ ընկերության չափավոր ուղ-  
ղությունից և վորդեգրեցին Կրիտյանի հորդորած արյունոտ  
պայքարի ուղին:

Ժամանակակիցներն իբրևամբ նրան ճանաչել և վեր-  
հիշում են իբրև նոր հովերով տարված, ըմբոստ և տեմպե-  
րամենտի տեր մարդ: Հայկազունին չի յեղել այն քաղքենի  
ազգային գործիչներից, վորոնք, ինչպես իր հոգվածներից  
մեկում իրավացիորեն նա նշում է, հետու յեն փախել այն  
ամենից, ինչ իրենց համար ոգտավետ չի յեղել: Նրա ըմ-  
բոստ բնավորութունը և հասարակական ջիղը յերբեմն նը-  
բան զցել են ամենաբարդ ու խճճված հարցերի մեջ, և բո-  
լոր դեպքերում նա հանդես է յեկել հասարակական շահերի  
պաշտպանի դերում: Այս տեսակետից բնորոշ է 60—ական  
թվականներին Թուրքահայաստանում վոտքով կատարած  
նրա շրջագայությունը, վորի գրգապատճառների կամ ինչ  
նպատակների հետ կապված լինելու մասին, դժբախտաբար,  
առայժմ խոսել չենք կարող՝ ձեռքի տակ անհրաժեշտ  
նյութեր չունենալով: Բայց անհավանական չենք համարում,  
վոր դա յեղած լինի հենց Ընկերության հանձնարարու-  
թյամբ՝ տաճկահայերի կյանքն ուսումնասիրելու, տաճկա-  
հայ շարժման հետ կապվելու նպատակով:

Կրիտյանի ու Ընկերության ուղղության և գործունե-  
յության տեսակետից բնորոշ է նաև Հայկազունու պայքարը  
Ալեքսանդրապոլի հոգևոր կառավարության անդամ, Եջմիած-  
նի գործակալ Հովսեփի ավագ քահանա Կոստանյանցի դեմ:

Հովսեփի ք. Կոստանյանցը յերկար տարիներ շարունակ  
լինելով Ալեքսանդրապոլի հոգևոր կառավարության գործե-  
րի տեր ու տնօրենը, Եջմիածնի մի քանի ազդեցիկ վեղա-  
բավորների հովանավորությամբ, իր ձեռքն եր առել Ալեք-  
սանդրապոլի թեմի ամբողջ հոգևոր ու նույնիսկ աշխարհիկ  
գործերը և աջ ու ձախ թելադրում եր իր կամքը: 1860—  
70-ական թվականներին նա ամենուրեք հայտնի յեր դար-

ձեւ իբրև չափազանց աղբեցիկ (հաճախ նրան անվանում էյին Շիրակի Բխամարկ) և միաժամանակ վորկրամուլ ու կաշառակեր մի մարդ: Հետաքրքիրն այն է, վոր Տեր-Հովսեփի բոլոր ապորինի գործողությունները, ժողովրդական գումարների յուրացումներն ու ակնհայտնի կաշառակերությունները իր ժամանակին որինականացվում էյին կամ ծածկվում էջմիածնի և մասնավորապէս կաթողիկոսի մտերիմ ու ազդեցիկ մի կղերի՝ «Արարատ»-ի խմբագիր Վահրամ վարդապետ Մանկունու կողմից:

Մեր ձեռքի տակ յեղած՝ Տեր-Հովսեփի և Մանկունու համակագրություններից մարդ այն սոցալորությունն է ըստանում, վոր կարծեք թե այդ յերկու, իբար շատ նման բռնակալ վեղարավորները դաշինք են կնքած յեղել Շիրակը կուլ տալու համար: Մանկունին անվերջ գրում է դրամ, սուխարի, գինի, սապոն և այլ մթերքներ ու ապրանքներ ուղարկելու, իսկ Տեր-Հովսեփը՝ իր ուղարկածներէ մասին: Այս է նրանց նամակագրության անտեսական բովանդակությունը: Այդպիսի պայմաններում, հասկանալի յե, շատ դժվար էր դուրս գալ Տեր-Հովսեփի դեմ, մերկայցնել նրա արարքները: Բայց իր ժամանակին գտնվում են հանդուգն մարդիկ և դրանցից առաջիններից է ահա, Պետրոս Հայկազունին:

Հայկազունին ամենից առաջ պայքար է տանում դպրոցների, հոգաբարձական ընտրությունների շուրջը՝ մաքրելու ժողովրդական այդ հաստատությունները ժողովրդի թշնամիներից, նրա աշխատանքի վաստակը հափշտակողներից: Նա իր պայքարի սլաքն ուղղում է դեպի Հառիճո վանքի դպրոցը, վորի հոգաբարձուն, ինքիշխան տերը Հովսեփ Կոստանյանցն էր:

«Ապացուցված բան է, վոր այն դպրոցները, վորոնք պատրաստում են ուսուցիչներ ու քահանաներ, — գրում է Հայկազունին, — չեն կարող իրենց իսկական նպատակին հասնել, սահմանափակվելով վանական չորս պատերի մեջ: Մեր կարծիքով ավելի ոգտավետ ու նպատակավոր է Ընկերության ունեցած գրամազուլիսը (Հառիճո վանքի գրամագլխի

մասին և խոսքը. Վ. Պ.) միավորել Ալեքսանդրապոլի հոգևոր վիճակային արական սեռի դպրոցի գրամագլխի հետ և զուրավոր կերպով գործ դնել, նույն դպրոցի ավելի լավ և ապահով պայմաններէ տակ դնելու համար»\*:

Հայկազունին դեմ է դուրս գալիս Հառիճո վանքի դպրոցի ժառանգավորաց դարձնելուն, այդ անվան տակ ժողովրդից գումարներ հավաքելուն: Նա հասարակությանն զգուշացնում է իր գումարները չդնել Տեր-Հովսեփի կամ Տեր-Մարտիրոսի անապահով ձեռքը:

«Այժմյան դպրոցը, վոր ունի Հառիճ, չի պահպանվում ըստ արժանվույն... այդ նպատակի համար ամբողջ ազգի ոգնությամբ կառուցված «Գեւորգյան ձեմարանն» անգամ, ահա քանի տարի յե պտուղ չունեցավ, ուր մընաց մի վորևէ Հառիճ կամ մի բուռը մարդիկ...»

Այս ընկերության հոգաբարձու Տեր-Հովսեփը և նորա գործակից ու ընկերության հավատարմատար Տեր-Մարտիրոսը, վորոնց ձեռքով պիտի անցնեն միանվագ և այլ ոժանդակությունները, հայտնի յեն իրենց անցյալ գործերով Մեղու և Մշակ լրագրի ընթերցողներին. իսկ Ալեքսանդրապոլցոց նույնպէս քաջ ծանոթ են դոցա մերձավոր անցյալին, վորոնց մասին շատ խոսվել ու գըրվել է, մասնավանդ յեկեղեցու և ուսումնական հաշիվներէ վերաբերությամբ»\*\*:

1870-ական թվականներին անորինակ սրության է հասնում Տեր-Հովսեփի և համախոհների դեմ սկսված պայքարը, մի պայքար, վորի նախաձեռնությունը պատկանում էր Ալեքսանդրապոլի դեմոկրատական տարբերին, իսկ հոգևոր կառասանդրապոլի դեմոկրատական տարբերին էր Մուքիաս յեպիսկոպոս վարության առաջ հարցը հարուցել էր Սուքիաս յեպիսկոպոս Պարզյանը: Ժամանակակից մամուլը լցվում է հակառակորդ կողմերի հողվածներով: Հետագետե թուլանում է Տեր-Հովսեփի իշխանությունը և այն աստիճան վտանգվում նրա դիրքը,

\* «Մեղու Հայաստանի», 1878 թ., № 45, նոյեմբերի 18, Հուր-Հերի հողվածը:

\*\* Նույն տեղ:

վոր Կարապետ Կոստանյանցը, Տեր-Հովսեփի վորդին, ինչպես գրում է հորն ուղղած նամակներից մեկում, Պետերբուրգում ուսանող ժամանակ, Բ. Պատկանյանի, Կ. Յեղյանի և Սանասարյանի (Պ. Ե. Ս.) ստորագրությամբ ու նրանց ոժանդակությամբ, մամուլի համար հոգվածներ է թխում հոր հակառակորդներին դեմ:

Վտաքի յեն յեղնում Տեր-Հովսեփի բոլոր բարեկամները: «Մշակ»-ում, «Փորձ»-ում Տեր-Հովսեփի անձնական բարեկամ, ալեքսանդրապոլցի բժիշկ Ավետիք Բարսյանը՝ իր սուր հարվածներն ուղղում է Հայկազունու դեմ: «Փորձ»-ում տպված «Հառիճյան հոգաբարձության մասին» հոդվածում նա գրում է,—

«Մեղու Հայաստանին անցյալ տարվա յուր 45 համարի մեջ տպել է և պ. Հուր-Հերի թղթակցությունը: Սորա գլխավոր միտքն այն է, թե վանական դպրոցները, ինչպես որինակ՝ Եջմիածնի ճեմարանն է, ինչպես Հառիճյան ժառանգավորացը կլինի (իբրև յերկրորդական վանական դպրոց), ինչպես՝ կավեւոցները, Արմաշինն է, Յերուսաղեմինն է, ինչպես Խրիմյան հայրիկինն էր Վարդա վանուց մեջ և այլն, յերբեք նշանակություն չունին և չեն կարող ունենալ մեղ համար... Հիբրավի, յեթե բոլոր հայ ազգը բաղկացած լիներ ձեզ պես ծայրահեղ ազատամիտներին, գուցե այն ժամանակ վանքերի մոտ դպրոցներ մեղանում չլինեյին»\*:

Հետաքրքրական է, թե ինչպես Հայկազունին Տեր-Հովսեփի և յուրայինների դեմ պայքարելիս ձևուն կերպով, ինչպես իր ժամանակին Միքայել Նալբանդյանը, վոչ միայն խուսափում է կաթողիկոսի ձեռքը դենք տալուց, այլ և փորձում է, ի վնաս հակառակորդների, ոգտագործել նրա ազդեցիկ դիրքը:

«Յեթե հոգևոր վարչությունը ցանկանում է, փորչկորչի հասարակական և դպրոցական շահերը,— գրում է

\* «Փորձ», 1879 թ., № 1, էջ 216—218. Ընդգծումը հեղինակինն է. Վ. Պ.

Հայկազունին,— թող շարունակի Սուքիաս սրբազան Պարզյանի հարուցած հարցերը, կտեսնե՛ք վոքան այդպիսի շահեր կուլ են գնացել անհագ վորկորներին անարժան քահանաներին: Բայց չե, ինչ վոր ոգուտ չե, նրանից հեռու յեն փախչում, ինչ հարցի տակից պոչեր պիտի դուրս գան մանուկ սրբազաններին, ծածկում են... մեր մեջ չկա յերկպառակտություն, այլ այդ մի հնարովի խոսք է և մի յերեակայություն, վորը ձգում են և աշխատում մի քանի շահամուլ ու ազգակործան հոգևորականներ այդպես ներկայացնել մեզ ընդհանրության առաջ, վորով կարողանան պարզած ջուրը պղտորել, վորպեսզի ձուկ վորսան, ինչպես մինչև հիմա արած են, և նորին վեհափառությանն ապացուցանում են դատաստանի յենթարկված քահանայի խոսքի արգարությունը, թե՛ «քաղաքի կենսիմ կողմն է, և յես նոցա ձեռքով կարող եմ ամեն ինչ գործել», բայց հավատացե՛ք, վոր մեր հասարակության մեջ վաղուց է այդպիսյաց կշիռը վայր ընկել, ինչպես ապացուցվեցավ ներկա թվականիս պատգամավորաց ընտրությունից, վոր կես ձայնի անգամ չարժանացան նոքա»\*:

Տեր-Հովսեփի և հակառակորդների միջև սուր պայքար է տեղի ունենում նաև հոգաբարձական ընտրությունների շուրջը: 1878 թ. հոգաբարձական ընտրությունների ժամանակ, վորտեղ Հայկազունու ասելով\*\* մոտ 1500 մարդ էր հավաքվել, և Ալեքսանդրապոլում առաջին անգամ կանայք ևս ժողովի ելին յեկել, հովսեփականները գլխովին պարտություն են կրում\*\*\*:

\* «Մեղու Հայաստանի», 1878 թ., № 47, Հուր-Հերի հոդվածը, ընդգծումն իմն է. Վ. Պ.:

\*\* «Մեղու Հայաստանի», 1878 թ., № 37, սեպտեմբեր 23, Հուր-Հերի հոդվածը:

\*\*\* Տեր-Հովսեփի և յուրայինների դեմ մղած իր պայքարի ընթացքում Հայկազունին սշակել էր իր վերաբերմունքը և մոտեցումը դե-

Հայկազունու հասարակական-քաղաքական դեմքը բնորոշելու առաջին փորձը հետաքրքիր է նաև նրա մի հոդվածը Ալեքսանդրապոլի կլուբի մասին: Այնտեղ նա խոսելով 12 տարի առաջ հիմնված ազնվականների կլուբի մասին, խիստ ծաղրի յենթարկելով, վոր այդտեղ ազնվականները հավաքվում են կանաչ սեղանի շուրջը, վորպեսզի շուտ-շուտ «СТУК» դռչեն, առաջարկում է հիմնել այնպիսի կլուբ, վորը կըթող լուսավորութուն տարածող լինի:

«Հասարակական ամենահարկավոր և ոգտավետ հաստատութունները մեկն էլ կլուբն է իրիսկական նշանակութամբ, ուր հավաքվելով մի հայտնի դասակարգ՝ փոխարինում են մտքեր, զանազան դադափարներ և վորից հետևում են համոզմունքներ միութուն, վոր միջոց և առաջադիմության: Այստեղ տարբեր կարծիք ունեցող լրագրներ էր և զանազան ուղղության տեբ որագրերն էր ընթերցում մեծ դեբ է խաղում, վորովհետև դորանից շատ անգամ ծագում են ոգտավետ բանակը»

պի հոգևոր առաջնորդները: Բնորոշ է, վոր նա համակրանքով ու գովեստով է վերաբերվել Պորենացու նշանավոր վորքի հետևյալ քառյակներին.

Դու գուշակիր, թե ինչ տգետ,  
Չար հովիվներ պիտի հառնեն,  
Առաջնորդներ կույր և անպետ,  
Մեր ճանապարհ մուրեցնեն:

Վարդապետներ ինքնահավան,  
Տխմար, անկիրթ և անպիտան,  
Առանց տոտվածային կոշման՝  
Հափշտակած կարգ սրբազան:

Նոքա ընարված են արծաթով,  
Յեվ սուրբ հոգու շնորհից զուրկ են,  
Գայլերի պես անհագ գոլով,  
Իրանց հատը հոշտում են:

Թեմակալներ սնափառ են,  
Ճշմարտութուն չեն ճանաչում,  
Մուրք դիրք քարոզել թողել են,  
Մուրք խորհուրդներ են վաճառում:

ուր վրեժ և աննշամարելի կերպով հառաջ է շարժվում մարդու մտավոր կյանքը: Մի խոսքով այդ հաստատության սյամի վրա վոտք կոխողն անկարելի է, վոր գուրկ մնա քաղաքական ընկերութունից: Սորան ապացույց կարող է համարվել Անդրիայի լուսավորության պատմությունը, վորո մեջ նշանավոր տեղ է բռնում հասարակական վերոհիշյալ հիմնարկութունը: Ուրեմն ինչո՞ւ, պատվելի քաղաքացիներ, մենք էլ չհիմնենք այդպիսի կըթող, լուսավորութուն տարածող հաստատութուն»\*:

Պետրոս Հայկազունու հասարակական-քաղաքական դեմքը մենք լրիվ ներկայացրած չէինք լինի, յեթե չխոսեյինք նրա դեպի ցարիզին ունեցած վերաբերմունքի մասին:

60—70-ական թվականներին նրա գրած բազմաթիվ հոդվածների և մի քանի չափածո, վոչ բոլորովին արվեստագուրկ, ստեղծագործութունների մեջ, դեպի ցարիզին ունեցած նրա բացասական վերաբերմունքը ցայտուն կերպով արտահայտվում է Կողբից «Մեղու Հայաստանի» թերթին գրած հոդվածների մեջ:

1874 թ. խոսելով այն մասին, վոր Կողբի 400 տուն (3200 շունչ) բնակիչներից միայն 150 տունը հող ունի, 50-ը արհեստավորներ և վաճառականներ են, իսկ մնացած 200 տունը զբաղվում են ազահատությամբ և յուրաքանչյուրը տարեկան ստանում է 68 ուրլի 80 կոպեկ, գրում է. «Ո՞րն դրեմ, ասացեք, այդ գումարով կբավականանան չորս մարդ, կես տուն, հացի տա, հագուստի, վառելիքի, ըմպելիքի (տեղիս անհրաժեշտ կարիքներից մին) և այն, թե՛ կառավարության հարկը»\*\*:

1875 թ. Կողբի աղահանքերի բանվորները գործադուլ են անում. բանվորների մի մասը վորոշ ժամանակից հետո

\* «Մեղու Հայաստանի», 1878 թ. № 39, հոկտեմբերի 7, Հուր—Հերի. հոդվածը. ընդգծումն իմն է, Վ. Պ.

\*\* «Մեղու Հայաստանի», 1874 թ., № 51, դեկտեմբերի 21, Հուր—Հերի. հոդվածը. ընդգծումն ի եմն. Վ. Պ.:

գաղտնի համաձայնութեան և գալիս կապարառուի հետ և սկսում են աշխատել: Ապրիլի 21-ին գործադուլավոր բան-վորները տեղեկանում են այդ մասին և նույն օրը աշխատողներին բռնում ձեռնում են: Սոսերով այս դեպքերի մասին, Հայկազունին հրահրում և խորհուրդ է տալիս բանվորներին, վորպեսզի նրանք գործադուլ անեն առաջիկա 1876 թվականին, վորովհետև կառավարութեանը այդ թվին աղի վրա մաքս է դնելու\*:

Կրկնակի ցենզուրայի տակից դուրս յեկած այս սողների մեջ անգամ, դժվար չէ նկատել Հայկազունու հակակառավարական տրամադրութեանը: Զուր չէր ժանդարմական վարչութեանը հետաքրքրվում Հայկազունու կողքում ունեցած գործունեութեամբ: Հակացարական այդորինակ տրամադրութեանները միայն Կրիստյանի կամ Հայկազունու մոտ չէ, վոր մենք նկատում ենք, դրանք այս ու այն չափով արտահայտվել են նաև ընկերութեան մյուս անդամների մոտ:

Հովհաննես Տեր-Միրաքյանն իր հիշողութեաններին մեջ պատմում է, վոր Հայկազունին մոտ եր Աշուղ Զիվանու հետ, իսկ Մոսկվայի Լազարյան ձեմարանից վերադարձած Ստեփան Վեհապետյանի հետ հաճախ էլին խոսում Նալբանդյանի ու Արովյանի, ավելի շատ՝ Նալբանդյանի մասին: Ի՞նչ էլին խոսում և ի՞նչ առիթով, հեղինակի հիշողութեանն այդտեղ լուծում է, իսկ մենք միայն այդ հիման վրա հիշատակութեանից բացի, ուսել վոչինչ ասել չենք կարող:

Կրիստյանի խմբակի ուղղութեանն ըմբռնելու տեսակետից հետաքրքիր անձնավորութեան է նրա մի ուրիշ անդամը՝ ԿԱՐԱՊԵՏ ՄԱՏԻՆՅԱՆԸ:

Կարապետ Մատինյանը, ինչպես ընթերցողը կնկատի մեր աշխատութեան նախորդ գլուխներում նրանից արված մեջբերումներից, դեմոկրատական, յերբեմն՝ նարոդնիկական գաղափարների ազդեցութեան տակ է գտնվել:

\* «Մեղու Հայաստանի», 1875 թ., № 20, մայիսի 31, հուլիսի 12-ի հոդվածը:

«Մեղու Հայաստանի»-ի էջերում, 1874 թվականին, նա բողոքում է գյուղացիների շահագործման, թալանի դեմ, անարգանքի սյունին գամում Ալեքսանդրապոլի վաճառականներին՝ ցույց տալով, վոր նրանք «միայն ազրուկի նման ծծում են խեղճ գյուղացիների արյունը»: Բացի այս, Մատինյանն առաջիններից է, վոր մամուլի միջոցով ընթերցողների ուշադրութեանն է հրավիրել ՄՄԲԱՏ ՇԱՀ-ԱԶԻԶՅԱՆԻ 1865 թվականին Մոսկվայում լույս տեսած «Լեվոնի վիճակ» պատմական-քաղաքական նշանավոր յերկի վրա, մի գործ, վորը, ինչպես հայտնի յե, Նալբանդյանն արտավայրում կարգավոր՝ ասել է— «Լեվոնի վիճակ — իՄ վիճակ է»:

Նա դժգոհում է, վոր համաքաղաքացի Հակոբ Փամբուխյանը Մեղվի էջերում գովաբանելով Ռաֆայել Պատկանյանի տպարանում տպված վերջը կիմանաք աշխատասիրողի «Հայոց ազգի ուսումնասիրութեանը, ուսումնասիրաները և ուսուցիչները» (1865 թ., Ս. Պ. Բ.) աշխատութեանը, ինչպես և Միքայել Միանսարյանի «Քնար հայկական» (1865 թ. Ս. Պ. Բ.) և այլ գրքերը, անուշադրութեան է մասնել Սմբատ Շահաղիլյանի «ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԾՇՄԱՐԻՏ ՈՒՏԻՆ ՅԵՎ ՀԱՌԱԶԱԻԻՄՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՎԱԾ, ԾՇՄԱՐԻՏ ԳՈՎՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԻ ԱԶՆԻՎ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՔԸ»:

Մատինյանը չի քաշվում իր և իր ընկերների (ընկերութեան) կողմից ի գիտութեան Լեվոնի վշտի վխտացող թշնամիների հրապարակով շնորհակալութեան և հարգանք հայտնել Ս. Շահաղիլյանին՝ «Յուր գեղեցիկ աշխատութեան համար, բարեմաղթելով, վոր այսուհետև ևս հառաջընթաց լինի համազգային ոգտին ճշմարտապես ծառայելու»\*:

Մատինյանը, ինչպես և ընկերութեան մյուս անդամները, հավանորեն չեն անդիտացել այն պարզ բողոքական ա-

\* «Մեղու Հայաստանի». 1869թ., № 14, ապրիլի 12:

ուջ, վոր Լեվոնի վիշտը — դա Նալբանդյանի վիշտն է կամ առնվազն հիշեցնում է նրան: Նման վերաբերմունքը դեպի Նալբանդյանի անձնավորութունն ու հիշատակը, նրա աշխատությանը ծանոթ լինելը, իրենց հերթին առանձին արժեք ու կարևորութուն են տալիս Կրիստյանցի ընկերությանը: Յեվ յեթե յերբևե Կրիստյանը կամ նրա ընկերությունը Արսեն Թոխմախյանի պես Շշմանյանների կողմից մեղադրվելին նալբանդյանականության մեջ, ինչ խոսք, վոր նրանք ևս, հանդուգն Թոխմախյանի նման, պիտի բացականչելին, թե՛ «մենք հանգուցյալի հիշատակի հետ ուրախությամբ կբարձրանանք Շշմանյանները կառուցած կախադանի վերա»:<sup>\*</sup>

Վերջապես, Կրիստյանի ընկերության մի ուրիշ անդամի՝ Ալեքսանդր Աֆրիկյանի գործունեյությունը ևս լույս է սրվում այդ ընկերության ուղղության վրա, ռժանդակում է մեզ ճիշտ ըմբռնելու այդ:

Ա. Աֆրիկյանը, ինչպես տեսանք, մեկն է Բարենպատակ ընկերության այն անդամներից, վորոնք խիստ կերպով պայքարում էյին առևտրա-վաշխառուական կապիտալի կեղեքման դեմ և պաշտպանում գյուղացիության շահերը: Աֆրիկյանը «Մշակ»-ում, ինչպես իր ընկերը՝ Կ. Մատինյանը «Մեղու Հայաստանի»-ի մեջ, գրեթե բառացի, գրում է, վոր Ալեքսանդրապոլի վաճառականները կամ թուջարները, վաշխառուներն ազահաբար թալանում են գյուղացիներին և միաժամանակ ցավ է հայտնում ասելով, թե չգիտես ինչու գյուղացիներից շատերը հրապուրվելով, թողնում են ձեռքից «Յե՛րկրԱրՊՈՐԾՈՒԹՅԱՆ ՊԵՍ ԱՁՆԻՎ ԱՐՆԵՍՏԸ»:

Աֆրիկյանի մոտ, ինչպես և Մատինյանի, նկատելի յե Մ. Նալբանդյանի Յերկրագործության ազդեցությունը, նա-

<sup>\*</sup> Արսեն Թոխմախյան «Մասիս լեռների հարավային ստորոտներ» (Հրապարակախոսութուն՝ կարգացված ապրիլ 21-ին, Արժրուհու թատրոնում), Թիֆլիս, 1882 թ., էջ VI. Ընդգծումն իմն է, Վ. Պ.:

լուրհիկական վորոշ գաղափարների արտահայտությունը: Ասենք՝ նարողնիկությունը մեր իրականության մեջ, ինչպես այդ Ռուսաստանում էր, իբրև ինքնուրույն, կաղմակերպված հոսանք, գրեթե գոյություն էլ չի ունեցել: Նա մեզ մոտ շատ ավելի թույլ է արտահայտվել, քան, ասենք՝ Վրաստանում: Տիրապետողը մեզ մոտ յեղել է նացիոնալ-դեմոկրատական ուղղությունը, վորի առանձին կրողներն ազդվելով ռուսական հեղափոխական նարողնիկությունից, վերցնելով նրա ուեսլ բովանդակությունը՝ գյուղացիական դեմոկրատիան և պայքարի վորոշ ձևեր ու մեթոդներ, այդպիսին սինթեզի էյին յենթարկում նացիոնալ-դեմոկրատական տիրապետող գաղափարների հետ, ազգային-աղատազրական պայքարի դրոշմը դնում դրանց վրա:

Կրիստյանի և ընկերության աչքի ընկնող այս մի քանի անդամների հակիրճ բնութագրածս ուղղությունն ու գործունեյությունը, կարելի յե ասել, յեղել է ամբողջ ընկերության ուղղությունն ու գործունեյությունը:

Ճիշտ է, ընկերության բոլոր անդամների մոտ հայացքները մի ընդհանրություն դեռ չեն ստեղծվել, ընկերության մեջ յեղած ուսուցիչները, արհեստավորները, յերկրագործները, մանր առևտրով զբաղվող ու պետական ստորին պաշտոնյաները, — ամեն մեկն իր հետ բերել էր առանձնահատուկ մտայնություն, նրանք բոլորը քաղաքական գիտակցության միևնույն մակարդակի և նույնիսկ քաղաքական-գաղափարական միևնույն դիրքերի վրա չեյին կանգնած, բայց շքնորհի վ ընկերության դեկավարի և նրան ավելի քան մոտ կանգնած անդամների դեմոկրատական հայացքները, մի շարք հիմնական հարցերում Բարենպատակ ընկերությունը կարողանում է կանգնել ազգային-դեմոկրատական ճիշտ ճանպարհի վրա, դրսեվորել իր ուղղությունը, թե և վոչ վերջնական, իբրև ազգային-դեմոկրատական հոսանք:

Մեր ազգային շարժման մեջ դեմոկրատական այդ տեն-

դենցը, վորն, ի դեպ, իր սկզբնավորման շրջանում ավելի ան-  
խառն է արտահայտվել, իբրև արթնցող ժողովրդական մաս-  
սայի շարժում, վոչ միայն հակադրվել է ուսական ցարիզ-  
մին, նրա ստրկացնող դադութարար քաղաքականությանը,  
այլև հաշտ չի յեղել մեր ազգային շարժման յերկրորդ հիմ-  
նական տենդենցի՝ ունևոր դասակարգերի շարժման հետ,  
վորը թունավորում էր հայ աշխատավոր մասսաների հեղա-  
փոխական-դասակարգային գիտակցությունը նացիոնալիս-  
տական գաղափարների ախտով և մյուս կողմից լծորդում  
ուսական ցարիզմին:

Կրիտյանի և ընկերության համար խորթ է յեղել հայ  
բուրժուա-նացիոնալիստական գաղափարախոսությունը: Նը-  
րանց վերաբերմունքը դեպի ցարիզմը, հայ լեզվի, դպրոց-  
ների, հայ կղերականության նկատմամբ բռնած դիրքը, մեզ  
իրավունք չեն տալիս այդ ընկերությունը դասել ցարիզմի  
գարշապարը լիզող ազգային-բուրժուական կազմակերպու-  
թյունների շարքը, կապել մեր ազգային-դեմոկրատական  
պրոգրեսիվ շարժումը հետագայում նեղ ազգայնական ուղի-  
ներով առաջնորդած դաշնակ-հնչակյան կազմակերպություն-  
ների հետ:

Հայտնի յե, վոր Մարքսն ու Ենգելսը ազգային հարցը  
կապելով դասակարգային պայքարի հետ, քննելով այն իբրև  
վերջինիս յենթակա մի հարց, չեյին իդեալականացնում առ-  
հասարակ ամեն մի ազգային շարժում: Ավելին. նրանք խիստ  
բացասաբար են արտահայտվել, որինակ, չեխերի և այն մանր  
ազգությունների ազգային շարժումների հանդեպ, վորոնք  
գործիք են յեղել ուսական ցարիզմի ձեռքին, իսկ ցարիզ-  
մը, ինչպես բռնապարտիզմը, ոգտագործում էր մանր ժողո-  
վուրդների ազգային շարժումները՝ յեվրոպական դեմոկրա-  
տիայի դեմ, իր նվաճողական քաղաքականության համար:

Մարքսի և Ենգելսի, ինչպես և բոլոր ճշմարիտ ինտեր-  
նացիոնալիստների համար, արևելյան հարցում որինտա-  
ցիան յեղել է դեպի յեվրոպական դեմոկրատիան՝ ընդդեմ

ուսական արստուլուտիզմի: Մարքսն ու Ենգելսը ուսական  
արստուլուտիզմը համարում էյին Յեվրոպայի ամե-  
նառեակցիոն ուժը, ուեակցիա յեվրոպական  
քաղաքակրթության դեմ, վորը ցանկանում  
էր պատվար կանգնեցնել համաշխարհային  
պատմության առաջ: \* «Յեվրոպական կոնտի-  
նենտում փաստորեն յերկու ուժ գոյություն  
ունի,—գրում է Մարքսը,—Ռուսաստանն իր աբ-  
սոլուտ իզմով և հեղափոխությունը՝ դեմոկրա-  
տիայով... Բայց յեթե Ռուսաստանը նվաճի  
թյուրքիան, նրա ուժերը գրեթե կկրկնա-  
պատկվեն և նա կլինի ուժեղագույնը մնա-  
ցած Յեվրոպայից՝ միասին վերցրած: Այդպիսի  
յեկըը աննկարագրելի դժբախտություն կլիներ  
հեղափոխության գործի համար: Թուրքական ան-  
կախության պահպանումն կամ Ռուսաստանի աննկախիս-  
տական պլանների խափանումն, Ոտոմանյան կայսրության  
բաժան-բաժան լինելու դեպքում, մեծագույն քաղաքական  
կարևորություն ունեցող փաստը կլինի» \*\*:

Մի ուրիշ տեղ, Մարքսը խոսելով Կոստանդինուպոլիսի  
շուրջը Յեվրոպայի և Ռուսաստանի միջև մղվող պայքարի  
մասին, գրում է.

«Կոստանդինուպոլիսը— դա հավերժադաք է, դա  
Արևելքի Հոռն է... Կոստանդինուպոլիսը—դա վոսկյա կա-  
մուրջ է Արևելքի և Արևմուտքի միջև, արևմտյան քա-  
ղաքակրթությունն, արեգակի նման, չի կարող պտտել աշ-  
խարհի շուրջը, չանցնելով այդ կամուրջի վրայով, բայց այդ  
կամուրջով անցնել չի կարելի առանց Ռուսաստանի դեմ  
պայքարելու: Կոստանդինուպոլիսը սուլթանի ձեռքում—դա  
միայն գրավական է, պահված հեղափոխության համար...» \*\*\*:

\* К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, том X, стр. 393.

\*\* К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, том IX, стр. 386.

\*\*\* Նույն տեղ, էջ 440—441:

Ալեքսանդրապոլի դեմոկրատական տարբերը, ինչպես տեսանք, կանգնած էյին անախյարական դիրքերում, «Յե վրոպական ու եակցիայի ու եղեբվե ու գլխավոր ամբոցի» թշնամի բանակում, հայերի՝ իբրև ճնշվող ազգի ազատագրության հարցն էյին բարձրացնում, ազգային կուլտուրայի, լեզվի, դպրոցների խնդրում հակադրվում էյին ցարիզմի ուստիֆիկացման քաղաքականությանը և այդքանով ել Մերձավոր Արևելքի սահմանազլխին զորավիդ հանդիսանում յեվրոպական դեմոկրատիային: Պատահական չէ, վոր այդ հանգամանքը գրավել էր նաև ցարական ժանդարմական որդանների ուշադրությունը:

«Կրիտյանի մոտ խուզարկելիս ձեռք են բերվել մի քանի հոդվածներ, վորոնք շարադրվել են իբրև կոչ ընկերներին, ուր այն միտքն է արծարծվում, թե Բարենպասակ ընկերությունը հիմնադրվում է այն նպատակով, վորպեսզի հնարավորություն արվի հայերին համախմբվելու և անցյալի ազգային փառքի հուշերի վերականգման միջոցով հակահարված տալու ուսուցիչի խորհրդանշաններին»:

Մի այլ տեղ Յերևանի ժանդարմական վարչության պեսը գրում է.

«Ալեքսանդրապոլում գոյություն ունի մի այլ գաղտնի ընկերություն՝ «Բարենպասակ ընկերություն» անունով, վորի հիմնադիր հայ Արսեն Կրիտյանցի մոտ հայտնաբերվել են հայերին ուղղված կոչեր, վորոնք հրավիրում են վերհիշել իրենց նախորդների քաջարի վողին և իրենց արյունով աղատել Հայաստանը խորամանկ ու խարդախ ուսուցիչից»:

Վերջապես հենց այն հանգամանքը, վոր Կրիտյանի և Ընկերության գործը վորակվում է իբրև «ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ» և ժանդարմական վարչության բոլոր

\* Տես հավելված, գոկումենտ IX.

\*\* Տես հավելված, գոկումենտ V.

որդաններով անցնելուց հետո հասնում է Թիֆլիսի դատաստանական պալատ, ապա՝ Կովկասի փոխարքային և նույնիսկ մինչև Պետերբուրգ՝ արդարագրատության մինխարությանը, այդ ամենը մեջ բերված բաղմաթիվ մյուս ապացույցների հետ միասին խոսում են Կրիտյանի և Ընկերության գործի լրջության, հակակառավարական ելության մասին:

Յես արդեն չեմ խոսում Ընկերության, նրա առանձին անդամներին՝ Ալեքսանդրապոլի ունևոր գասակարգերի, հոգեվոր իշխանության շահագործման ու ապորինությունների դեմ, յոգուտ աշխատավորության մղած պայքարի, ազգային լեզվի, դպրոցների ու կրթության տարածման ոգտին ունեցած գործունեյության մասին:

Ալեքսանդրապոլի գեպքերն ավելի քան գնահատելի յեն նաև այն տեսակետից, վոր դա պատմականորեն իբրև անխուսափելի մի յերևույթ հակադրվում էր ցարիզմի հետուեֆորմյան ուժեղ գաղութացման քաղաքականությանը, համընկնում հայերի ազգային կոնսոլիդացիայի շրջանի հետ և ժամանակագրական տեսակետից նախորդում ազգային-դեմոկրատական հետագա շարժումներին: Հայաստանի հողի վրա սա առաջին շատ թեքիչ կազմակերպված վործերից են՝ դեմոկրատական տարբերին համախմբելու, ուսասական բռնակալության ճանկերից և առհասարակ ոտարի լծից հայ բազմաչարք աշխատավորությանը արյունով, գինով և պայքարի ճան պարհով ազատագրելու նպատակով: Իսկ այդպիսի նպատակն ինքնին արդեն, իր պատմական առումով, Հայաստանի այդ ժամանակվա գաղութային, կիսաաճորտական հարաբերությունների պայմաններում անպայմանորեն պրոգրեսիվ էր:

Լենինը, 1919 թ. հրատարակված «Sozialismus und Krieg» գրքում, անդրադառնալով նոր ժամանակների կռիվների պատմական տիպերին, հետևյալն է ասում.

«Մարդկային պատմության մեջ նոր եպոխան բացել է Ֆրանսիական մեծ հեղափոխությունը: Այդ ժա-

մանակից մինչև Փարիզի կոմունան, 1789—1871 թ. թ. կռիվները տրպերից մեկը յեղել և բուրժուական-պրոգրեսիվ, ազգային-ազատագրական բնույթի կռիվը: Այլ խոսքով, այդ կռիվների հիմնական բովանդակությունը և պատմական նշանակությունը յեղել և արտուտարիզմի ու ֆեոդալիզմի տապալումը, նրանց վիժեցումը, այլ ազգի ճնշման տապալումը: Այդ պատճառով էլ դրանք յեղել են պրոգրեսիվ կռիվներ, և բոլոր ազնիվ հեղափոխական գեմոկրատները, նույնպես և բոլոր սոցիալիստները այդ պիտի պատերազմի ժամանակ միշտ համակրորեն և վերաբերվել ֆեոդալիզմի, արտուտարիզմի ամենավտանգավոր հիմքերի և այլ ազգերի ժողովուրդների ճնշման վիժեցմանն ու տապալմանը\*:

Մի այլ տեղ Լենինը գրում է.

«Անկարելի չէ ըմբռնել ազգային-ազատագրական կռիվները, վորոնք առանձնապես տրպական և այդ ժամանակվա համար (Լենինը նկատի ունի 1789—1871 թ. թ. վ. Պ.), չհուսկանալով այդ եպոխայի ընդհանուր պայտխայի բոլոր կռիվները յեղել և ազգային-ազատագրական: Ի հարկե վնչ: Այդպես ասել՝ նշանակում է արտուտարիզմի համեմատ և ամեն մի առանձին կռիվը կոնկրետ ուսուսմասիրելու փոխարեն, առաջադրել ծիծաղելի շարուն»\*\*: Յեթե, որ ինակ, կռի իսկական եյությունը կայանում է այլ ազգի ճնշումը տապալելու մեջ (վորոն ասան ճնայես տրպական է 1789—1871 թ. թ. Յեվրոպայի համար), ապա ճնշվող պետության կամ ազգի այդ կռիվը պրոգրեսիվ է»\*\*\*:

Հայաստանն, ի հարկե, Յեվրոպա չէ, և ավելի քան ծի-

ծաղելի կլինեք լենինյան այս գնահատականը մեխանիկորեն փոխադրել Հայաստան: Բայց Յեվրոպայի ազգային-ազատագրական շարժումների տրպական համարվող այդ եպոխան չինական պարիսպներով չեք բաժանված ցարական արտուտարիզմի կողմից ստրկացված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումներից, և վորոշ ընդհանուր գծեր անպայտան կարելի չէ նշարել նրանց միջև: Լենինյան այս ըմբռնումից յեխելով, նրա լույսի տակ, մենք պետք է գնահատենք նաև մեր ազգային-ազատագրական շարժումները, վերհանենք այդ շարժման գեմոկրատական, պրոգրեսիվ կողմերը:

Արսեն Կրիտյանի խմբակի գործունեյությունն իր տենդենցով հենց այդպիսին էր և այդ տեսակետից էլ գրավում էր ցարական վոստիկանների ուշադրությունը: Այդ ամենի վրա 70-ական թվականներին ավելանում էր մի կարելիոր հանգամանք ևս — դա ուսութուրքական պատերազմի նախապատրաստությունն էր, նրա վերահաս վտանգը:

Ալեքսանդրապոլն իբրև նախապատրաստվող պատերազմի անմիջական թատերաբեմ, միշտ էլ յեղել է ցարական նվաճողականության ուշադրության կենտրոնում: Առանձնապես 1877-78 թ. թ. պատերազմի նախապատրաստության կապակցությամբ, ինչպես սահմանամերձ մյուս շրջաններում, այնպես էլ Ալեքսանդրապոլում ուսական զենքի ու դիրքի ամբացման ուղղությամբ մեծ աշխատանք էր տարվում: Նման պայմաններում, պարզ է, ցարիզմը չեք կարող առանձին ուշադրությամբ չվերաբերվել հակացարական ամեն մի շարժման, ուղղամակատի թիկունքը ներքին թշնամուց ապահովելու նպատակով:

Ի դեմս Կրիտյանի Ընկերության, ցարական կառավարությունն այդպիսի թշնամի մի ուժ, վորքան էլ նա փոքր լինեք, գտնում էր հենց ուղղամակատում: Այդ է պատճառը, վոր Յերևանի ժանդարմական վարչությունը, Ալեքսանդրապոլի զեպքերի մասին տեղեկություն ստանալուց անմի-

\* Ленин, Сочинения, том XVIII, стр. 193-4.

\*\* Ленин, Сочинения, том XIX, стр. 202.

\*\*\* Նույն տեղ, էջ 199.

Չապես հետո, շտապում ե Ալեքսանդրապոլ՝ հայտնաբերելու  
և պատժելու «պետական հանցագործներին»:

1875 թվի ապրիլի 8-ի № 39 խիստ գաղտնի մի գրու-  
թյամբ Յերեվանի ժանդարմական վարչության պետ Զոլո-  
տովսկին տեղեկացնում ե Շուրին կայսերական մեծության  
անձնական դիվանատան յերրորդ բաժանմունքին՝ Մեծ Դա-  
րաքիլիսայում յերիտասարդ հայերի կողմից «ՀԱՅՐԵՆԻՔԻ  
ՍԻՐՈ ԳՐԱՍԵՆՅԱԿ» հիմնադրելու և տեղում ձեռք բերած՝  
Համբարձում Բալասանյանցի (գրասենյակի հիմնադիր) Ալեք-  
սանդրապոլ՝ Արշակ Տեր-Ղաղարյանցին գրած նամակի մա-  
սին, միաժամանակ իրազեկ պահելով Թիֆլիսի գաղաստա-  
նական պալատի գաղասխազին: Նույն տարվա ապրիլի 30-ին  
Զոլոտովսկին Թիֆլիսի գաղաստանական պալատի գաղա-  
խազից սանկցիա յե ստանում քննություն կատարել հայտ-  
նաբերած գաղտնի ընկերության մասին: Մայիսի 9-ին Զո-  
լոտովսկին խուզարկում ե Համբարձում Բալասանյանցին և  
հայտնաբերում նրա յեղբոր՝ Ալեքսանդրապոլի հոգևոր  
դպրոցի աշակերտ Վաղարշակ Բալասանյանցի գրած նամակ-  
ները և հայրենասիրական վոտանավորներ, վոր նա գրել  
եր ուսուցիչ Հովսեփ վարդապետ Չալոյանցի խմբագրու-  
թյամբ\*:

Գտնելով գործի հետքերը Զոլոտովսկին մայիսի 10-ին  
խուզարկությունները փոխադրում ե Ալեքսանդրապոլ, վոր-  
տեղ և, ինչպես ինքն ե գրում, հայտնաբերում ե մասնավոր  
դպրոցի ուսուցիչ Արսեն Կրիտյանի հիմնադրած Բարենը-  
պատակ «գաղտնի» ընկերությունը\*\*:

\* Ալեքսանդրապոլի հոգևոր դպրոցի գործերում մեզ չհասնողվեց գտնել  
Չալոյան ազգանունով ուսուցիչ: Այդ դպրոցի նախկին սան Հովհաննես  
Տեր-Միրաքյանը մեզ հայտնեց, վոր ինքն ել չի հիշում նման ուսուցիչ:  
Անհավանական չե, վոր ժանդարմական որդանները Չալոյանին շփոթած  
լինեն նույն դպրոցի հայոց լեզվի գաղաստու Հովսեփ վարդապետ ֆի-  
նաչյանի հետ:

\*\* Պարսի «ԱՌԻՅԱ» հանդեսի 1875թ. նոյեմբերի գրքում տպված  
«Տխուր լուր կամ դավաճան վարդապետ» (տես հավելված) Ալեք-պոլից

«Փառքի թագ» կոչված ցուցակի համաձայն Զոլոտով-  
սկին խուզարկություններ ե կատարում նաև Ընկերության  
մյուս անդամների մոտ:

Ժանդարմական գործողություններն Ալեքսանդրապոլում  
խիստ ընույթ են ստանում և ահ ու սարսափ տաքածում  
բոլոր քաղաքացիների վրա: Ստեղծված գրությունը Արմաշի  
«ՀՈՒՅԱ» հանդեսում Ալեքսանդրապոլի թղթակիցը հետևյալ  
կերպ ե նկարագրում.—

«Մինչև այն ատիճան հասեր ե բռնությունը, վոր  
այն որևն ի վեր կառավարությունը ամեն հնար ի գործ  
դնել սկսած ե հայերը սարկացնելու: Տերության լրտես-  
ները անդադար կպտտին թե տուններու և թե կրպակ-  
ներու մեջ, և յեթե գրքեր գտնեն՝ կայրեն, նամնապես  
նամակներ և թղթեր: 40-ի չափ հայերու արգիլվիլը ե  
քաղաքեն ութ վարսախ հետու չեթիպ, և վոմանք բան-  
տարկվեր են և խուզարկությունը կշարունակե այնպի-  
սի հետաքրքրական կերպով, վոր մինչև անգամ տուններ  
կփլցուցնեն: Բոլոր ժողովուրդը խիստ մեծ յերկյուղով  
պաշարված ե և չկրնար ազգության վրա խոսել. հասա-  
րակության հավատարմությունը տերության առջև նշա-  
նա՞նություն չունի, և կառավարությունը անողոք կնայի  
յուր հպատակաց վրա»\*:

ստացված նամակի համաձայն, Կրիտյանին և ընկերությանն իբր թե  
մատնել և վոմն վարդապետ: Յեթե գատելու լինենք ըստ Զոլոտովսկու  
զեկուցազրերի, ապա Կրիտյանին մատնելու մասին խոտք անգամ լինել  
չի կարող, վորովհետև նա սկզբում Մեծ Դարաքիլիսա և գնացել և այն-  
տեղ ձեռք բերած նյութերի հիման վրա միայն իր խուզարկություն-  
ները փոխադրել Ալեքսանդրապոլ: Մոսկվայի Հեղափոխության արխի-  
վում մեզ հասնողվեց գտնել ալեքսանդրապոլի վարդապետ Տոնակա-  
նյանցի դիմումը՝ իրեն Նշմիլածնի կողմից բանտարկելու և հալածելու  
մասին: «ԱՌԻՅԱ»-ի հոդվածագրի նկարագրությունը դավաճան վարդա-  
պետի մասին վորոշ կեանքում հիշեցնում ե Տոնականյանցի դիմումի մեջ  
հիշատակված գեպքերը և թերևս այդ դավաճան վարդապետը հենց ինքը՝  
Տոնականյանցը յեղած լինի:

\* «Հուլիս», (Արմաշ-Նիկոմեախ), 1875 թ., հատոր VII:

Ընկերութեան մտտ կատարած խղճարկութիւնները ժամանակ Զօրտուխկին հայտնաբերում ե լրացուցիչ նշույթեր, ընկերութեան նպատակները ու գործունեութեան վերաբերյալ նոր տեղեկութիւններ: Ճիշտ ե, Զօրտուխկուն չի հաջողվում ամբողջութեամբ հայտնաբերել Բարենպատակ ընկերութեան անդամները գործունեութեանը: Կրիտիկանը ե ընկերները կարողանում են շատ բան թագցնել, յերբեմն խաբել ու շփոթութեան մեջ գցել ցարական ժանդարմներին, սակայն ձեռք բերված ապացույցները բավական են համարվում Կրիտիկանի ե ընկերութեան գործը վորակել իբրև «գաղտնի»\*, պետական հանցագործութիւն ե այդ իմաստով ել ընթացք տալ նրան:

Ալեքսանդրապոլում սա առաջին ժանդարմական գործն ե լինում, վորը մեզ հայտնի առաջին ժանդարմական գործն ե նաև Հայաստանում (մեր խոսքը իրոք գործի մասին ե ե վոչ թե միայն գաղտնի տեղեկութիւնները ու զեկուցագրերը, վորպիսիք ժանդարմական մարմինները միշտ ել գրել են «բարձրագույն» իշխանութեան):

Ժանդարմական գործն Ալեքսանդրապոլում սկսվում ե 1875 թ. ապրիլից ե տևում մինչև 1876 թ. հուլիս ամիսը:

\* Զօրտուխկու զեկուցագրերում ամենուրեք «գաղտնի» անվանվող ընկերութիւններն իրականում գաղտնի—անլեզալ չեն յեղել: Նրանք գաղտնի յեն անվանվում կառավարութիւնից պատշաճ թույլտվութիւն չունենալու համար: Հենց այն փաստը, վոր «ԿԱՆՏՈՐ ՀԱՅՐԵՆՅԱՅ ՍԻՐՈ» ընկերութեան հիմնադիր Բալասանյանցը Արշակ Տեր-Ղաղարյանցին գրած նամակում խնդրում ե Կանտորի հիմնադրութեան մասին գրել «Մշակ» լրագրում ե այն ել «սաստիկ ծաղկյալ վոճով» կամ այն, վոր հենց ինքը՝ Զօրտուխկին «ԲԱՐԵՆՊԱՏԱԿ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» մեծ տանքով ցուցանակ ե վեր բերել ընկերութեան սենյակի դռան վրայից, վերջապես այդ ընկերութեան մասին մամուլում տպագրված մի շարք նշույթերի առկայութեանը—գալիս են մեզ ասելու, վոր դրանք գաղտնի չեն յեղել: Թերևս Զօրտուխկին գաղտնի յե վորակել իբ ռեպրեսիաներն ավելի քան ուժեղացնելու նպատակով, ինչպես այդ անում եր, որինակ՝ փոխարքայի զեկանատան պետ բարոն Նիկողային՝ Թիֆլիսի համբարութիւններն անվանելով «գաղտնի» կազմակերպութիւններ:

Գործի քննութիւնը Զօրտուխկին սկսելով 1875 թ. ապրիլից, շարունակում ե մինչև ոգոստոս, վորից հետո ավարտելով քննութիւնը, գործն ուղարկում ե Թիֆլիսի դատաստանական պալատի դատախազին: Վերջինս Կոսկասի փոխարքայի հետ համաձայնութեան գալով՝ նպատակահարմար ե նկատում գործին դատական ընթացք չտալ, այլ լուծել հետևյալ կերպ.—

1. Արսեն Կրիտիկանցին պահել բանտում վեց ամիս ե այնուհետև յենթարկել վոստիկանական հսկողութեան յերկու տարի:

2. Համբարձում Բալասանյանին, Մելիք Չմշկյանին, Ալեքսանդր Աֆրիկյանին, Գեվորգ Ղասարյանին, Ռհանջան Գորոյանին, Կարապետ Ռհանջանյանին, Սենեքերիմ Լալայանին ե Հարութիւն Ռհանջանյանին անել խիստ ներշնչումն, վորպեսզի այսուհետև չհամարձակվեն առանց կառավարութեան թույլտվութեան հիմնելու վորևե ընկերութիւն, վոչ ել պատկանել այդպիսի ընկերութիւններին՝ որենքի առաջ պատասխանատու լինելով:

3. Գործի հետ կապված բոլոր մյուս անձերին ազատ համարել պատասխանատվութիւնից:

Փոխարքայի ե Թիֆլիսի դատաստանական պալատի դատախազի այս յեղրակացութեամբ գործն ուղարկվում ե Պետերբուրգ՝ արդարագատութեան մինիստրութեան քրեական զեպարտամենտին (չորրորդ սեղան): 1876 թ. փետրվարի 12-ին արդարագատութեան մինիստրութիւնը, 1871 թ. մայիսի 19-ի որենքի 25-րդ հոդվածի հիման վրա, գործն ուղարկում ե նորին կայսերական մեծութեան սեփական զեկանի յերրորդ բաժանմունքին՝ յեղրակացութեան: Յերրորդ բաժանմունքը գեներալ-ադյուտանտ Պոտոպովի ստորագրութեամբ պատասխանում ե, վոր համաձայն ե փոխարքայի ե դատախազի առաջադրած պայմանին, «բացառութեամբ միայն, վոր Արսեն Կրիտիկանցը, իբրև տեղում չափազանց վնասակար անձ, յեն թարկվի վոստիկանական հսկողութեան վոչ թե յերկու տարով, այլ առանց ժամանակի սահմանակի սահմանափակման»:

Յերբորդ բաժանմունքի կարծիքը դառնում է վերջնական և, ինչպես յերևում է արդարադատության մինիստրության 1876թ. մայիսի 22-ի և Զոլոտովսկու հուլիսի 1-ի հուլիսի մեկի գրություններից, «բարձրագույնը» հաստատում է յերբորդ բաժանմունքի վճիռը: Այդպիսով, Արսեն Կրիստյանը դատապարտվում է շուրջ մեկ և կես տարվա բանտարկության և վոստիկանական հսկողության՝ անսահմանափակ ժամանակով. անհամեմատ թեթև են պրծնում ընկերության մյուս անդամները:

Պատժի մեղմությունը (վորքանով այդ կարելի չե մեղմանվանել) ունեցել է իր առանձին պատճառները և ճիշտ չէր լինի միայն պատժաչափից յենկելով գնահատել Կրիստյանի ու ընկերության գործը, մի կողմ թողնելով նրանց բովանդակ հասարակական-քաղաքական-կուլտուրական գործունեությունը ու նպատակադրումները: Պատժի մեղմ լինելու հարցում, մեր կարծիքով, զգալի դեր են կատարել յերկու հանգամանք: Առաջինը՝ դա ցարական կառավարության տակտիկական քաղաքականությունից բխող՝ հայերին հալածելու հետ միաժամանակ նրանց ոգտագործելու հանգամանքն է:

Յարիզմը դաժանությամբ խեղդում էր հակապետական ամեն մի արտահայտություն, ազգային-ազատագրության ուղղությամբ սկսված վորևե խոսք ու գործ: Բայց դրանով հարցը չէր սպառվում. ցարիզմն իր նվաճողական քաղաքականության համար փորձում էր ոգտագործել մանր ազգություններին, առավելապես թյուրքիայի և Պարսկաստանի սահմանագլխում ընկած և հենց թյուրքիայի սահմաններում ապրող հայերին:

Տակտիկական այս մոտիվներով է ըստ յերևույթին առաջնորդվել նաև Կովկասի փոխարքան, շատ խիստ չպատժելով ալեքսանդրապոլցիներին: Ինչպես հայտնի չե, նա 1875թ. մայիսին, ռուս-թուրքական պատերազմի նախապատրաստություն կապակցություն Ալեքսանդրապոլն ուսումնասիրելու, գուցե և միաժամանակ Ալեքսանդրապոլի «գաղտնի» խմբակների գործունեությունը, ժողովրդի

տրամադրությանը մոտիկից ծանոթանալու նպատակով Ալեքսանդրապոլ յեկած ժամանակ ականատես է լինում Կրիստյանի և ընկերության հալածանքի հետևանքով առաջացած ժողովրդական դժգոհությանը, հուզումներին: Փոխարքայի, ինչպես և ցարական կառավարության համար այդ ըլրորովին ել ցանկալի չէր: Տվյալ մոմենտում ավելի քան անհրաժեշտ էր Ալեքսանդրապոլը նախապատրաստել պատերազմի համար, տեղացիների և առհասարակ հայերի ամբողջ ուշադրությունը ներքին ֆրոնտից փոխադրել արտաքին ֆրոնտ, դեպի թյուրքիա: Ալեքսանդրապոլում այդ առավելապես անհրաժեշտ էր, և հենց դրա համար էլ կառավարությունն առանձին հետաքրքրություն էր ցուցաբերում այդ տարիներին դեպի Ալեքսանդրապոլը, խլիում է նրա գլխին, հարկադրում ու հասկացնում, թե հակապետական գործով չե, վոր իրենք պետք է զբաղվեն, այլ իբրև «հավատարիմ հպատակներ» ծառայեն իր նվաճողական քաղաքականությանը:

Յերկրորդ՝ այն, վոր փոխարքան՝ նրա հետ և ժանդարմական որդանները, պարզապես չեն ցանկացել դիմազուրկ անել Եջմիածնի կաթողիկոսին, վորի իրավասություն տակ յեղած դպրոցի ուսուցիչներից ու աշակերտներից ևս գործի մեջ մեղադրվողներ կային: Յարական կառավարություն իր մերձարևելյան նվաճողական նպատակների համար, անցյալի փորձից յենկելով, դեռ վորոշ հույսեր կապում էր Եջմիածնի կաթողիկոսության հետ, նա դեռ այսպես թե այնպես հաշվի յեր նստում Եջմիածնի հետ, և այդ հանգամանքն է անհամար կողմից թեղադրել փոխարքային, պահանջվածի չափ մյուս կողմից թեղադրել փոխարքային, պահանջվածի չափ խիստ չլինել, Ալեքսանդրապոլի դեպքերի մասին հայտնելով կաթողիկոսին (տես հավելված VII) վստահել, վոր նորին սրբությունը կլրացնի պակասը, պատշաճ ձևով կհսկի ու կսահմանադրի, վորպեսզի հողևոր իշխանություն յենթակա հաստատություններում այլևս նման հակապետական, վնասարար աշխատանք չտարվի:

Հայտնաբերելով Ալեքսանդրապոլի հակապետական հանցագործներին, Կրիստյանի նման «ծայրահեղ վնասակար» դե-

կալարին, ցարական ուղղիչիկները դրանով իսկ կանխում էյին ազգային-ազատագրական շարժումից սպասվող վտանգը, միաժամանակ առհասարակ արգելելով նման տիպի ընկերություններ կազմելը, վոստիկանության հսկողության տակ առնելով նրանց ղեկավար ու գործունյա մարդկանց:

Չուր չէր ասել Նալբանդյանը, թե «յերկերը շատ անգամ բուսուցանում է դալար ծիւղեր, բայց և շատ անգամ հյուսիսի ցուրտը պահեցնում է նորանց արևագալից առաջ»\*:

60 տարի առաջ ճիշտ նույն բախտին են արժանանում Արսեն Կրիտյանը և իր ընկերները: Յարական Ռուսաստանում այդորինակ վախճան էր սպասվում ազատության բոլոր ձգտողներին: Դա տարրերինակ չէր, վերովհետև ցարական Ռուսաստանում ազատության ճանապարհը շատ վիշտ էր, ազատություն սխրողների համար ժողովուրդներ թափելու քանակը շատ նեղ էր:

### Յ Ե Չ Ր Ա Փ Ա Կ Ո Ի Մ

Ա. Կրիտյանի և ընկերության գործը ցարիզմի հետևեֆորմյան ազգային-գաղութային ճնշման եպոխտայում, Ալեքսանդրապոլի 60-70-ական թվականներին կոնկրետ իրադրություններում խմբվող ազգային-դեմոկրատական շարժման դրվագներից էր, վորն իրեն նպատակ էր դրել արյունոտ կռիվով ազատել հայ ժողովուրդը ցարիզմի և առհասարակ ոտար տիրապետողների լծից:

Բ. Ազգային լեզվի, դպրոցների ու կրթության հարցերում հակադրվելով ցարիզմի ուսիֆիկացման քաղաքականությանը, Կրիտյանը և ընկերությունը նպաստում էյին հայ լեզվի, դպրոցների ու կրթության դարգացմանը:

Գ. Ընկերության առանձին անդամները պայքարելով

\* Միքայել Նալբանդյանցի յերկերը, հ. I, էջ 416, 1906թ. Ռոստով (Դոնի վրա). Ընդգծումն իմն է. Վ. Պ.:

ազգային առևտրա-վաճխառուական կապիտալի, կղերականության շահագործման ու թալանի դեմ, առաջ են քաշել և պաշտպանել գյուղացիության ու քաղաքային դեմոկրատիայի իրավունքներն ու շահերը, նպաստել նրանց դասակարգային, քաղաքական գիտակցության բարձրացմանը:

Դ. Վերև նշված հիմնական այդ հարցերում Կրիտյանը և ընկերությունը կանգնելով ազգային-դեմոկրատական շարժման ճիշտ ճանապարհի վրա, գաղափարական-կազմակերպչական տեսակետից ամբողջությամբ վերցրած, դեռ չեն ներկայացնում վերջնականորեն ձևավորված, ավարտված մի ամբողջություն, և մեր ազգային-դեմոկրատական կազմակերպություններին հատուկ մանր-բուրժուական անհետևողականությունը, յերբեմն լիբերալ ու պահպանողական մտայնության հետքերը նկատելի յեն նաև այստեղ:

Ե. Իր բոլոր թերություններով ու անհետևողականությամբ հանդերձ, իր պատմական դերի ու հեռանկարի, ազգային ազատագրության հարցը հրահրելու, դեմոկրատական տարրերին արթնացնելու ու հետագա ազգային-դեմոկրատական շարժումը նախապատրաստելու տեսակետից Կրիտյանը և ընկերությունը կատարել են պրոգրեսիվ դեր, հետևաբար այդ մենք չենք կարող նետել ազգային-բուրժուական կամ պահպանողական հոսանքների դիրկը:

Զ. Լինելով առաջին ժանդարմական գործը Ալեքսանդրապոլում և մեզ հայանի առաջին ժանդարմական գործը նաև Հայաստանում, դա ծնունդ է ցարիզմի մեծապետական, ազգային-գաղութային քաղաքականության, կոնկրետ իլուստրացիա առհասարակ Մնդրկովկասի ժողովուրդների և մասնավորաբար հայերի ուսիֆիկացման:

Ահա սրանք են ուսուցիչ այն յեղրահանգումները, վորոնց մեզ հաջողվել է հասնել մանրակրկիտ մեր պրպտումների ընթացքում ձեռք բերված նյութերի հիման վրա:

Մեզ կարող են առարկել ընկերության գործունեյության կամ նրա այս ու այն անդամին տված մեր գնահատումների մեջ, այդ հնարավոր բան է, սակայն փակել աչքերը և

չտեսնել Կրիտյանի ու ընկերների մղած պայքարի ազգային-դեմոկրատական պրոգրեսիվ տենդենցը, մեր ազգային-ազատագրութեան նախապատրաստման ուղղութեամբ սխաժ նրանց դրական գործը, մի գործ, վորը, սակայն, ավարտվեց միմիայն պրոլետարական հեղափոխութեանից հետո, այդ նշանակում է չըմբռնել ազգային շարժումների յերկու տենդենցի մարքս—լենինյան կոնցեպցիան, հեռանալ բոլշևիկյան ազգային քաղաքականութեանից:

Առաջին ժանդարմական գործը Ալեքսանդրապոլում, պատմական-քաղաքական մեծ կարևորութեուն է ներկայացնում նաև այն տեսակետից, վոր մեր սոցիալիստական հայրենիքի, հատկապես պրոլետարական Լենինականի ու Շիրակի բարձրարեւձ դաշտերում ձեռք-ձեռքի, թիկունք-թիկունքի տված հայ, թուրք, ռուս և այլ ազգի աշխատավորները ծանոթանալով այդ գործին, մի անգամ ևս անեծքով ու նողկանքով պիտի հիշեն ազգային թշնամանքի ու հալածանքի անխժշակ անցյալը և ավելի քան խտացնեն իրենց շարքերը՝ միշտ դեպի վեր բարձրացնելով անդասակարգ սոցիալիստական հասարակարգի կառուցման, պրոլետարական ինտեր-նացիոնալիզմի անպարտելի գրոշը:

### З А К Л Ю Ч Е Н И Е

А. Дело Критяна и общества в эпоху пореформенного национально-колониального гнета царизма является одной из глав национально-демократического движения в конкретных условиях Александрополя 1860—70 г. г., движение, которое имело целью путем кровавой борьбы освободить армянский народ от ига царизма и чужих угнетателей.

Б. В вопросах национального языка, школ и образования противопоставляясь руссификаторской политике царизма, Критян и общество способствовали развитию армянского языка, школы и образования.

В. Отдельные члены общества ведя борьбу против эксплуатации и грабежа национального торговла-растовщического капитала и армянского духовенства, выдвигали и защищали права и интересы крестьянства и городской демократии, способствовали росту их классово-политического сознания.

Г. В вышеупомянутых основных вопросах Критян и общество, ставши на правильный путь национально-демократического движения, в общем и целом с идейно-организационной точки зрения еще не представляли собой окончательно оформленной и завершенной целостности и присущие нашим национально-демократическим организациям мелко-буржуазная непоследовательность, иногда следы либерального и консервативного ментализма заметны также и здесь.

Д. Со всеми своими недостатками и непоследовательностью Критян и общество все же с точки зрения их исторической роли и перспективы в отношении продвижения вопроса национального освобождения, пробуждения демократических элементов и подготовки последующего национально-освободительного движения сыграли прогрессивную роль, следовательно, все это мы не можем выбросить в объятия национально-буржуазного или консервативного движения.

Е. Будучи первым по времени жандармским делом в Александрополе, а также, насколько нам известно первым жандармским делом в Армении, оно одновременно является продуктом великодержавной национально-колониальной политики царизма, конкретной иллюстрацией руссификации вообще народов Закавказья и в частности армян.

З О Ч Ы Л Ч У Ъ  
П Р И Л О Ж Е Н И Е

Н а ч а л ь н и к  
Эриванского Губернского  
Жандармск. Управлен.

Совершенно секретно

8 апреля 1875 года.

№ 39

г. Эривань.

В III ОТДЕЛЕНИЕ СОБСТВЕН-  
НОЙ ЕГО ИМПЕРАТОРСКОГО  
ВЕЛИЧЕСТВА КАНЦЕЛЯРИИ.

Я слышал, что будто бы молодые армяне учредили контору под названием: контора любви отечества. Контора эта, как говорили, существует или в Александрополе или же в деревне Большой Караклис Александропольского уезда. Для открытия этой конторы я ездил в Александропольский уезд. В деревне Караклис мне представился случай приобрести письмо, которое писал переводчик Бамбакского мирового отдела Амбарцум Арутюнов Баласанянц к канцелярскому служителю Александропольского уездного управления, находящемуся в Караклисе за переводчика при помощнике уездного начальника Казарянц. Письмо в копии с переводом при сем прилагается.

О упоминаемых в письме Баласаньянца лицах мне передали так: Баласанянц, он же секретарь конторы, учился в Александропольском уездном училище, служил потом переводчиком у нашего агента в Карсе, откуда уволен за пьянство, потом служил в Александрополе при мировом судье князе Туманове, коим уволен за пьянство же, до настоящего же места служения он находился в Кульпах у откупщика Адамова. Багдасар Чарухчянц, Караклиссский житель, занимается

поделкою седел, человек не грамотный, но уважаемый в своем обществе. Александр Лазарянц занимается там же продажею соли и покупкою шерсти, брат его Микиртич Лазарянц занимается сапожным мастерством. Кеворк Хосровянц, садовник, Александропольский житель, живет в Ахалцыхе.

Донося о сем III отделению собственной его императорского величества канцелярии, имею честь доложить, что о вышеизложенном мною передано было местному окружному прокурору, который предложил сообщить о том прокурору Тифлисской судебной палаты с препровождением подлинного письма, что мною теперь же и сделано.

В городе Александрополе обращает еще на себя внимание, как я слышал в обществе, толкованием о Молодой Армении, учитель женского армянского пансиона Саркис Бек-Назарянц, окончивший курс в Цюрихской педагогической семинарии.

Первоначальное воспитание получил в армянской духовной семинарии в Тифлисе.

*Майор Золотовский*

I.

ՅԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱԿԱՆ

ԺԱՆԳԱՐՄԱԿԱՆ

Վ. Ա. Ր. Զ. Ո. Ի. Թ. Յ. Ա. Ն. Պ. Ե. Տ.

Տ ասպրիլի 1875 թ.

№ 39.

Ք. Յ Ե Բ Կ Կ Ն.

Խիս գաղտնի

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՍԵ-  
ՓԱԿԱՆ ԴԻՎԱՆԱՏԱՆ Յ-ՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ

Յեա լսել եմ, վոր իբր թե յերիտասարդ հայերը հիմնել են գրասենյակ «հայրենիքի սիրո գրասենյակ» անունով: Ինչպես ասում եյին, այդ գրասենյակը գոյութիւն ունի կամ

Ալեքսանդրապոլում և կամ Ալեքսանդրապոլի գավառի Մեծ Դարաքիլիսա գյուղում: Այդ գրասենյակը հայտնաբերելու համար յես զնացի Ալեքսանդրապոլի գավառը: Դարաքիլիսա գյուղում ինձ հաջողվեց ձեռք բերել մի նամակ, վոր գրել էր Փամբակի հաշտարար բաժնի թարգման Համբարձում Հարությունի Բալասանյանցը՝ Ալեքսանդրապոլի գավառական վարչության ղեկանական ծառայող Դադարյանցին, վորը գտնվում է Դարաքիլիսայում, իբրև թարգման, գավառապետի ոգնականի մոտ: Այսու կցվում է այդ նամակի պատճենը թարգմանութեամբ հանդերձ:\*

Բալասանյանցի նամակում հիշատակված անձերի մասին ինձ հաղորդեցին հետևյալը: Բալասանյանցը, վորն և քարտուղարն է այդ գրասենյակի, սովորել է Ալեքսանդրապոլի գավառական դպրոցում. հետո նա պաշտոնավարել է, վորպես թարգման, Դարսի մեր գործակալի մոտ և հարբեցողութեան պատճառով հեռացվել է. ապա ծառայել է Ալեքսանդրապոլում հաշտարար դատավոր Իշխան Թումանովի մոտ, վորի կողմից հեռացվել է հարբեցողութեան համար, իսկ այնուհետև մինչև ներկա պաշտոնը գտնվում էր Կողբում՝ կապալառու Ադամովի մոտ: Բաղդասար Զարուխյան, Դարաքիլիսայի բնակիչ, զբաղվում է թամբագործութեան արհեստով, անգրագետ, բայց իր հասարակութեան մեջ հարգանք վայելող: Ալեքսանդր Լադարյանց՝ զբաղվում է նույն տեղում աղի առևտրով և բրդի զնույններով. սրա յեղբայր Մկրտիչ Լադարյանցը զբաղվում է կոշիկակարութեամբ, Գեվորգ Խոսրովյանց՝ այգեպան, Ալեքսանդրապոլի բնակիչ, վերաբնակված է Ախալցխա:

Հաղորդելով այդ մասին նորին կայսերական մեծութեան սեփական ղեկանատանը, պատիվ ունեմ զեկուցելու, վոր վերոհիշյալի մասին իմ կողմից հայտնված է տեղական շրջա-

\* Մոսկվայի „Архив Революции и Внешн. Политики“ արխիվում, վորտեղ պահվում են նաև ստորև հրատարակվող ղեկումենտները, մեզ հաջողվեց գտնել Բալասանյանի նամակի հայերեն այդ պատճենը: Տես ղեկումենտ II. Վ. Պ.:

նային դատախազին, վորն առաջարկեց այդ մասին հաղորդել Թիֆլիսի դատաստանական պալատի դատախազին, հարակից ուղարկելով իսկական նամակը, վորն և իմ կողմից իսկույն կեթ կատարված է:

Այնքանդրապուլ քաղաքում, ինչպես յես լսել եմ հասարակության խոսակցությունների մեջ, յերևտասարդ Հայաստանի մասին իր մեկնաբանությամբ ուշադրություն և դարձնում իր վրա հայ իգական գիշերովի դպրոցի ուսուցիչ Սարգիս Բեկնազարյանը, վորն ավարտել է Յուզբիխի մանկավարժական սեմինարիան, իսկ սկզբնական ուսուցիչ ստացել է Թիֆլիսի հայոց հոգևոր դպրոցում:

ՄԱՅՈՐ ԶՈՒՆՏՈՎՍԿԻ

II.

Перевод

29 июня 1874 года,  
сел. Б. Караклис.

### ПОЧТЕННЫЙ ДРУГ ГОСПОДИН АРШАК ТЕР-ГАЗАРЯНЦ!

20 числа сего месяца прибыли сюда в сел. Б. Караклис, Бамбакского участка, Александропольского уезда несколько храбрых потомков армян; некоторые с целью службы, некоторые ради здорового климата сосредоточились же с общего согласия, с самопожертвованием—они сочли нужным назначить для себя одну комнату, которую называли „конторою любви отечества“, нежели даром гулять и быть упрекаемым другими. Определили в ту контору собираться три раза в неделю: в четверг, воскресенье и понедельник, утром с 9 до 12 часов, после полудня от 3 до 6 часов, для чтения разных газет и национальной истории. Одним словом, размышлять о делах всякого рода

полезных для нации, исключая дел правительственных, то что запрещено, чтобы нам с небольшим образованием оставить в этой деревне по себе плоды и бессмертную память. Лица эти жители г. Александрополя, хотя их числом много, но из них выбрано: управляющий конторою почтенный Кеворк Хосровянц, члены: Александр Лазарянц, Микиртич Лазарянц и Багдасар Чарухчянц и секретарем Амбарцум Баласанянц и проч. по порядку и по подобию других мест.

По этому почтенный патриот брат Аршак, покорнейше прошу не умолчать от себя или же эту самую отправить публиковать в газете „Мшак“ \* об основании сей конторы. Услышат о том дальние не знакомые наши ученые братья, которые тем много будут обрадованы.

Если кто пожелает лично явиться или же иметь письменные отношения с конторою, может о том объявить только почтенному управляющему конторою Кеворку Хосровянцу и заплатить три руб. в год на расходы для конторы.

Да еще прошу Вас, почтенный Аршак, попросить с своей стороны редактора газеты „Мшак“, чтобы он разукрасил статью и увещательным методом публиковал. Будьте здоровы. Извините спеша пишу. Остаюсь навсегда доброжелательный

Ваш Амбарцум Арутюнян Баласанянц.

Его благородию почтенному Аршаку Тер-Газарянцу, Б. Караклис, любезнейшему брату моему. Переводил коллежский секретарь Тер-Саркисянц.

\* Турецкая газета [sic! В. П.].

Ի 29 յունիսի 1874 ամի,  
ի գիւղն մեծ Ղարափիլիսս.

**ՅԱՐԳՈՅ ԲԱՐԵԿԱՄ**

**ՊԱՐՈՆ ԱՐՇԱԿ ՏԵՐ-ՂԱԶԱՐԵԱՆՅ**

Ամսոյս 20-ին մի քանի արիական հայազգի գաւա-  
կունք, ոմանք յաղագս ծառայութեան և ոմանք յաղագս  
երկար ժամանակեա օգափոխութեան եկեալ այսր 'ի գիւղն  
Մեծ Ղարաքիլիսս Փամբակաձորոյ Ալեքսանդրապօլու գա-  
ւառի, և դումարեալ գորով ի միասին անձնանուէր համահա-  
ձութեամբ լաւ համարեցին վասն իւրեանց կազմել մի սե-  
նեակ անուանադրեալ «Կանտոր հայրենեաց սիրոյ», քան թէ  
զբօանուլ ի դուր ի պարսաւանս այլոց: Վերոյեցին ի նոյն  
կանտորն հաւաքելոյ իւրաքանչիւրում շաբաթու երեք օր,  
այն է երկուշաբթի, հինգշաբթի և կիրակէից օրերն առա-  
վօտեան 9 ժամից 12-ն կէս օրէի և կէս օրէի 3 ժամից  
ցճ-ն երեկոյի յաղագս զանազան լրագիրս կարգալոյ, նմա-  
նապէս ազգային պատմութիւնս և միով բանիւ ամենատե-  
սակ ազգօգուտ գործոց վերայ մտածելու, բացի տէրութեանց  
գործոց, որն որ արգելուած է. այնպէս որ չիցէ իւրեանց  
հայութեան նախկին սէրն այս գիւղումն ուսմիւրէն 'ի մո-  
ռացութեան ենթարկին, այլ ունիցին զարգասիս անմահ  
յիշատակութեան: Իւրեանց մասնաւոր ուսումնականու-  
թեամբ որք են Ալեքսանդրապօլ քաղաքացիք և թէպէտ  
թուով շատ, բայց ի մերոյ նոցա ընտրեալ անձիքն այսօրիք  
են անուանի. կառավարիչ կանտորի պարոն Գէորգն Խոս-  
րովեանց, անդամք՝ Ալեքսանդրն Լազարեանց, Մկրտիչն Լա-  
զարեանց և Բաղդասարն Չարխչեանց, ատենադպիր Համբար-  
ձումն Բալասանեանց և այլն ըստ կարգի և ըստ նմանու-  
թեան այլ տեղեանց: Վասն որոյ հայրենասէր եղբայր պա-  
րոն Արշակ, խոնարհաբար խնդրեմ զանց չառնել յինքնէ  
կամ զայնն առաքելով հրատարակելով ի մէջ Մշակ լրագրի

այս կանտորի հիմնադրութեան մասին. զի լուեալ անձանօթ և  
հեռաւոր հայ ազգի ուսումնական եղբայրք մեր ուրախ լի-  
ցին քան զչափն աւելի և թէ ոք ցանկայ անձամբ անձին  
ներկայանալ կամ գրաւոր հաղորդակցութիւն ունենալ ընդ  
կանտորիս (կողմանէ) կարող է, միայն պարտ է յայտնել  
նամակաւ պարոն կառավարիչ Գէորգ Խոսրովեանցին և վը-  
ճարել ի ծախսարարութեան կանտորի տարեկան 3 ուրբի:  
Այլևս պարոն Արշակ, խնդրեմ Ձեր կողմից խնդրել պարոն  
խմբագրողին Մշակ լրագրի զի հրատարակեսցէ սաստիկ  
ծաղկեալ և յորդոր ոճով: Ողջ լեբուք և ներեցէք վրազ  
նամակիս:

Որ և մնամ միշտ բարեացակամ  
Ձեր Համբարձում Յարութիւնեան Բալասանեանց:

Ան բարեձնունդ պարոն Արակ Տէր-Ղազարեանց,  
ի գ. Մեծ Ղարափիլիսս, ամենասիրելի եղբայր իմ:

III.

Секретно.

Н а ч а л ь н и к  
Эриванского Губернского  
Жандармск. Управлен.  
14 мая 1875 года  
№ 69  
г. Эривань  
г. Александрополь.

В III ОТДЕЛЕНИЕ СОБСТВЕН-  
НОЙ ЕГО ИМПЕРАТОРСКОГО  
ВЕЛИЧЕСТВА КАНЦЕЛЯРИИ.

Я имел честь докладывать III отделению собствен-  
ной его императорского величества канцелярии, что  
прокурор Тифлисской судебной палаты от 30 апреля  
за № 52 предложил мне произвести дознание об ос-

новании противозаконного общества под названием „Контора любви к отечеству“. Контора эта учреждена армянами в сел. Караклис, Александропольского уезда. При обыске 9 мая помещения основателя означенной конторы Баласаянца найдены стихи патриотического характера „к армянам“, написанные братом Баласаянца, который учится в Александропольском духовном училище, и стихи эти пишутся учениками под редакцией учителя архимандрита Иосифа Чалоянца, через что я дальнейшие розыски 10 мая перенес в Александрополь, где напал на другое тайное общество под названием „Общество с благою целью“. При обыске основателя общества учителя частной школы Арсена Критянца найдены воззвания к армянам, копию с одного при сем представляю. Общество это имело особое помещение для библиотеки, в которое собирались, по воскресеньям, члены общества для чтения книг и газет. Имена членов общества вписаны в особую книгу под названием „Корона славы“. В комнате, где собирались члены общества, мною при обыске снята вывеска, на которой написано большими армянскими буквами „Общество с благою целью“ и правила общества. Основатель общества Арсен Критянец мною, по соглашению с прокурором палаты, арестован. По отобраении показаний от Критянца, он сознавал хорошо виновность свою и ту важность документов, отображенных у него при обыске,—сознался в писании оскорбительных слов против правительства, что им и прибавлено по данному мне им показанию. В настоящее время я занимаюсь обысками и опросом членов общества, имена которых, как я выше доложил, записаны в книге „Корона славы“. О действиях своих я сообщаю телеграммами или почтою прокурору Па-

латы Тифлисской. О чем имею честь доложить III отделению собственной его императорского величества канцелярии.

Майор (подпись).

III.

ՅԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱԿԱՆ  
ԺԱՆԳԱՐԱԿԱՆ

Գ ա ղ ս ն Ի

Վ Ա Ր Ձ Ո Ւ Թ Յ Ա Ն Պ Ե Տ

14 մայիսի 1875 թ.

№ 69

ք. Յ Ե Ր Է Ա Ն

ք. Ալեքսանդրապոլ.

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅԱՆ ԱՆՁ-  
ՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱՏԱՆ Յ-ՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆԻՔԻՆ

Յես պատիվ ունեցա ղեկուցելու նորին կայսերական մեծության անձնական ղիվանատան Յ-րդ բաժանմունքին, վոր Թէֆլիսի գատաստանական պալատի գատախազը ս. Թ. ապրիլի 30-ի № 52 դրուժյամբ ինձ առաջարկեց քննություն կատարել «Հայրենիքի սիրո գրասենյակ» անունով ապորինի ընկերություն կազմելու մասին: Այդ գրասենյակը հիմնել են Ալեքսանդրապոլի գալառի Ղարաքիլիսա գյուղի հայերը: Խուզարկության ժամանակ, մայիսի 9-ին, հիշյալ գրասենյակի հիմնադիր Բալասանյանցի գրասենյակում գտնվել են ազգասիրական ընույթի վոտանավորներ՝ «հայերին» խորագրով, վոր գրել է Բալասանյանցի յեղբայրը, Ալեքսանդրապոլի հոգևոր դպրոցում սովորող, այդ վոտանավորները գրում են աշակերտները՝ ուսուցիչ Հովսեփ վարդապետ Չալոյանցի խմբագրությամբ: Դրանից հետո յես հետագա հետախուզումները մայիսի 10-ին փոխադրեցի Ալեքսանդրապոլ, ուր հայտնաբերեցի մի այլ գաղտնի ընկերություն՝ «Բարենպատակ ընկերություն» անունով: Այդ ընկերության հիմնադրի՝ մասնավոր դպրոցի ուսուցիչ Արսեն Կրիտյանցի մոտ խուզար-

կելիս գտանք հայերին ուղղված կոչեր, վորոնցից մեկի պատ-  
ճենն ընդ սմին ներկայացնում եմ:

Այդ ընկերությունն ուներ անանձին շինք՝ գրադարանի  
համար, ուր կիրակի որերը ընկերության անդամները հա-  
վաքվում էյին գրքեր ու լրագրեր կարդալու համար: Ընկե-  
րության անդամների անունները գրված են հատուկ մի գրքի  
մեջ, վոր կրում է «Փառքի թագ» խորագիրը: Այն սենյակում,  
ուր հավաքվում էյին ընկերության անդամները, յես վայր  
վերցրի մի ցուցանակ, վորի վրա հայերեն մեծ տառերով  
գրված էր «Բարենպատակ ընկերություն» և ընկերության  
կանոնադրությունը: Ընկերության հիմնադիր Արսեն Կրի-  
տյանցն իմ կողմից, Թիֆլիսի դատաստանական պարտի դա-  
տախաղի համաձայնությամբ, ձերբակալված է: Կրիտյանցն  
իր տված ցուցմունքներում խոստովանեց իր մեղավորու-  
թյունն և իր մոտ խուզարկությամբ գրավված փաստա-  
թղթերի լուրջ նշանակությունը, խոստովանեց կառավարու-  
թյան դեմ իր գրած վիրավորական խոսքերի մեջ, վոր և  
ավելացված են իր՝ ինձ տված ցուցմունքներում: Ներկայումս  
յես զբաղված եմ ընկերության անդամների խուզարկումնե-  
րով ու հարցաքննումներով, վորոնց անունները, ինչպես յես  
վերը զեկուցեցի, գրված են «Փառքի թագ» գրքի մեջ: Իմ  
գործողությունների մասին հաղորդում եմ հեռագրերով կամ  
փոստով՝ Թիֆլիսի դատաստանական պարտի դատախաղին,  
վորի մասին պատիվ ունեմ զեկուցելու նորին կայսերական  
մեծության անձնական գրվանատան 3-րդ բաժանմունքին:

Մայր (ստորագրություն)

IV.

Перевод

## СОЧИНЕНИЕ

Арсеника В. Критьянца, относящегося до Об-  
щества с благою целью, 1-го августа 1869 года,  
г. Александрополь.

Отдыхай, моя Армения,  
Ты есть колыбель моих детей.

Вот мои любезные гении, несчастная Армения, за-  
бытая, с старою печалью, горем, со слезами взывает к  
вам армянам. Любезные потомки, разве достаточно  
при свете жить слепым? Разве достаточно?!... Темные  
ночи и густые облака пусть не обладают вами.

Мои любезные! Если осиротевшее наше отечество  
Армения не забыла своею любовью своих потомков  
и ныне с распростертыми руками готова принимать  
в свои объятия истинных армян и патриотов, так кто  
мы после того такие? Неужели мы не армяне, неуже-  
ли мы не потомки армян, неужели в жилах наших не  
кипит патриотическая национальная кровь, кровью  
которою только возможно спасти нацию от лукавых  
и коварных русских, бешенных татар и ненавистных  
персиян?

И так, к чему нам лениться, милые товарищи!  
Разве мы не потомки воинственного Гайка и храбро-  
воинственного Арама? Разве мы не потомки из храб-  
рых войск Тиграна? Не медлите, армяне, вступить в  
центр Армении, где будем наслаждаться и любить ар-  
мян и нацию. Да здравствует Общество мое и мои то-  
варищи!

Арсеник В. Критьянци

Переводил коллежский секретарь Тер-Саркисянци

## Շ Ա Ր Ա Դ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Առսենիկ վ. Կրիսյանցի՝ Բարենպատակ ընկերության վերաբերյալ, ոգոսոսի 1-ին 1869 թ., ֆ. Ալեքսանդրապոլ.

Հանգիստ, իմ Հայաստան,  
Դու վորրանն ես իմ դավակների:

Ահա, իմ սիրելի հանձարներ, դժբախտ Հայաստանը, մոռացված, տիրությամբ ու ցավով լեցուն, կոչ ես անում ձեզ՝ հայերիդ: Սիրելի տոհմակիցներ, մի՞թե կարելի չե բավարար լույսին ապրել իբրև կույր: Մի՞թե կարելի չե (բազմակիստեր): Խավար գիշերներն ու թանձր ամպերը թող չտիրեն ձեզ:

Իմ սիրելիք, յեթե վորբացած մեր հայրենիք Հայաստանը չի մոռացել իր սիրով իր սերունդներին և այժմ լայնատարած բազումներով պատրաստ ե իր գիրկն անելու ճշմարիտ հայերին ու հայրենասերներին, ապա ո՞վ ենք մենք այսուհետև: Մի՞թե մենք հայեր չենք, մի՞թե մենք հայերի սերունդ չենք, մի՞թե մեր յերակներում չի յետում հայրենասիրական ազգային արյունը, արյուն, վորով միայն կարելի չե փրկել ազգը խորամանկ ու խարդախ ուռսներից, կատաղի թուրքերից ու ատելի պարսիկներից:

Ապա ուրեմն ինչո՞ւ մենք, սիրելի ընկերներ, պետք ե ծուրանանք, մի՞թե մենք քաջարի Հայկի ու հզոր Արամի սերունդը չենք, մի՞թե մենք Տիգրանի քաջ զորքերից չենք: Մի հապաղեք, հայեր, դիմելու Հայաստանի կենտրոնը, ուր մենք յերջանիկ կլինենք և կտիրենք հայերին ու ազգը: Կեցցե՛ իմ Ընկերությունը և իմ ընկերները:

Առսենիկ վ. Կրիսյանց.

Доложено его величеству 5/17 июня 1875 г.

Александропольского уезда Эриванской губернии, в селении Караклис обнаружено тайное общество, под названием „Контора любви к отечеству“. Общество это основано армянами с целью поднять в своих единоверцах патриотический дух и добиваться независимости. При обыске у основателя этого общества Баласаянца найдены стихи „к армянам“, выражающие вышеприведенные мысли, и дознано, что стихи эти писаны братом Баласаянца, учеником Александропольского духовного училища и что подобного рода стихи составляются под редакцией учителя означенного училища архимандрита Иосифа Чалоянца.

В самом Александропле существует другое тайное общество, под названием „Общество с благою целью“, у основателя которого армянина Арсеника Критьянца найдены воззвания к армянам, приглашающие их вспомнить воинственный дух своих предков и спасти своею кровью Армению от лукавых и коварных русских, бешенных татар и ненавистных персиян. Образовавшееся в Александропле общество имело особое помещение для библиотеки, в которое члены общества, имена коих вписаны в особую книгу под названием „Корона славы“, собирались, по воскресеньям, для чтения книг и газет; в библиотеке находилась вывеска, на которой большими армянскими буквами написано: „Общество с благою целью, и правила общества. Основатель общества Критьянц (арестован) сознался в своей вине и в том, что он писал сочинения, оскорбительные для правительства.

В настоящее время производятся дознания и обыски у членов означенных обществ и допросы их по обстоятельствам дела.

30 мая 1875 г.

V.

Ձեկուցված է նորին մեծուքյանը 5/17 հունիսի 1875 թ.

Յերեվանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի Ղարաքիլիսա գյուղում հայտնաբերված է «Հայրենիքի սիրո գրասենյակ» անունով գաղտնի ընկերութիւն: Այդ ընկերութիւնը հիմնել են հայերը, նպատակ ունենալով իրենց հավատակիցները մեջ բարձրացնել հայրենասիրական վոգի ու ձեռք բերել անկախութիւն: Այդ ընկերութիւնի հիմնադիր Բալասանյանցի մոտ կատարված խուզարկումով գտնվել են վոտանավորներ՝ «հայերին» վերնագրված, ուր արտահայտվում են այդ գաղափարները և հաստատված է, վոր այդ վոտանավորները գրել է Բալասանյանցի յեղրայրը, Ալեքսանդրապոլի հոգևոր դպրոցի աշակերտ, և վոր այդպիսի վոտանավորներ հորինվում են նշված դպրոցի ուսուցիչ Հովսեփ վարդապետ Չալոյանցի խմբագրութիւնը:

Ալեքսանդրապոլում գոյութիւն ունի մի այլ գաղտնի ընկերութիւն՝ «Բարենպատակ ընկերութիւն» անունով, վորը հիմնադիր հայ Արսենիկ Կրիտյանցի մոտ հայտնաբերվել են հայերին ուղղված կոչեր, վորոնք հրավիրում են վերհիշել իրենց նախորդների քաջարի վոգին և իրենց արյունով ազատել Հայաստանը խորամանկ ու խարդախ ուսմաներից, կատաղի թուրքերից ու ասելի պարսիկներից: Ալեքսանդրապոլում կազմակերպված ընկերութիւնն ունի իր առանձին շէնքը, գրադարանի համար, ուր ընկերութիւնի անդամները, վորոնց անունները գրված են «Փառքի թագ» խորագրով հատուկ մատյանի մեջ, հավաքվում էին կիրակի օրերը՝ լքբագրներ ու գրքեր կարդալու համար, գրադարանում գտնը-

վում էր ցուցանակ, վորը վրա հայերեն խոշոր տառերով գրված է «Բարենպատակ ընկերութիւն» և ընկերութիւնի կանոնները:

Ընկերութիւնի հիմնադիր Կրիտյանցը (ձեռքակալված է) խոստովանեց իր հանցանքում և նրանում, վոր ինքը գրում էր կառավարութիւնի հասցեյին վիրավորական շարագրութիւններ:

Ներկայումս կատարվում են քննութիւններ և խուզարկումներ հիշյալ ընկերութիւնների անդամների մոտ և գործի հանգամանքների համեմատ հարցաքննումներ:

30 մայիսի 1875 թ.

VI.

Начальник  
Эриванск. губерnsk.  
Жандармского Управл.

25 августа 1875 года

№ 127

г. Эривань.

C. Секретно

В III ОТДЕЛЕНИЕ СОБСТВЕННОЙ ЕГО ИМПЕРАТОРСКОГО ВЕЛИЧЕСТВА КАНЦЕЛЯРИИ.

В дополнение донесения моего, от прошлого 8 мая за № 39, имею честь доложить III отделению собственной его императорского величества канцелярии, что дознание о тайном обществе, основанном учителем частной школы Арсеном Критьянцем в г. Александрополе, мною окончено и препровождено сего числа к прокурору Тифлисской судебной палаты.

Дознанием обнаружено, что тайное это общество имело особое название „Общество с благою целью“.

Общество это имело особые правила, коими определено было число членов общества, порядок выбора вообще членов общества и членов-распорядителей — в какие дни, часы, должны были собираться члены общества для обсуждения мер к улучшению положения армянской нации. Общество имело особую вывеску, которая была прибита над дверьми той комнаты, в которой собирались члены общества. Общество имело особую книгу под названием „Корона славы“, в которую вписывались имена членов общества с обозначением количества пожертвованных ими денег. При обыске членов общества найдены книги, привезенные из Турции без дозволения нашей цензуры; в книгах этих много говорится против русского правительства и русского народа. В числе книг найдена книга напечатанная в типографии Эчмиадзинского монастыря „Записки епископа Ухтанеса“. Книга эта мною была представлена в Шотландии 28 февраля 1872 года за № 38, потому что в книге этой много против грекороссийской церкви и то, чтобы армяне не женились на русских. Найдены при обыске стихи, сочиненные учениками Александропольской духовной семинарии на темы, которые задавались учителем семинарии архимандритом Чалоянцем. Стихи были писаны к армянам, которые призываются к восстановлению армянской нации и первобытного самостоятельного ее положения; обнаружено и то, что членами общества в церквях к народу читались речи; 4 мая настоящего года читалась речь Критьянцем над умершим членом общества. Речь эта была полна грусти и сожаления о потере одного из разумных членов общества, другая речь говорилась в сел. Кульп, Сурмалинского уезда, жителем

г. Александрополя Гайказун. Речь эта была, как показал Гайказун, духовного содержания и читалась с дозволением местного священника. В частном же разговоре мне передали, что Гайказун речью своею вызвал народ к пожертвованию на восстановление Армении. Народ был в восторге от речи. Так и Гайказун пишет своему товарищу, в Александрополь, что речь его произвела в народе восторг. Армянами здесь собираются деньги под разными предложениями — на училища, на издание разных армянских сочинений. Как, например, Эриванский торговец Гуламирянц для нации своей сочинил трагедию о армянском императоре Сенеке-рима Васпуракане. На напечатании этой трагедии Гуламирянц об'явлениями своими при письмах, к разным лицам, просит пособия. Такое же письмо было послано и к учителю Критьянцу, которого Гуламиров просит, как истого патриота, способствовать в сборе денег на издание упомянутой трагедии. В об'явлении Гуламирянца слова: армянского императора Сенеке-рима Васпуракана напечатаны большим шрифтом. Печаталось это с дозволением местного полицмейстера армянина в Эривани. В Эриванской губернии с прошлого года открыты, кроме Эчмиадзинской типографии, еще три. Одну открыл в Эчмиадзинском монастыре архимандрит Бастамов, года три тому принявший сан монашеский. Бастамов кончил курс в Петербургском университете, человек свободной мысли, не любящий русских и смело критикующий действия русского правительства. За оскорбление служащего русского чиновника, в этом году, уже был приговорен к четырехмесячному заключению. Решение это крайне опечалило армян. Архимандрит Бастамов издает на армянском языке журнал „Школа“. Кроме этого журнала, как мне передали, он в своей типографии ниче-

го не печатает. Журнал „Школу“ можно было бы напечатать и в Эчмиадзинской типографии. Открытие Бастамовым типрграфии многих удивляет, еще более потому, что она в стенах Эчмиадзинского монастыря, где есть типография. Другую типографию открыл Эриванский житель в г. Эривани, где, сколько я заметил, печатаются одни лишь бланки для местных присутственных мест. В Александрополе, в типографии то же самое печатается с добавлениями объявлений от торговцев, а этим доходом трудно содержать типографию. За типографиями этими со стороны полиции следует иметь надзор, в особенности за находящимися в стенах Эчмиадзинского монастыря и надзор этот нельзя доверять безусловно Эчмиадзинскому уездному начальнику Ханагову. Человек этот в высшей степени двуличный и весьма преданный армянам и Эчмиадзинскому монастырю. Мнение свое о надзоре за типографиями я лично передавал начальнику губернии.

Майор Золотовский

VI.

ՅԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱԿԱՆ  
ԺԱՆԴԱՐՄԱԿԱՆ  
Վ. Ա. Ր. ՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ  
25 ոգոստոսի 1875 թ.  
№ 127  
ք. Յ Ե ր և ա ն.

Խ. Պ ա ղ ս ճ ի

ԼՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅԱՆ ԱՆՁ-  
ՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱՏԱՆ Յ-ՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ

Ի լրումն անցյալ մայիսի 8-ի № 39 իմ հաղորդա-  
գրութեան, պատիվ ունիմ զեկուցելու նորին կայսերական  
մեծութեան անձնական զիվանատան Յ-րդ բաժանմունքին,  
վոր Ալեքսանդրապոլում մասնավոր դպրոցի ուսուցիչ Արսեն

Կրիտյանցի հիմնած գաղտնի ընկերութեան վերաբերյալ քըն-  
նությունն արդեն պարտել եմ և սույն ամսին ուղարկված  
ե թիֆլիսի դատաստանական պալատի դատախազին:

Քննությունից պարզվել է, վոր այդ գաղտնի ընկերու-  
թյունը կրում էր հատուկ անուն — «Բարենպատակ ընկերու-  
թյուն»: Այդ ընկերությունն ուներ հատուկ կանոններ, վո-  
րով վորոշված էր ընկերութեան անդամների թիվը, ընդհան-  
րապես ընկերութեան անդամների և առանձնապես տնորեն  
անդամների ընտրութեան կարգը, վորոշված էր, թե վճի որե-  
րին ու ժամերին պետք է հավաքվեն ընկերութեան ան-  
դամները՝ խորհրդակցելու համար հայ ազգի դրութեան բա-  
րելավման միջոցների մասին:

Ընկերությունն ուներ իր հատուկ ցուցանակը, վոր ամ-  
րացված էր այն սենյակի դռան վերը, ուր հավաքվում էին  
ընկերութեան անդամները: Ընկերությունն ուներ հատուկ  
մատյան՝ «Փառքի թագ» անունով, ուր գրվում էին ընկե-  
րութեան անդամների անունները, նշելով նրանց նվիրած դը-  
րամների քանակը: Ընկերութեան անդամների մոտ կատար-  
ված խուզարկումներով հայտնաբերվել են թյուրքիայից բեր-  
ված առանց մեր գրաքննութեան թուլյալութեան գրքեր.  
այդ գրքերում շատ է խոսվում ուսուսական կառավարու-  
թյան և ուսու ժողովրդի դեմ:

Այդ գրքերի թվում գտնված է Եջմիածնի վանքի տպա-  
բանում տպագրված «Ուխտանես յեպիսկոպոսի գրություն-  
ները» անունով գիրքը: Այդ գիրքն իմ կողմից կնքվելով՝  
ուղարկված է 1875 թ. փետրվարի 28-ի № 38 գրութեամբ  
նորին կայսերական մեծութեան անձնական զիվանատան Յ-րդ  
բաժանմունքին\*, վորովհետև այդ գրքի մեջ յես գտել եմ  
արտահայտություններ հունարուսական յեկեղեցու դեմ և  
այն մասին, վոր հայերը չամուսնանան ուսուների հետ: Ուս-  
ղարկութեան ժամանակ հայտնաբերվել են Ալեքսանդրապոլի

\* Այդ գիրքը Կրիտյանի գործի հետ մինչև այժմ էլ պահվում է  
Մոսկվայի Հեղափոխութեան արխիվում:

հոգեվոր դպրոցի աշակերտների հորինած վոտանավորները, վորոնք շարագրվում էյին նույն դպրոցի ուսուցիչ վարդապետ Ջալոյանի առաջարկած թեմաներով: Վոտանավորներն ուղղված են հայերին, կոչ անելով վերականգնելու հայ ազգը և նրա նախկին անկախ դրությունը: Պարզված է նաև, վոր ընկերության անդամները յեկեղեցիներում ճառեր էյին ասում ժողովրդին: Ներկա տարվա մայիսի 4-ին Կրիտյանցը ճառ եր արտասանել ընկերության վախճանված անդամի վրա: Այդ ճառը լի յեր տխրությամբ ու ցավակցությամբ ընկերության խելացի անդամներից մեկի կորուստի վերաբերմամբ: Մյուս ճառն արտասանվել է Սուրմալուի գավառի Կողբ գյուղում, Ալեքսանդրապոլի բնակիչ Հայկազունու կողմից: Այդ ճառը, ինչպես ցուցմունք տվեց Հայկազունին, հոգեվոր բովանդակություն է ունեցել և արտասանվել է տեղական քահանայի թուլյությամբ: Մասնավոր խոսակցության մեջ ինձ տեղեկացրին, վոր Հայկազունին իր ճառով կոչ է արել ժողովրդին նվիրաբերություն անել Հայաստանի վերականգման համար: Ժողովուրդը հիացած է յեղել այդ ճառից: Այդպես ել Հայկազունին գրում է իր ընկերոջը, Ալեքսանդրապոլ, վոր իր ճառը վողբվորել է ժողովրդին: Հայերն այստեղ գրամ են ժողովում զանազան պատրվակներով—դպրոցի, հայերեն զանազան գրքեր հրատարակելու համար: Ինչպես որինակ՝ Յերևանի վաճառական Գուլամիրյանն իր ազգի համար շարագրել է վողբերգություն՝ հայ թագավոր Սենեքերիմ վասպուրականցու մասին: Այդ վողբերգությունը տպագրելու համար Գուլամիրյանն իր հայտարարություններով կցված զանազան անձերին հղած նամակներին, խնդրում է ոժանդակություն: Այդպիսի մի նամակ ուղարկված է յեղել նաև ուսուցիչ Կրիտյանցին, վորին Գուլամիրյանցը խնդրում է, իրրև իսկական հայրենասերի, աջակցել գրամի ժողովարարությանը՝ հիշյալ վողբերգությունը տպագրելու համար: Գուլամիրյանցի հայտարարության մեջ «Վասպուրականի հայ թագավոր Սենեքերիմ» բառերը տպված են խոշոր տառերով: Այդ հայտարարությունը տպագրված է

Յերևանի վոստիկանապետի թուլյությամբ, վորը հայ է: Յերևանի նահանգում, բացի Եջմիածնի վանքի տպարանից, անցյալ տարվանից բացված են նաև յերեք տպարաններ: Մեկը բացել է Եջմիածնի վանքում վարդապետ Բաստամյանը, վորն յերեք տարի առաջ ընդունել է վարդապետական կոչում: Բաստամյանն ավարտել է Պետերբուրգի համալսարանը, սղատ մտածողության տեր է, չի սիրում ուսանելին և համարձակ քննադատում է ուսուցիչական գործողությունները: Մի ուսուցիչ աստիճանավորի այս տարի վիրավորելու համար արդեն դատապարտվել է չորս ամսվա բանտարկության: Այդ դատավճիռը չափազանց տխրեցրել էր հայերին: Վարդապետ Բաստամյանը հրատարակում է հայերեն լեզվով «Իպրոց» ամսագիրը: Բացի այդ ամսագրից, ինչպես ինձ հաղորդեցին, նա իր տպարանում վոչինչ չի տպագրում: «Իպրոց» ամսագիրը կարելի յե հրատարակել նաև Եջմիածնի տպարանում: Տպարանի բացումը Բաստամյանի կողմից շատերին զարմացնում է. ևս առավել զարմացնում է այն պատճառով, վոր նա գտնվում է Եջմիածնի վանքի պատերում, ուր արդեն տպարան գոյություն ունի: Մի այլ տպարան Յերևանում բացել է Յերևանի մի բնակիչ, այդ տպարանում, վորքան յես նկատել եմ, տպագրվում են միմիայն բլանկներ տեղական վարչական հիմնարկներին համար: Ալեքսանդրաներ ուսուցիչն էլ կա մի տպարան, ուր տպագրվում է նույնը և, բացի այդ, տեղական առևտրականների հայտարարությունները, իսկ այդ յեկամուսներով գծվար է տպարան պահել: Այդ տպարանների վրա անհրաժեշտ է խիստ հսկողություն ունենալ տեղական վոստիկանության կողմից, մասնավորապես Եջմիածնի վանքի պատերում գտնվող տպարանների նկատմամբ և այդ հսկողությունն անպայմանորեն չի կարելի վրաստահել Եջմիածնի գավառապետ Խանաղովին: Այդ մարդը վերին աստիճանի յերկրի մի յե և չափազանց նվիրված է հայերին ու Եջմիածնի վանքին: Իմ կարծիքը տպարանների հսկողության մասին անձամբ հայտնել եմ նահանգապետին: ՄԱՅՈՐ ԶՈՒՈՏՈՎՄԻ

31 դեկտեմբերի 1875 թ.  
№ 12818, ԹԻՓԼԽ.

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՊԵՏԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՓՈՈՍԱՐԻՔԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ\*

ՉԵՐԴ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ

Թիֆլիսի դատաստանական պալատի պրոկուրորը անցյալ նոյեմբերի 12-ին ներկայացրել է մեծ իշխան փոխարքային այն քննությունը, վոր կատարել է Յերևանի նահանգային ժանդարմական վարչության պետը՝ Ալեքսանդրապոլ քաղաքի մասնավոր դպրոցի ուսուցիչ Աբսեն Կրխոյանցի և մյուսների մասին, վորոնք մեղադրվում են պետական հանցանքի մեջ:

Նկատելով Դատաստանական պալատի պրոկուրորի յեզրափակումից, վորի գեկուցման քաղվածքը սրա հետ ուղարկվում է, թե քննությամբ բացահայտված հանգամանքները ցույց են տալիս հնարավորությունը վնասակար դատավանությամբ նորին կայսերական բարձրության փոխարքայի, պարտ եմ համարում հայտնել այս մասին ձեր սրբության պարտ ու պատշաճ անորինություն անելու համար, վորպեսզի ապագայում կասեցվեն այսպիսի յերևույթները, ավելացնելով, վոր Կրխոյանցի և մյուսների գործին տրված է ա-

\* Այս գեկուցադիրը Կովկասի փոխարքայությունից գրել են Գեվորգ IV կաթողիկոսին: Այս միակ հրատարակված փաստաթուղթն է գործի վերաբերյալ, վոր Լեոն գտնելով Գեվորգ IV-ի արխիվում, հրատարակել է 1932 թ. «Նոր Ուղի» հանդեսում:

Գեվորգ IV-ի արխիվում մեզ չհաջողվեց գտնել այս փաստաթղթի բնագիրը: հարկադրված արտասույում ենք «Նոր Ուղի»-ում նկատելի ազավազումներով և անհարթ թարգմանությամբ հրատարակվածից, անելով ու պահպանելով մի քանի ծանոթագրություններ:

ռաջ տանելու ընթացք, այն կարգով, վոր սահմանված է 1874 թ. դեկտեմբերի 17-ի բարձրագույն հրամանով»:

Ահա և քաղվածքը.

Ներկա տարվա ապրիլ ամսին Յերևանի նահանգային ժանդարմական վարչության պետն ստացավ տեղեկություն, թե յերիտասարդ հայերը հիմնել են Ալեքսանդրապոլ քաղաքում կամ Ղարաքիլիսա գյուղում գրասենյակ, վորի անունն է «հայրենասիրության գրասենյակ» («КОМТОРА ЛЮБВИ К ОТЕЧЕСТВУ»): Ի միջի այլ տեղեկությունների, վորոնք հավաքված են սկզբում ծածուկ կերպով, այս առարկայի վերաբերմամբ ձեռք է բերվել մի նամակ, վոր 1874 թ. հունվերի 29-ին՝ գրել է Փամբակի հաշտարար բաժնի թարգման շամբարձում Հարությունյան Բալասանյանը Ալեքսանդրապոլի քաղաքային վարչության գրագիր Ղազարյանցին: Այս նամակի մեջ Բալասանյանցը կամ Բալասանյանցը հայտնում է, թե հունիսի 20-ին Ղարաքիլիսա գյուղը յեկան մի քանի հայեր, վորոնք համաձայնություն հայտնեցին հարկելու մի ժողովարան «հայրենասիրության գրասենյակ» անունով, ընտրեցին դրա համար մի սենյակ, վորոշեցին հավաքվել շաբաթը յերեք անգամ, առավոտը և յերեկոյան կարդալու համար լրագրեր և ազգային պատմություն և քննելու համար ազգոգուտ գործեր և այս գրասենյակի կառավարիչ ընտրեցին Գեվորգ Խոսրովյանցին. անդամներ՝ Առավարիչ ընտրեցին Գեվորգ Խոսրովյանցին և Բաղդալեքսանդր Լազարյանցին, Մկրտիչ Լազարյանցին և Բաղդասար Չարախչյանցին և քարտուղար՝ Համբարձում Բալասանյանցին. Ի վերջո Բալասանյանցը խնդրում է հայտարարել այս մասին թուրքական (sic) «Մշակ» լրագրում և ավելացնել, վոր այս գրասենյակի ծախսերի համար պետք է ուղարկել տարեկան յերեք ուրբի:

Սա հետևումն այս բանի 1871 թ. մայիսի 19-ին և 1872 թ. հուլիսի 7-ին բարձրագույն հրամանների հիման վրա ձեռնարկից այս տեսակ գործերի համար սահմանված հարց ու փորձի կատարման:

«Վերոհիշյալ անձանց մոտ խուզարկութիւնները միջոցին գտնվել են. — Համբարձում Հարութիւնյան Բալասանյանցի մոտ՝ նրա յեղբայր Վաղարշակի յերկու համակները, վորոնց կցված են վոտանավորներ հայերեն լեզվով և Վաղարշակ Բալասանյանցի մոտ՝ իր իսկ վոտանավորները և հետևյալ գրքերը. «Հայաստանի պատմութիւն» և «Ուսման պարտք»<sup>2</sup>: վորոնք տպված են Կ. Պոլսում: Բանից դուրս յեկավ, վոր «Հայաստանի պատմութիւն» գիրքը պատկանում է հայոց հոգևոր սեփնարիայի աշակերտ Ալեքսանդր Բանյանցին, վոր գնել է այն 1 ու. 60 կոպեկով ուսուցիչ Արսեն Կրիտյանցից: Արսեն Կրիտյանցի մոտ, նրա տանը կատարած խուզարկութիւն միջոցին գտնված են արտասանմանում տպված հայերեն գրքեր, զանազան թղթեր և լրագրեր՝ հայոց թագավոր Հայկի պատկերը, պատին կպցրած ցուցանակ՝ մակագրութեամբ «Ը նկերութիւն բարի նպատակով» («Общество с благоцелью»), մի գիրք «Փառքի թագ» անունով և ընկերութեան անդամների ցուցակով և ընկերութեան կանոնների մի քանի որինակ:

«Խուզարկութեան ժամանակ, բացի դրանից, գտնվեց արտասանմանում տպված մի գիրք՝ «Հայրենասերների պարտք»<sup>3</sup>, Ոհան Ղամբարյանի մոտ և յերեք համար հայերեն լրագրի «Փունջ» («Букет»), «Հայրենիք» («Отечество») և «Մամուլ» («Тиски»), Պետրոս Հայկազունու մոտ: Խուզարկութիւնների միջոցին գտնված այս թղթերից է միջի այլոց յերևում է.

1. Կրիտյանցի մոտ գտնված ընկերութեան կանոններից. ա) վոր ընկերութեան բարի նպատակն է ոգնել հայ բ) ընկերութեան անդամները թվով 50-ից ավելի չպիտի լինեն, նրանք պիտի լինեն յերիտասարդներից, գիտակիցներից, վորոնք պիտի աշխատեն լավ որինակ դառնալ ժողովրդի համար.

գ) դրամական վճարը բազկացած է 3 կոպեկից շաբաթը.

դ) ընկերութեան յուրաքանչյուր անդամ պարտավոր է սրբութեամբ և քաջութեամբ կատարել այն պարտավորութիւնը, վոր ընկերութիւնը կը դնէ նրա վրա. սրանից կարող են ազատվել նրանք, վորոնք կարևոր պատճառներ կունենան դրա համար և այդ պատճառանքը հայտնի կը լինեն ընկերութեան, իսկ նրանք, վորոնք չեն կատարի այն պարտավորութիւնները, առաջին անգամ կենթարկվին հանդիմանութեան, յերկրորդ անգամ՝ տուգանման, իսկ յերրորդ անգամ՝ արտաքսման:

«Այս կանոնադրութեան ուրիշ հոգվածներում գրված են անդամների ընտրութեան, փող մտցնելու և գրքեր կարգալու համար ժողովներ կազմելու կանոնները:

2. Կրիտյանցի մոտ գտնված ընկերութեան անդամների ցուցակից յերևում է, վոր նրա մեջ մտցված է 43 մարդ, վորոնք յենթարկվեցին հարց ու փորձի, ինչպես կպատմվի ստորև:

3. Կրիտյանցի մոտ գտնված թղթերից յերևում է.

ա) ընկերներին ուղղած նրա գրութիւններից, թե բարենպատակ ընկերութիւնը հիմնվում է նրա համար, վոր հնարավորութիւն տա հայերին միանալ և անցյալի փառքի հիշողութիւնները վերականգնելու միջոցով դիմադրութիւն ցույց տալ ուսման ընկերութեան.

բ) Կրիտյանցի մոտ գտնված այն քաղվածքները, վորոնք արված են 1866 թ. Կ. Պոլսում տպված Հայոց պատմութիւնից<sup>4</sup>, վոր ուսմանը նկատելով հայերի ընդունակութիւնը, խորամանկութեան միջոցով անկարագնում են այս ազգը, նրանք ընծաների և խրախուսանքների միջոցով հարկազրուում են լավագույն հայերին մոռանալ իրենց ազգային պարտավորութիւնները և ծառայել ազգին խորթ նպատակներին. սակայն լավում է, վոր այժմ մարդիկ են յերևում հոգևոր կոչումից հայրենասիրական զգացմունքներով և վոր

ուսանների զգվելի և ատելի միջոցների դեմ գործադրվում են կատաղություն և դժգոհություն.

դ) Կրիտյանցի մի նամակից, վոր ուղղված է մի անհայտ յեպիսկոպոսի, յերևում է, վոր սա տեղեկացնում է նորին սրբազնությանը Բարենպատակ ընկերության հաջողությունները մասին.

դ) 1875 թ. ապրիլին Կրիտյանցին փոստով Յերևանից ուղարկած բաժանորդաթերթից յերևում է, վոր նրանով հավաքված է [փող] Ղարաքիլիսայում 1872 թ. հիմնված գրքադարանի համար և թե փողը պահվում է Տեր Արսեն քահանայի մոտ:

4. Բալասանյանցի մոտ գտնված վոտանավորներից, վոր գրել է Վաղարշակ Բալասանյանցը, յերևում է, վոր նրանց մեջ յերգվում է հայ ազգի անցյալ փառքը և կոչ է արվում հայ ժողովրդին, վոր յետ մղե ազգի թշնամիներին:

5. Այս գործին մասնակից արած դանազան մարդկանց մոտ կատարած խուզարկությունների ժամանակ գրաված գրքերից յերևում է, վոր Փափազյանի հորինած «Դասագիրք ազգային պատմության», Մխաթյանի «Հայրենասերների ցանկություններ»<sup>5</sup>, «Քնար Հայաստանի», «Դասագիրք հայոց պատմության», «Ծաղկանոց» ձեռագրերը, ձեռագիր ըստ ցանկի № 43 պարունակում են իրենց մեջ այնպիսի մտքերի արտահայտություն, վորոնք ուղղված են Ռուսաստանի դեմ ատելություն գրգռելու կողմը և ցենզուրական կառավարության ասելով՝ չեն կարող թույլատրվել:

Հարց ու փորձի ժամանակ ցուցմունքներ տվին. — Արսենիկ Վարոսյան Կրիտյանց, 24 տարեկան, ուսուցիչ մասնավոր դպրոցի Ալեքսանդրապոլում և տեսուչ Ալեքսանդրապոլի գավառական դպրոցի<sup>6</sup>, ամուսնացած է, բայց յերեխաներ չունի. դպրոցին կից կա նրան պատկանյալ գրադարան, վորտեղից նա ծախում է դասագրքեր. Հայաստանի պատմությունը նա աշակերտներին չի ծախել, իսկ ձեռք է բերել այն աշակերտների համար Հաջիպապ Աթաբեկից, այս բերակարում նա իր ընկերներ Նալյանցի և ուրիշների հետ,

